ՈՐՏՍ ՀԱՅՐԱՍՏԻ

Թիվ 2 (16), նոյեմբեր - դեկտեմբեր, 2008թ.



ՄԵՆՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆՔ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐ
ԵՆՔ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԻ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ ՉԷ ՈՉԻՆՉ՝ ԲԱՑԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ»:

Հովհաննես Թումանյան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներկայիս ճգնաժամային իրավիճակները և դրանք հաղթահարելու ուղիները	էջ 1-6	
Հայ-ադրբեջանական սահմանը	էջ 7-11	Արա Պապյան
Թուրքիայի ռազմական օգնությունը Ադրբեջանին	էջ 12	Հայկ Դեմոյան
«Նեմեսիսի» նվիրյալներից՝ Գրիգոր Մերջանով	էջ 13	Հակոբ Մանջյան
Հանցագործության համար պատասխանատվության կանչելու ուղիների և եղանակների մասին	էջ 14-15	Յուրի Բարսեղով
Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման միտումները 21-րդ դարում	էջ 16-17	Հենզել Մանուչարյան
Հայերի ցեղասպանությունը միջազգային իրավունքի ենթատեքստում	էջ 18-20	Վիգեն Քոչարյան
Проблема признания Геноцида армян	էջ 21	Քրիստինե Պետրոսյան
Конвенция о неприменимости срока давности к военным преступлениям и преступлениям против человечества	էջ22	
Декларация Организации Объединенных Наций о правах коренных народов	էջ 23	
Նորահայտ գերմանական աղբյուրները	էջ 24-25	Ստեփան Ստեփանյան
Թուրք բժիշկները Մեծ եղեռնի ժամանակ	էջ 26-29	Հայկ Գաբրիելյան
Ինքնության արմատների փնտրտուքը պատմության մեջ	էջ 30-31	Ռուբինա Փիրումյան
Ականատես վերապրողների վկայությունները. արաբ վկաներ	էջ 32-34	Վերժինե Սվազլյան
Հայկական հարցի առաջին պաշտպաններից՝ ժան ժորես	էջ 34-35	Գրիգոր Ջանիկյան
Արտագրես	էջ36	Հովիկ Մկրտչյան
Շապիկի լուսանկարը՝ Հարություն Ստեփանյանի		

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է պագրության՝ 15.12.2008

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue: Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: **oukhtararadi@yahoo.com**
www.oukhtararati.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

ՆԵՐԿԱՅԻՍ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

«Դարասկզբին անպատրաստ գտնվեցինք **դեպքերի իմաստը** հասկանալու, նրանք մեր ձգտումներին համընթաց դարձնելուն, անզոր եղանք ուղղություն տալու և դեպքերը զարգացան բոլորովին հակառակ մեր տրամադրություններին՝ **արտաքին իրողությունների թելադրմամբ**»:

Գարեգին Նժդեհ

Աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների տրամաբանությունը, նախօրոք ծրագրավորված դեպքերի ընթացքը ու դրանց փուլային զարգացումները, ըստ միջազգային լրահոսի, ասում են ամեն ինչ, ասում են «բաց» տեքստով: Այսուհետ ոք չի կարող արդարանալ, թե չէր տիրապետում տեղեկատվությանը, իբր թե այդ ամենը անակընկալ էր: Հիմա դյուրին է այդ ամենը հաշվարկել, երբ հայտնի է հիմնականը՝ արևմտյան բուն ծրագիրը, և այն քայլերը, որոնց միջոցով փորձում են իրականացնել դա:

Վերջին երկու տարիներին անդրադարձել ենք 1985-ից համաշխարհային ծավալում ստացած գործընթացների իրական նպատակներին, ծրագրերի փուլային զարգացումներին, ուստի, հարկ չհամարելով խորանալ անցյալում ասվածի վրա, ներկայացնում ենք աշխարհին ու տարածաշրջանին ուղղված մարտահրավերները և ՀՀ-ին առնչվող ենթածրագրերը, որպեսզի ընդհանուրի մեջ կարողանանք գտնել հայության ու հայկական երկու պետությունների անելիքներն առաջիկայում:

20-րդ դար... 21-րդ դա՞ր...

1. Համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերների հեռանկարը.

- ՆԱՏՕ-ն հավասարեցրել են ՄԱԿ-ին: Հենց այսպես է վերնագրված լրատվությունը, ըստ որի, 2008թ. սեպտեմբերի 23-ին Նյու Յորքում գաղտնի համաձայնագիր է կնքվել ՄԱԿ-ի և ՆԱՏՕ-ի ղեկավարների՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունի և ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յոոպ Սխեֆֆերի միջև: Այդ համաձայնագրով ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ՆԱՏՕ-ին իրավունք է վերապահում խաղարար գործողություններ իրականացնել աշխարհում: «ՄԱԿ - ՆԱՏՕ համագործակցություն» անվանումը ստացած համաձայնագրի տեքստում ասված է, որ ՆԱՏՕ-ն կարող է առաջնորդվել ՄԱԿ-ի ինչ-ինչ որոշումներով: Հայտնի է, սակայն, որ այդպիսի լիազորություններ չի նախատեսված ՄԱԿ-ի կանոնադրությամբ, կամ նորմերով ու սկզբունքներով, առավել ևս՝ որևէ ռազմա-քաղաքական կառույցի: Պարզվում է՝ այդ մասին տեղյակ չեն եղել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մյուս անդամները: ՆԱՏՕ-ում Ռուսաստանի ներկայացուցիչ Դմիտրի Ռագոզինը առաջարկել է հետաքննություն անցկացնել կատարված փաստի առնչությամբ՝ նշելով, որ փաստի հաստատման դեպքում կառաջանա Պան Գի Մունի հրաժարականի խնդիրը: Ռագոզինի կարծիքով բոլոր այս գործողությունները կամայական են և սահմանագծվում են հանցագործության փաստին[1]:

Սա հիշեցնում է 2008-ի հունվարին ԱՄՆ նախագահի թեկնածու հանրապետական սենատոր Մաք Քեյնի առաջարկը, ըստ որի, պետք է ՄԱԿ-ը փոխարինել «Դեմոկրատական լիգա» կոչվող կառույցով և նրան հանձնարարել ժողովրդավարություն տարածել աշխարհում: Թե ինչ հանցագործ ձևերով է տարածվելու ժողովրդավարությունն աշխարհում, բոլորս ենք տեսել նախկին Հարավսլավիայի, Իրաքի, Աֆղանստանի օրինակով: Միգուցե սա ՄԱԿ-ը հետագայում «Դեմոկրատական լիգայով» փոխարինելու առաջի՞ն քայլն է: Իրականում, սակայն, սրանով բացահայտվում է «Վերազգային - վերպետական կապիտալի ստվերային կաբինետի»[2] արդեն մեկ հարյուրամյակից ավելի համառորեն հետապնդած, Չերչիլի խոսքերով ասած՝ անգլո-սաքսոնների կողմից աշխարհին տիրելու[3] արևմտյան՝ մոլագար ծրագրի ավարտական փուլը:

- Արևմուտքը շտապում է: ԱՄՆ-ի արհեստածին տնտեսական ճգնաժամը մտել է մի փուլ, երբ շրջադարձ և ապաքինում չի լինելու, հակառակ դեպքում, կստացվի այնպես, ինչպես եղավ 1929-ի արհեստածին ճգնաժամից հետո, երբ Ռուզվելտը մի քանի տարում երկիրը վերածեց նորմալ կենսառիթմ ունեցող տերության: Մինչդեռ նոր պայմաններում չեն ուզում թույլ տալ, որ ԱՄՆ-ը իր կենսառիթմը վերագտնի իր տարածքի սահմաններում անգամ: Ուստի, ճգնաժամը շարունակելու են խորացնել և երկիրը ներփակել նախ իր սահմաններում, ապա անցում կատարել Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ նոր ընդհանուր պետություն կազմելու գործընթացին, որտեղ մյուս նահանգներն են լինելու Կանադան ու Մեքսիկան: Նախատեսված է նաև այդ նոր երկրի դրամական միավորը՝ Ամերիան:

Աշխարհում հայտնի ԱՄՆ զինուժի հին ու նոր բազաներում ծրագրում են տեղակայել ՆԱՏՕ-ի ուժեր: Սակայն, այստեղ խնդիր կա, և բավականին լուրջ, ԱՄՆ-ի ափամերձ ամերիկյան բազաների հարցում, եթե բոլոր հեռավոր բազաներից հենց միայն ֆինանսական պատճառներով ԱՄՆ-ը ստիպված լինի դուրս գալ, ապա ԱՄՆ-ին ափամերձ օվկիանոսային բազաներից ոչ միայն դուրս գալ չի ցանկանա, այլև ամեն ինչ կանի դրանք պահելու համար, այդ թվում՝ Իսլանդիայի, Կուբայի… Ինչ վերաբերում է Կարիբյան ծովի ավազանում գտնվող կղզիներին, ապա այստեղ շատ են նաև եվրոպական մի շարք երկրների ենթակայության կղզիները, որոնք հանգիստ կարող են տրամադրվել նորացված ՆԱՏՕ-ին:

Ինչ վերաբերում է Նոր Միջին Արևելքի ռազմական բազաներին և անհրաժեշտ հսկողության կետերին, ապա խնդիրը հեշտ է հասկանալ, եթե հաշվի առնենք, որ այնտեղ առաջնային նշանակություն ունի, ինչպես իրենք են ասում, ԱՄՆ-ի ամենամոտ բարեկամի՝ Իսրայելի անվտանգության շահերը: Ուստի, ամենևին տարօրինակ չէ, որ վերջին երկու տարիներին Կարմիր ծովի մուտքը հսկող Սոմալիի ափամերձ տարածքներում վերակենդանացած դինոզավրերի տարբերակով ի հայտ եկան, այսպես կոչված, ծովահենները: Հասկանալի է, որ սա արհեստականորեն խթանված գործընթաց է, որի բուն նպատակն է՝ չեզոք ջրեր մտցնել ՆԱՏՕ-ի ռազմա-ծովային ուժեր և հսկողության տակ առնել Իսրայելի երկու խոցելի ուղղություններից մեկը՝ Կարմիր ծովը: Սրանով է բացատրելի ծովահենների նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ԵՄ-ի ռազմա-ծովային բազաների տեղադրումը այս տարածքներում: Սակայն ԵՄ-ն դեռևս վերջնականապես ձևավորված չէ, ուստի, ժամանակավոր այդ դերը հանձնվեց նաև Ռուսաստանին, որի համար պետք է, որ այս անգամ ծովահենները ռազմական տեխնիկայով բեռնված նավ զավթեին, այն էլ շատ հետաքրքիր անձնակազմով. հրամանատարը՝ ռուս, անձնակազմը՝ ուկրաինացիներ: Մեկ նշանառությամբ երկու նապաստակ

խփելու տարբերակ: Առաջինը ապահովում է Ռուսաստանի ի հայտ գալը, երկրորդը լուծում է Ուկրաինայի նախագահին քաղաքական դաշտից հեռացնելու խնդիրը, որը ռազմական տեխնիկա է վաճառում ոչ միայն Վրաստանին, այլև Սուդանին, այսինքն՝ Յուշչենկոն այլևս հարմար թեկնածու չէ նաև ԵՄ-ի համար:

- Նորացվող ՆԱՏՕ-ի հիմնական բազաները ըստ Ռալֆ Պիտերսի բացահայտման. Կոնգո, Կոսովո, Կովկաս: Զինվորների կազմը:

Կոնգո: 2008-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Կոնգոյում՝ Աֆրիկայում, խաղաղապահ ուժեր տեղակայելու պատրվակ ստեղծելու համար, արդեն իսկ հրահրվել են ազգամիջյան բախումներ, հումանիտար ճգնաժամ: Բռնագաղթի ենթարկված բնակչության թիվը անցնում է 250 հազարը: ՄԱԿ-ի 17 հազարանոց խաղաղապահ կորպուսը հակամարտությանը միջամտելու և բռնագաղթն ու կոտորածը կանխելու մանդատ չունի: Վիճակի առավել վատթարացումը կհանգեցնի նրան, որ եվրոպական կամ ՆԱՏՕ-ի ուժերը հնարավորություն կունենան երկարաժամետ տեղակայվել այս տարածաշրջանում: Երկարաժամկետ, որովհետև, ինչպես մնացած դեպքերում, այստեղ ևս հակամարտությունը կսառեցվի:

Կոսովո: Նորացվող ՆԱՏՕ-ի ռազմակայաններից մեկն էլ Կոսովոն է՝ Եվրոպայում: Յուրաքանչյուր քաղաքագետի համար ակնհայտ է, որ եվրոպական ազգերի մեջ ագրեսիվ պատերազմ մղելու համար զինվորներ դժվար է ճարվելու: Ուստի, դյուրին է ենթադրել, թե նորացվող ՆԱՏՕ-ն չի կարող լայնամասշտաբ պատերազմական գործողություններ մղելու ծրագրեր մշակել: Սակայն, Մուհամեդի ծաղրանկարների ու ֆիլմերի հետ կապված վերջին տարիների եվրոքաշքշուկը ուսումնասիրելիս, կարելի է բացահայտել նախապատրաստվող բուն ծրագիրը: Այն է, Կոսովոյում, ալբանական-թուրքականին զուգահեռ, կուտակել եվրոպական երկրներում մեծ ծավալների հասած աֆրիկյան և ասիական իսլամական տարրերին, որոնց ընտանիքները, ըստ էության, կապահովեն Կոսովո ռազմակայանի ենթակառուցվածքը, իսկ տղամարդիկ կհամալրեն Եվրոպայի Միացյալ Նահանգների զինուժի շարքերը:

Հասկանալի է, որ խոսքը միլիոնների մասին է: Ենթադրում են, թե ծրագիրը կհաջողվի, որովհետև այդ տարրը ուրիշ ապրուստի միջոց չի ունենա, քան բանակում ծառայելը: Ստացվում է, խնդիրը դրված է, մնում է իրականացնել: ՆԱՏՕ-ի բանակը առաջիկայում հրահրվող աշխարհամարտում վաղուց արդեն Եվրոպայում է և ի զորու է զսպել եվրոպական երկրների հնարավոր ընդվզումները:

Գրոհայիններին, ըստ իրենց կրոնական պատկանելիության, այնպես կտեղաբաշխեն, որ հակառակ դիրքերում կլինեն մյուս կողմում գտնվող ազգերի ու կրոնական համայնքների նկատմամբ: Նման հարուստ փորձ ունի ամերիկյան բանակը: Արցախյան պատերազմում նույնպես փորձեցին ներքաշել աֆղան, արաբ վահաբական, չեչեն, թուրք գրոհայիններ: Այստեղ այդ քաղաքականությունը հաջողություն չունեցավ, քանզի մեր պատերազմին ոչ մի կերպ հնարավոր չեղավ կրոնական բնույթ տալ, իսկ թուրք սպայակազմը չկարողացավ ադրբեջանցի զինվորին ոգևորել պատերազմելու:

Կովկաս: 2008-ի ապրիլի 8-ին հայտնի դարձավ, որ ԵՄ-ը 11 միլիոն եվրոյի օժանդակություն է տրամադրում Վրաստանում և Ադրբեջանում գտնվող չեչեն փախստականներին: Պետք է ենթադրել, որ այս կերպ անցկացվում է չեչեն գրոհայինների հավաքագրում: Չի բացառվում, որ հավաքագրվեն չեչեն գրոհայիններ նաև այլ երկրներից: Դրված խնդիրը ակնհայտ է, Հարավային Կովկասում ծրագրվում է Արևմուտքի կողմից հրահրվող ռազմական գործողություններ Աբխազիայի, Օսեթիայի և ԼՂՀ-ի նկատմամբ (սրա մասին մեր մտահոգությունները հայտնել էինք դեռ 2008-ի ապրիլին, հետագա դեպքերը ցույց տվեցին, որ մեր վերլուծությունն ու կանխատեսումները հիմնականում ճիշտ էին):

Արևմուտքը լավ գիտի, որ վրացի և ադրբեջանցի զինվորները այդքան էլ ոգևորված չեն պատերազմելու, ուստի, որպես փորձառու զինվորների, ձգտելու են ներգրավել չեչեն և այլ ազգությունների գրոհայիններ (առավել ևս, որ նրանց պատրաստելու նպատակով նոր ծախսեր անելու կարիք չի լինի): Հարց է ծագում՝ հանուն ինչի՞ են գնում այս տեսակ հանցագործության, երբ շատ լավ գիտեն, որ հակամարտություններում վարձկանների օգտագործումը միջազգային օրենսդրությամբ արգելված է և ենթակա է պատասխանատվության: Գուցե հույս ունեն, որ Հաագայի դատարանը աննկատ կթողնի այդ իրողությունը, ինչպես ժամանակին շատ ուրիշներ: Կարծում ենք, պատահական չէ, որ Եվրոմիության չեչենական նախածեռնությունից առաջ ԱՄՆ-ն իր հերթին որոշեց զենք ու զինամթերք ուղարկել Կոսովո. ասել է թե՝ «թեժ» կետի կրակը փորձում են հանգցնել բենզինով»:

- Իրավունքի՞, թե՞ ուժի ճանապարհով կընթանա նոր Ռուսաստանը, ցույց կտա մոտակա ժամանակը... 2008-ի օգոստոսի 8-ից հետո աշխարհում իրոք նոր իրադրություն ստեղծվեց, և եթե դրա հրահրողը Արևմուտքն էր, ով փորձում էր Վրաստանի միջոցով Կոսովոյի անօրինական ռազմա-քաղաքական գիծը շարունակել ու խորացնել, ապա հեղինակը Ռուսաստանն էր, որ աշխարհում տիրող շուրջ 20-ամյա դադարից հետո առաջինը խոսեց ոչ թե ուժի, այլ իրավունքի լեզվով: Միջազգային իրավունքը արգելափակեց քաղաքական, ասել է թե կամային լուծում ակնկալող գործընթացը: Շատերը չնկատեցին, մեծ մասն էլ չցանկացավ նկատել այս անչափ կարևոր շեշտադրումը, ավելի շուտ, դրա փոփոխությունը՝ ուժի դիրքերից դեպի իրավունքի դիրքեր (ընդ որում՝ ուժով պաշտպանված իրավունքի): Հենց այս փաստն է նյարդայնացնում Արևմուտքին, քանի որ այսպես վերջ է դրվում առաջիկայում ծրագրված մի շարք հանցագործությունների՝ ազգամիջյան բախումների հրահրման, միջազգային ահաբեկչության ծավալման, նորանոր ազգեր բնաջնջելու փորձերին: Կանխվում է ռազմական ագրեսիաների, պատերազմների ու ցեղասպանությունների միջոցով երկրներ ու տարածքներ զավթելու, դրանք մարդկության դեմ պատերազմական հանցագործություն կատարողներին պահ տալու գործընթացը: Ի չիք են դառնում նախկինում կատարված նմանօրինակ հանցագործությունները օրինականացնելու քաղաքական բոլոր տեսակի դեմագոգիաները, ինչպես օրինակ, Կոսովոն ալբանացի թուրքերին նվիրելու և կամ էլ մարդկության դեմ հանցագործություն կատարած Թուրքիայից Արևմտյան Հայաստանը խլելով՝ հիմա էլ քրդերին նվիրելու, այսպես կոչված, ազատագրված Քուրդիստան ստեղծելու դեմագոգիան, որն այլ բան չէ, քան Հայկական լեռնաշխարհում նոր ագրեսիվ ուժ ստեղծելու, ազգերին ու ժողովուրդներին ճնշելու, Արևելքն ու Արևմուտքը կռվկասյան ռազմական հեռակետով հսկելու ցանկություն:

Ռուսաստանը հայտարարեց, որ խնդիրը Օսեթիայի ժողովրդին ցեղասպանությունից փրկելն է և փրկեց: Իսկ նոր, այսօրինակ ոտնձգություններից խուսափելու միակ երաշխավորը դա Օսեթիայի ինքնորոշման իրավունքն է, ժողովրդի հավաքական կամքի իրագործումը: Դա էր և է Ռուսաստանի շահը, որն է նաև համաշխարհային հանրության շահը, խաղաղության և խաղաղ համակեցության իրողության հաստատումը: Հայտարարվեց նաև, որ մանրամասն պատրաստվում է իրավական թղթածրար, որի հիմքերի համաձայն, ՄԱԿ-ի միջազգային ատյանում պատասխանատվության են կանչվելու Վրաստանի նախագահն ու նրա վարչախմբի անդամները՝ Հարավային Օսեթիայում ցեղասպանություն իրականացնելու մեղադրանքով: Սրանք բոլորովին նոր և վաղուց սպասվող շեշտադրումներ են, որոնք եթե դառնան Ռուսաստանի, ինչպես և ամեն մի երկրի արտաքին քաղաքականության առանցքը, ապա կարող են ՄԱԿ-ի մի-

ջոցով այդ երկրների շուրջ համախմբել աշխարհի ժողովուրդների ու երկրների գերակշիռ մեծամասնությունը, չասելու համար բացարձակ մեծամասնությունը՝ իրենց ամբողջ ներուժով: Կարելի է ենթադրել, թե բարիկադի մյուս կողմում ո՞ր երկրները կմնան: Ի միջի այլոց, դրանք հենց այն երկրները կլինեն, որոնք առ այսօր չեն ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը, և հիմա ավելի քան հստակ է, թե ինչո՞ւ:

Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները, դրանց նախորդող և հաջորդող ժամանակների փորձը ցույց է տալիս, թե որքան հետևողական է ռուսական (և այլ տերությունների) քաղաքականությունը այս գծին, դրանով պայմանավորված է մարդկության խաղաղ համակեցության հեռանկարը: Այն պարզ պատճառով, որ ուժը պե՛տք է լինի իրավունքի պաշտպանը, նաև ինքն իրեն վերահսկի անկառավարելի ու բիրտ ուժի չվերածվելու համար: Մնացած բոլոր դեպքերում մենք ականատես ենք հազարամյակներ ծգվող այն ողբերգությանը, երբ ան-վերահսկելի ու ան-իրավ ուժը նոր աղետներ է բերում մարդկությանը: Կա ևս մեկ վտանգ. թե՛ ամերիկյան, թե՛ ռուսական, թե՛ այլ ուժային կենտրոնների, ըստ էության, ինքնանպատակ հակամարտությունը, վերջին հարյուրամյակում զենքերի ու զինատեսակների ձեռք բերված «նոր որակական թռիչքի» պայմաններում, կարող է բնաջնջել ողջ բնակչությունը Երկիր մոլորակի բոլոր հասցեներում, թեև շատերի համար եվրոպական մայրցամաքը այս ամենից շատ հեռու ու ապահով է թվում...

20-րդ դար... 21-րդ դա՞ր...

Միջպետական հարաբերություններում դա թույլ չտալու համար պետք է ուժ տալ հենց երկրների միջև բնականոն հարաբերությունների զարգացմանը՝ ՄԱԿ-ի կանոնադրությանն և նրա ընդունած հռչակագրերի ու սկզբունքների համաձայն: Մնում է հուսալ նաև, որ Ռուսաստանը ևս չի շեղվի, իրավական ոլորտը ուժով պաշտպանելու, իր և այլոց ազգային ինքնիշխանությունն ու ազգային անվտանգությունը երաշխավորելու, միջազգային նոր առաքելությունից: Հուսանք:

- Ֆրանսիան վերադառնում է ՆԱՏՕ: Օրագրում են ձևավորել երկու զինուժ: 2008-ի մարտի 27-ին Սարկոզին հայտարարեց. «Վերջ Շիրակի արտաքին քաղաքականությունը, Ֆրանսիան կվերադառնա ՆԱՏՕ», ըստ աշխարհի միակենտրոն ղեկավարման սցենարի: Եվրոպայում, նաև մյուս մայրցամաքներում պետք է տեղակայվեն երկու զինուժ: Ըստ այդմ, Եվրոմիությունը պետք ունենա եվրոպաշտպանական իր համակարգը՝ Եվրոպայի, Բալկանների, Միջերկրածովյան և Սևծովյան համագործակցության երկրների համար: Ասել է թե՝ ԵՄ-ի մեջ ներառված երկրները առաջիկայում պահելու են երկու զինուժ, մեկը համաեվրոպական՝ ներքին ճնշման, մյուսը՝ համաշխարհային ժանդարմի դերով, հանձին նորացվող և ՄԱԿ-ի անվտանգության խնդիրները ինքնուրույն լուծող ՆԱՏՕ-ի. հիմնականում, որպես ամբողջ աշխարհում Արևմուտքի զավթողական քաղաքականությունն իրականացնելու, պատերազմներ վարելու միջոց: Սարկոզիի հայտարարությունը բացահայտում է «Ուխտ Արարատի» թիվ 2 (13) -ում, 2007թ. զետեղված «Հայաստանը աշխարհի միակենտրոն, անմիջական և աներևույթ ղեկավարման նոր ուժային մեխանիզմի կիզակետում» վերլուծականում տրված ծովային և ցամաքային մեխանիզմների բնույթն ու տեղակայման վայրերը, ըստ ենթակայության: Միջերկրականը դրվում է Եվրոմիության զինուժի ենթակայության տակ, իսկ Սևծովյանը, Կասպիականը, Կարմիր ծովինն ու Պարսից ծոցինը, ինչպես նաև քարտեզում նշված ծովային հսկողության մյուս տարածքները՝ ՆԱՏՕ-ի:

Այստեղ հարկ է ավելացնել, որ Արևմուտքի ուշադրությունից չեն վրիպել Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների փոքր, անգամ փոքրագույն կղզիները, որոնք, ինչպես հայտնի է, վաղուց ի վեր պատկանում են եվրոպական տարբեր երկրների: Ակնհայտ է, որ անգամ դրանցից փոքրագույնները, որպես ռազմակայաններ, հարմար են միջմայրցամաքային բալեստիկ հրթիռների տեղակայման համար: Այդ ծրագիրը աշխատանքային ռիթմի մեջ գցելուն էր ուղղված 2007թ. հուլիսի 22-ին Եվրոմիության հրավիրած «Կղզիների և ծովերի առափնյա տարածքների բնապահպանական խնդիրները» թեմայով գիտաժողովը, որտեղ հիմնականում սևեռվել էին Պորտուգալիային պատկանող Ազորյան կղզիներից մեկին: ՆԱՏՕ-ի վաղվա ռազմակայան կղզիներից նշենք մի քանիսը. Ատլանտյան օվկիանոսում՝ Ազորյան կղզիները Ջիբլարթարի դեմ դիմաց (Պորտուգալիա), Մադեյրիայի կղզիները (Պորտուգալիա), Կանարյան կղզիները (Իսպանիա), Համբարձման կղզին (Անգլիա), Սուրբ Հեղինե կղզին (Անգլիա), Տրիստան-դե Կունյան կղզիները (Անգլիա), Գոֆ կղզին (Անգլիա), Կրոզեի կղզիները (Ֆրանսիա), Եվրոպա կղզին (Ֆրանսիա): Հարավային Ամերիկա մայրցամաքին հարող կղզիներից. հարավից՝ հայտնի Ֆոլկլենդյան կղզիները (Անգլիա), հյուսիսից՝ Կարիբյան ծովի շրջանում, Պանամայի դեմ դիմաց՝ Գվադելուպա կղզին (Ֆրանսիա), Մարտինիկա կղզին (Ֆրանսիա), Մարի-Գալանտ կղզին (Ֆրանսիա) և Ֆրանսիային, Նիդերլանդներին, Անգլիային և ԱՄՆ-ին պատկանող Փոքր Անտիլյան կղզիները, որոնք փակում են Կարիբյան ծովն ու Պանաման:

Ահա այսպես, ՆԱՏՕ-ի մայրցամաքային տեղակայման վայրերն են լինելու, Եվրոպայում՝ Կոսովոն, Աֆրիկայում՝ Կոնգոն, քաղաքակրթությունների հայկական խաչմերուկում՝ Կովկասը[4]: Մեր կողմից կարող ենք լրացնել. Լատինական Ամերիկայում՝ Կոլումբիան:

- Չինաստան: Առանց Չինաստանին հակամարտության մեջ ներքաշելու անհասկանալի կլիներ երրորդ համաշխարհայինը: Տիբեթցիների միջոցով կազմակերպված գարնանային հակաչինական այս խառնաշփոթը ուղղակի մատնանշում է, որ Արևմուտքն այդ խնդրում տարիներ շարունակ մեծ ծավալի աշխատանք է կատարել: Իսկ թե ի՞նչ է սպասվում Չինաստանին, երևում է արևմտյան լրահոսից, ըստ որի տիբեթյան շրջանը տարածվում է մինչև Չինաստանի հյուսիսային շրջաններ. այսինքն՝ հասկանալի է դառնում, որ նախատեսել են Չինաստանը բաժանել առնվազն երեք մասի. արևելյան, կենտրոնական, արևմտյան՝ գրեթե հավասազոր տարածքների: Ինչ վերաբերում է արևելյան հատվածին, ապա այստեղ, կարծում ենք, որ նախատեսում են անգամ միջուկային հարված, կամ սպառնալիք: Դրա մասին է հուշում այն փաստը, որ օրեր առաջ ԱՄՆ-ը միջուկային մարտագլխիկներ ներմուծեց Թայլանդին: Չմոռանանք, որ Չինաստանի դեմ ուղղված միջուկային մարտագլխիկներ կան նաև Պակիստանում, մի երկիր, որն ամերիկյան սցենարով նույնպես մասնատվում է, իսկ անիշխանության պայմաններում ամեն ինչ հնարավոր է: Ակնկալվում է, թե տարօրինակ չի դիտվի, երբ ասիական այնպիսի երկիր, ինչպիսին միջուկային Պակիստանն է (անշուշտ, առանց արևմտյան հրահանգիչների խորհրդատվության), ընդհանուր քաոսի ժամանակ, «պատահաբար», մարտագլխիկներ արձակի Չինաստանի ուղղությամբ:

Խորհրդանշական է, որ ԽՍՀՄ-ը քանդելուց առաջ օլիմպիադան 1980-ին խաղարկվեց Մոսկվայում, որին արևմտյան մի շարք տերություններ հրաժարվեցին մասնակցել:

Ակնհայտ է, որ նույն սցենարը փորձում են կիրառել հիմա էլ Չինաստանի նկատմամբ: Վստահ ենք, որ զուր հույսեր են: Զուր են լինելու նաև մարդկային մեծագույն կորուստները, քանզի նա, ով չի կարողանում ճանաչել Ռուսաստանը, առավել ևս չի կարող ճանաչել Հին Արևելքը, նրա ազգային-քաղաքակրթական բնականոն կարգավորվածությունը: Ճիշտը սթափվելն է, հանցագործ ուղուց հրաժարվելը:

Սրանք են արևմտյան ծրագրային միտումները, թե ի՞նչ վերափոխումներ, շտկումներ կմտցնեն դրանց մեջ ստրկանալ չցանկացող միջազգային հանրությունը, մեծ ու փոքր ազգերն ու երկրները՝ ցույց կտան ժամանակը և նրանց իսկ ձեռնարկած քայլերը, մասնավորապես, միջազգային իրավունքի ոլորտում:

2. ՀՀ-ին ու ԼՂՀ-ին ուղղված մարտահրավերները և մեր անելիքները

- Թուրքիան (նույնն է թե՝ Արևմուտքը) առաջարկեց Կովկասյան համագործակցություն (Անվտանգության պլատֆորմ վերանվանված) գաղափարը ու դարձավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ: Բայց, որ թուրքական ծրագրերը նույն են, վկայում է Թուրքիայի Արտաքին գործերի նախարար Ալի Բաբաջանի վերջերս արած հայտարարությունը, թե իր երկրի քաղաքականությունը Կիպրոսի և Կովկասի նկատմամբ փոփոխություն չի կրել: Այս ամենը կրկնում է Թուրքիային որպես հանցագործ գործիք պահելու և գործածելու **Պաուլ Ռորբախի, Լոուրենս Արաբացու, Լև Տրոցկու** բացահայտումներով իրագործվող ծրագիրը[5], որն այսօր էլ Արևմուտքում և Ռուսաստանում հետևորդներ ունի, ինչպես, օրինակ, **Ռալֆ Պիտերսը**՝ ԱՄՆ-ում: Օգոստոսի 8-ից հետո Կովկասում և աշխարհում ստեղծված նոր իրողություններ արդյունքում Թուրքիան առանձնակի անհանգստացած է և փորձում է նվազագույն կորուստներով, իսկ հնարավորության դեպքում՝ անգամ շահած դուրս գալ այս իրադրությունից: Սակայն դա ինքնախաբեություն է, չի ստացվի. հայտնի է, որ հանցագործ գործիքը հետագայում վերացնում են: Չի օգնի վրաց-օսական հակամարտությունից անմիջապես հետո Կովկասյան խաղաղարարի դերով հանդես գալը, ինչպես նաև Կովկասյան ինտեգրման նոր՝ երրորդ, փորձի ձեռնարկումը: Հենց այս վերջինն էլ կլինի նրա՝ Թուրքիայի ինքնաոչնչացման հիմնական պատճառը[6]: Երրորդ ուղղությունը՝ ոչ ռազմական պատվերը, խաղաղությանն ու խաղաղ համակեցությանը ուղղված հայոց և այլոց միջազգային իրավական բոլոր հարցադրումների արգելափակողի դերի ստանձնումն է ՄԱԿ-ում: Բայց սա խոսում է այն բանի օգտին, որ իրադրությունը անհուսալի է հենց արևմտյան ծրագրերի ու դրանց պաշտպանների համար: Միջազգային իրավունքի և ծավալվող հանցագործության այս առկա հակամարտությունում մենք պետք է լինենք նախաձեռնողի ու իրավատերի, երիցս ամուր, դիրքերում: Միայն այդպես ի հայտ կգան իրական համախոհներն ու դաշնակիցները:



- Միխեիլ Սահակաշվիլի - Սերժ Սարգսյան հանդիպումը, ինչո՞ւ էր այդքան գոհ Մ. Սահակաշվիլին: Հայաստանի շրջափակումը հյուսիսից և հարավից: Քննարկվող գլխավոր հարցերից մեկը, որի վրա հատուկ ուշադրություն է դարձրել Վրաստանի նախագահը, հայ-վրացական սահմանի հարցն է: Սահակաշվիլին ասել է, որ այդ սահմանը համարում է բարեկամության սահման և հաղորդել, որ երկու երկրների նախագահները որոշել են մոտ ապագայում պարզեցնել և թեթևացնել սահմանը հատելու կարգը. «Ես հավատում եմ, որ Հայաստանի և Վրաստանի միջև սահմանը կնմանվի Շվեյցարիայի և Ֆրանսիայի միջև սահմանին»: Չհիշելով անշուտ, որ արդեն երկու տասնամյակ է ինչ հենց Վրաստանն է փակել ՀՀ-ը հյուսիսին, արևելքին ու արևմուտքին կապող երկաթուղային հիմնական ճանապարհը, որն ամենևին չի հիշեցնում Շվեյցարիա - Ֆրանսիա սահմանի երկաթուղային կապը: Պետք չէ մոռանալ նաև, որ Սահակաշվիլիի անհատական ջանքերի միջոցով վերջին տարիներին վրաց-թուրք-ադրբեջանական հարաբերությունները վերածվել են ռազմավարական դաշնակիցների հարաբերության, որը միտված է մեկուսացնելու Հայաստանը. իրականում Հայաստանի սահմանը Վրաստանով բացվում է հենց միայն ուրիշների համար: Խնդիրն այն է, որ երբ վրացական սահմանը հյուսիսից վերահսկելի է դառնում, ապա անհրաժեշտ է դառնում գտնել սահմանի այլ, անվերահսկելի ուղղություն, ինչը, սակայն, չի կարող չմտահոգել մեզ, միջազգային ահաբեկչության նորանոր ծավալումների համատեքստում: Հարց է ծագում, առաջարկվածը կյանքի՞, թե՞ մահվան ճանապարհ է:

Մեկ այլ կարևոր նկատառում. Հայաստանը անկախություն ձեռք բերեց 1991-ին, ամերիկյան զինուժը Իրաքի վրա հարձակվեց 1992-ին, ներխուժեց 2003-ին: Նայենք քարտեզին. Հայաստանի շրջափակումը հարավից իրականացվեց նաև իրաքյան ճգնաժամի միջոցով: Այլապես, հարավում խաղաղ Իրաք ունենալու դեպքում՝ Հայաստանը կարող էր Իրանի ճանապարհով ու Իրաքի միջոցով դուրս գալ արաբական աշխարհ, բաց ծով: Այնպես որ պատկերը նույն է ինչ 1918-20թթ., երբ հյուսիսն ու հարավը փակելով՝ ստիպում էին ՀՀ-ին «բարեկամանալ» իր երկու մեծ ու փոքր դահիճների՝ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ, այն օրերին՝ հանուն համաշխարհային հեղափոխության, հիմա էլ՝ հանուն գլոբալացման:

- Դենիել Ֆրիդ, Մեթյու Բրայզա, Կոնդոլիզա Ռայս. Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի տարածքային ամբողջականության պաշտպանության հարցերը: Հայաստանի տարածքային ամբողջականության բացառման, նաև վերականգնման փաստը մերժելու արևմտյան համառության ենթատեքստը: 2008-ի հունիս - օգոստոս ամիսներին, մեկը մյուսին լրացնելով, ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան պաշտոնյաները հայտարարեցին Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի տարածքային ամբողջականությանը պաշտպան կանգնելու մասին: Այսպես՝ Դենիել Ֆրիդ. «Հայաստանը պետք է պատրաստ լինի ճանաչել առկա սահմանը...», «պետք է հայտարարի, որ ժամանակակից Թուրքիայի նկատմամբ հողային որևէ պահանջ չունի»[7]: Մեթյու Բրայզա. «Մենք աջակցում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը...»[8]: Կոնդոլիզա Ռայս. «ԱՄՆ-ը պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը...»[9]: Ուշադրություն դարձրեք, որ խոսք անգամ չկա Հայաստանի տարածքային ամբողջականության մասին: Հայտնի է, որ մեր «հարևանների» օգտին 1918-21թթ. արված ապօրինի «մասնահանումներից» մեծապես տուժել է Հայաստանի առաջին Հանրապետության տարածքային ամբողջականությունը. Արցախը, Նախիջևանը տրվել են Ադրբեջանին, Ջավախքը՝ Վրաստանին, Կարսն ու Արդահանը՝ Թուրքիային: 1918-21թթ. Անդկովկասում հանցագործ ճանապարհով գծված սահմանների անձեռնմխելիության հայտարարությունների հետևանքները իրենց երկար սպասեցնել չտվին. Վրաստանը հարձակվեց Հարավային Օսեթիայի վրա, Ադրբեջանը սպասում էր պատերազմի հաջող ելքին՝ իր հերթին Արցախի վրա հարձակվելու համար:

Այնուհանդերձ, մի կարևոր պարտավորություն ունենք.

հիշելու և հիշեցնելու, որ իրավունք ունենք վերականգնելու Հայաստանի տարածքային ամբողջականությունը, և ըստ այդմ կառուցելու մեր արտաքին քաղաքականությունը:

- Խաղաղության Նոբելյան մրցանակ Մարտի Ահտիսաարին՝ Կոսովոյի անկախության «ճարտարապետին», աշխարհում իրավական քաոս հարհիրելու ծրագրի հեղինակին: Կոսովոյի անկախության ճանաչումը ԱՄՆ-ի և նրա եվրոպական մի շարք դաշնակիցների կողմից աշխարհում իսկական իրավական քաոս առաջացնելու փորձ է: Առանց չափազանցության կարելի է ասել, թե հնարավոր չէ գտնել մի երկիր, որին չհուզի այս խնդրի այսօրինակ արծարծումն ու իրացումը: Հաշվարկը պարզունակ է. պնդել, թե միջազգային իրավական նորմերը այլևս չեն գործում, ուժն է թելադրում իրավիճակը: Հիշենք Ռալֆ Պիտերսի 2006-ին հնչեցրած ժողովրդավարության ֆաշիստական ձևակերպումը՝ «էքնիկ զտումներն իրենց գործն անում են»: Բանն այն է, որ երբ հաշվի չեն առնվում ազգագրական, պատմական, հոգևոր-մշակութային, քաղաքակրթական առաջնայնությունները, ապա էքնիկ ներխուժումների միջոցով հնարավոր է դառնում ուզած երկիր մասնատել, ցանկացած ժողովրդի անպատիժ ենթարկել էքնիկ զտումների (իմա՝ ցեղասպանության), ուզած սահմաններ ապօրինի կերպով վերագծել և զուգահեռ «օրինականացնել» անցյալում թույլ տրված այսօրինակ բոլոր հանցագործություններն ու հանցագործներին, այս ամենին զուգակցելով զոհին դատապարտելու (ինչպես Միլոշևիչին դատելու, ճիշտ է ձախողված) փորձը:

- Ինքնորոշման իրավունքի մեխանիզմները ըստ ՄԱԿ-ի հռչակագրերի: Տարածքային ամբողջականություն: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության հակամետ թվացող խնդիրները 1993-ին լավագույնս քննել է Յուրի Բարսեղովը[10]: Նա նշում է միջազգային իրավունքի չորս նորմեր, որոնք գերակա են, երբ դրվում է ազգի ինքնորոշման իրավունքը իրականացնելու անհետաձգելի պահանջ: Ըստ Բարսեղովի մեկնաբանության, երբ ժողովրդին այլ ելք չի մնում քան ինքնորոշման ճանապարհով **ապահովել** ապրելու իր իրավունքը՝ նա իրավունք ունի ա) ինքնորոշման իրավունքի ճանապարհով անկախության ուղին բռնել, բ) երբ չի ստացվում խաղաղ ճանապարհով, ապա ազատագրական պայքարի միջոցով այդ իրավունքը **նվաճել**, այս դեպքում՝ գ) միջազգային ընտանիքը **պարտավոր է** օժանդակել ազատագրական պայքար մղող և անկախության ձգտող ժողովրդին, դ) միջազգային ընտանիքը **պարտավոր է** ամեն գնով զսպել ագրեսորին, ջարդեր, ցեղասպանություն իրականացնողին:

Արցախահայության դեպքում առաջին երկու կետերի պահանջները իրագործվել են համահայկական ջանքերի շնորհիվ: Երրորդ և չորրորդ կետերի պահանջները չեն իրականացվել միջազգային ընտանիքի հանցավոր անտարբերության և մեր դիվանագիտության աններելի պասիվության պատճառով: Այսինքն, միջազգային ընտանիքը չի օժանդակել արցախահայությանը, չի զսպել ագրեսորին, բռնացողին, ցեղասպանություն իրականացնողին: Ավելին՝ խնդրին իրավական լուծում տալու փոխարեն, հատուկ նպատակով, այն տեղափոխվել է քաղաքական բանակցությունների ոլորտ: Սա նշանակում է, որ հակառակ միջազգային իրավունքի տրամաբանության՝ հակամարտությունը արհեստականորեն «սառեցվել է»: Հատուկ նպատակն էլ բացահայտվել է Հարավային Օսեթիայի «սառեցված» հակամարտության բորբոքման առիթով: Պարզից էլ պարզ է, որ եթե միջազգային ընտանիքը կատարի իր պարտավորությունը ցանկացած հակամարտության նկատմամբ, ինչպես օրինակ արցախահայության, տարածքային ամբողջականության խնդիրը կդադարի «արգելք» լինելուց: Որովհետև տարածքային ամբողջականության (կամ սահմանների անձեռնմխելիության) խնդիրը միջազգային օրենսդրությամբ կարևորվում է արտաքին ագրեսիայից երկիրը պաշտպանելու և ոչ թե անպաշտպան ժողովրդին հենց ագրեսորի ու ցեղասպանի ձեռքը հանձնելու համար:

- Զիջումների խնդիրը. ո՞վ հորինեց, ի՞նչ նպատակով: Արցախի ազգային - ազատագրական համաժողովրդական ազատամարտում, նաև ՀՀ պաշտպանության պարտադրված պատերազմում հաղթական ելքով հայությունը միջազգային գործադիր դաշտում լուծել է ԼՂՀ հիմնախնդիրը: Մնացել է դրա միջազգային իրավական ամրագրումը: Միջազգային հանրությունը դեռևս չի դատապարտել Արցախի նկատմամբ բռնություններ, ջարդեր կազմակերպելու, պատերազմ հրահրելու և խաղաղ բնակչությանը բնաջնջելու միտված Ադրբեջանի հանցագործ գործողությունները: Փոխարենը շուրջ 15 տարի է բանակցությունների օրակարգում դրվել ու պահվում է, այսպես կոչված, փոխադարձ զիջումների ինչ-որ քողածածկ առևտուր: Սինսկի խմբի բանակցային ձևաչափի շրջանակներում էլ պարզվում է, որ Ադրբեջանը դեռ մի բան էլ պահանջներ ունի, այսինքն՝ հակված չէ իրական զիջումների:

Միջազգային դատարանում պետք դրվի 1988-1994թթ. Չարդախլուի, Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի հայերի ջարդերի և պատերազմական հանցագործությունների, 1995-2008թթ. իր ժողովրդի մեջ ազգամիջյան ատելություն սերմանելու, խաղաղության ու խաղաղ համակեցության դեմ ուղղված Ադրբեջանի իշխանությունների վարած հանցագործ քաղաքականության դատապարտման խնդիրը,

իսկ բանակցությունների օրակարգում՝

ա) ԼՂՀ-ի և ՀՀ-ի սահմանների նկատմամբ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիայի հետևանքով հասցված վնասի հատուցման,

բ) 1988-1990թթ. Ադրբեջանից բռնագաղթված 500 հազար հայ փախստականների վնասի հատուցման,

գ) 1921-1988թթ. Արցախի ու արցախահայության նկատմամբ մշակութային - քաղաքակրթական 70-ամյա շրջափակման, բռնությունների, ագրեսիվ նկրտումների Ադրբեջանի իշխանությունների վարած հանցագործ քաղաքականության հետևանքների վերացման և Արցախին, ՀՀ-ին հասցված վնասի հատուցման խնդիրները:

- ԱՄՆ նորընտիր նախագահ Բարաք Օբաման և հայկական հարցը: Կարծում ենք հիմնովին սխալ է ձևակերպված հայկական շրջանակներում հաճախակի հնչող «Ի՞նչ եք կարծում, իսկ Բարաք Օբաման որպես ԱՄՆ նախագահ կճանաչի՞ Հայոց ցեղասպանությունը» հարցադրումը: Ի՞նչ է սա: Որտեղի՞ց ծնվեց այս «ճանաչել, չճանաչելու» հարցադրումն ու ի՞նչ նպատակ է այն հետապնդում... Պարզելու համար կարևոր է նախ և առաջ հստակեցնել, որ դրանով հարցը դուրս է բերվում իրավական դաշտից, քանզի դա ոչ այնքան **ճանաչման**, որքան (հենց միայն) **դատապարտման** խնդիր է: Եվ երկրորդ, շատ ավելի կարևոր է ճշտել այն հարցի պատասխանը, թե ամերիկյան նոր վարչակազմը՝ հանձին նոր նախագահի և դեմոկրատների, Կոնգոյի, Կոսովոյի, Կովկասի նկատմամբ արտաքին քաղաքականության, ո՞ր ճանապարհը կընտրի. ազգամիջյան ատելության սերմանման, ազգամիջյան բախումների հրահրման, ջարդերի ու ցեղասպանությունների քաջալերման քաղաքականությա՞ն, ինչպես Բուշ կրտսերի վարչակազմն ու նոր պահպանողական-հանրապետականները, թե՞ նշված հարցերի, առանձնակիորեն, ցեղասպանության դատապարտման և կանխարգելման: Սա է որոշելու, թե ԱՄՆ-ն իսկապե՞ս ուզում է վերականգնել ազատատենչ ու ժողովրդավար երկրի լրջորեն խաթարված վարկանիշը: Հայկական խնդիրներում Բարաք Օբաման նշել է չորս գերակայություններ. **1**. Հայոց ցեղասպանությունը պատմական ճշմարտություն է և այն պետք է ճանաչել ու դատապարտել: **2**. Կարևոր է Հայաստանի Հանրապետության անվտանգության խնդիրը: **3**. Պետք է վերացնել Հայաստանի Հանրապետության շրջա-

փակումը: **4**. Պետք է գտնել ԼՂՀ-ի հարցի կարգավորման ուղիները[11]: Ավելացնենք, որ Բարաք Օբաման կարևորում է աշխարհում տեղի ունեցած բոլոր ցեղասպանությունների դատապարտման խնդիրը, ապագայում նոր ցեղասպանությունները կանխարգելելու հեռանկարով: Ահա այս վերջինը դեռևս հույս ծնող հարցադրում է, որն իրավամբ կարող է փոխել ոչ միայն ԱՄՆ-ի զարգացման հասարակական - քաղաքական ուղին, այլև լուրջ խթան ծառայել խաղաղության և խաղաղ համակեցության հաստատմանը ողջ աշխարհում:

Բայց, այստեղ կա մի խնդիր: Մինչև ԱՄՆ նորընտիր նախագահի պաշտոնավարությունը՝ 2009-ի հունվարը, դեռ երկու ամիս կա, իսկ դա երկար ժամանակ է, նկատի առնելով այն հանգամանքը, որ ամերիկյան նոր պահպանողականները ընդամենը մեկ օրում՝ 2001-ի սեպտեմբեր 11-ից հետո, կարողացան ութ տարով փոխել աշխարհի պատկերացումները իրավունքի և ժողովրդավարության մասին: Մի առիթով այդ մասին էր խոսում փոխնախագահի թեկնածու Ջո Բայդոնը, երբ ընտրարշավի ժամանակ զգուշացնում էր, թե հաղթանակից հետո կարող են ծագել անսպասելի նոր իրավիճակներ, երբ հարկ կլինի կրկին համախմբվել Օբամայի շուրջ՝ պաշտպանելու նրա առաջադրած նոր գաղափարները:

Հայոց ցեղասպանությունը պատմաբաններին թողնելու արհեստածին խնդիրը: Քչերը գիտեն երևի, որ այս գաղափարը առաջիններից մեկը հրապարակ է նետել Իսրայելի նախագահ Շիմոն Փերեսը: Թուրքիայի վարիչները արագորեն կառչեցին դրանից: Եղան նաև այլ երկրների պաշտոնյաներ, ովքեր կարծեցին, թե կրկնելով միտքը թարմություն են հաղորդում հայ-թուրքական հարաբերություններին: Եթե միայն թուրքերը խոսեին դրա մասին... Բանն այն է, որ Հայոց ցեղասպանության փաստի առնչությամբ պատմաբաններն ու իրավագետները տարիներ շարունակ կատարել և կատարում են իրենց շնորհակալ աշխատանքը՝ կազմելով հանցագործությունը փաստերով մերկացնող ու հաստատող այն իրավական փաթեթը, որն առաջիկայում պետք է տարվի միջազգային դատարան: Պատմաբաններն իրենց գործն արել են վաղուց և ավարտուն, իրավաբանները սպասում են, քանզի գործելու են դատարանում: Ի դեպ, ՄԱԿ-ի միջազգային դատարանում այս հարցը կարող էր քննվել դեռ 1988 թվականին, համաձայն՝ 22-ը նոյեմբերի 1988թ. «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» ՀՍՍՀ Օրենքի պահանջի: Այդ փորձը կասեցրեց ԽՍՀՄ-ը: 1992-ից Հայաստանի Հանրապետական Կուսակցության օրենսդրական նախաձեռնությամբ այն կրկին գտնվում է ՀՀ ԱԺ օրակարգում՝ դատարան ուղարկելու համապատասխան լրացումով, բայց դեռևս ընթացք չի ստացել: Հայտնի չէ, թե հիմա ո՞ւմ խորհրդով է կասեցվել:

Մոսկովյան հռչակագրի ընձեռած հնարավորությունը: Հռչակագրի վերաբերյալ բազում դիտողություններ ենք լսել և դեռ լսելու ենք: Մեր կարծիքով հռչակագիրը հուշում է, որ բանակցությունները սկզբնապես ընթացել են սխալ ճանապարհով, որ անտեսվել են հակամարտությանը վերաբերող միջազգային իրավունքի գերակայությունները: Այսպես, հռչակագրի առաջին կետում ասված է. «...Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորման ճանապարհով, **միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների** և այդ շրջանակներում ընդունված **որոշումների ու փաստաթղթերի** հիման վրա...»: Միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների մասին խոսել ենք **«Ինքնորոշման իրավունքի մեխանիզմները ըստ ՄԱԿ-ի հռչակագրերի»** բաժնում: Դրանից բացի կա մի իրողություն, որ Մինսկի խմբի ձևաչափի շրջանակից դուրս Ադրբեջանը գործել է, Հայաստանը՝ ոչ: Եվ Ադրբեջանն է, որ ձեռք է գցել ՄԱԿ-ի **«որոշում և փաստաթուղթ»**, որը չի արտացոլում խնդրի իրական պատկերը: Ուստի, հռչակագիրը, ակամայից իսկ, թելադրում է բանակցությունները սկսել նոր էջից, իսկապես հիշելով **«միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները»**: Մշտապես հիշելով նաև, որ օրակարգում դրված է ոչ միայն ՀՀ-ի և ԼՂՀ-ի տարածքային ամբողջականության պաշտպանության, այլև վերականգնման խնդիրը:

Ծանոթագրություն

1. «Գոլոս Արմենիի», 11. 10. 2008թ., էջ 5:

2. «Վերազգային - վերպետական կապիտալի ստվերային կաբինետ» ասելով հասկանում ենք՝ համաշխարհային գլոբալ ֆինանսական համակարգի ուղեղային կենտրոնը, Լեհմանի ձևակերպմամբ «300-ի կոմիտեն», որը խնդիր է դրել նվաճել աշխարհը՝ հին ազգերն ու քաղաքակրթությունները կործանելու, ժողովուրդներին այլասերելու, ստրկացնելու, ազգային - պետական միավորները մասնատելու, քայքայելու ճանապարհով... Տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 3 (14), 2007թ., էջ 28, Ալան Դալեսի ծրագիրը:

3. Տե՛ս, Ուինստոն Չերչիլի հայտնի ճառը Ֆուլտոնում:

4. Տե՛ս, «Ուխտ Արարատի» թիվ 4 (10), 2006թ., Ռալֆ Պիտերսի կազմած քարտեզները: Ռալֆ Պիտերսի հոդվածի թարգմանությունը տե՛ս, «Ազգ» օրաթերթ, 25. 08. 2006թ.:

5. Տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 3 (14), 2007թ., էջ 8 - 33:

6. Նախորդ երկու փորձերի և դրանց ոչ ավարտուն լինելու մասին՝ տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 3 (14), 2007թ., էջ 18, Լև Տրոցկու «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը:

7. Հարցադրումը միտումնավոր սխալ է ձևակերպված, որի նպատակն է ԱՄՆ-ի ներկայիս վարչակարգի ճնշման տակ Հայաստանին ստիպել օրինական ճանաչելու 1915-1923թթ. մարդկության դեմ իրագործած Թուրքիայի բոլոր հանցագործությունները, ինչպես նաև 1921թ. մարտի 16-ի ապօրինի պայմանագրով ձևավորված ԽՍՀՄ - Թուրքիա սահմանը: Հայաստանը, չհիմնավորված, «Թուրքայի նկատմամբ հողային պահանջ» երբևէ չի ունեցել և չունի: Թուրքիայի ցեղասպանության ճանապարհով զավթած ամբողջ Արևմտյան Հայաստանի, բոլշևիկների կողմից Թուրքիային նվիրաբերված Արևելյան Հայաստանի տարածքների խնդիրն է, որ դրել է հայությունը, և անկախ նրանից ցանկանո՞ւմ, թե՞ չի ցանկանում Դենիել Ֆրիդը, այդ խնդիրը դրվելու է: Առջևում դրանք նորովի ձևակերպելու ձեռագրի և ճանապարհի ընտրության հարցերն են: Մյուս կողմից, Դենիել Ֆրիդը, ի պաշտոնե, պետք է իմանար, որ Հայաստան - Թուրքիա սահմանագծումը 1920թ. իրականացվել է ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի հանձնարարությամբ, և որ այդ սահմանագծումը այսօր էլ պարտադիր է իրականացման համար, ուստի և կարիք չկար, որ ինքը որպես ԱՄՆ պաշտոնյա դուրս գար իր նախագահի օրինական որոշման դեմ: Ասվածը առնչվում է նաև ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնյաներ Կոնդոլիզա Ռայսին ու Մեթյու Բրայզային, քանի որ Սևրի դաշնագիրը, որի տակ դրված է ԱՄՆ-ի ստորագրությունը, վերաբերվում է նաև Հայաստան - Վրաստան, Հայաստան - Ադրբեջան սահմանագծումներին:

8. Ասել է թե՝ Մեթյու Բրայզան արդարացնո՞ւմ է Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ջարդերը, Ադրբեջանի հայության բռնագաղթը, ՀՀ-ի ու ԼՂՀ-ի նկատմամբ Ադրբեջանի իրականացրած ագրեսիան ու պատերազմական հանցագործությունները:

9. ...պարզապես լռելով ու չշարունակելով՝ «...ընդդեմ օսերի ու աբխազների կյանքի իրավունքի»:

10. Տե՛ս, Ю. Барсегов, "Обязателъная сила права народов на самоопределение и средства его обеспечения", Москва, 1993г.

11. «Երկիր մեդիա» հ/ը, 23.10.2008թ.:

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ

(փորձաքննություն ըստ միջազգային իրավունքի)

Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև, այսպես կոչված, սահմանի իրավական ներկա կարգավիճակը լուսաբանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ մի քանի հարցերի:

1. Նախ՝ անհրաժեշտ է պարզաբանել, թե ի՞նչ իրավական հիմքով է Արցախը հայտնվել Ադրբեջանի, այսինքն, Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետության, ենթակայության ներքո:

Կարիք չկա հարցը լուսաբանել հանգամանալից, քանի որ հանրահայտ իրողություն է, որ Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության ենթակայության ներքո Արցախը հայտնվել է կուսակցական մարմնի՝ այն է Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ: Ակնհայտ է, որ և՛ ներպետական, և՛ միջազգային իրավունքի տեսանկյունից այս որոշումն անօրինական է և անվավեր, քանի որ ցանկացած մարմին կարող է որոշումներ կայացնել միմիայն այն հարցերի վերաբերյալ, որոնց համար կառույցն ունի համապատասխան լիազորություններ: Այսինքն, տվյալ կառույցի հիմնադիր փաստաթղթով (սահմանադրություն, կանոնադրություն, կանոնակարգ) նշյալ կառույցին վերապահված են նման իրավասություններ, այդ իրավասությունները ճանաչված են իրավասու կամ գոնե համարժեք այլ կառույց/ներ/ի կողմից և դա ամրագրված, կամ գոնե վկայված է համապատասխան ընթացակարգով: Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կանոնադրությունը (Устав) կենտկոմի Կավբյուրոյին նման լիազորություններ չէր վերապահում: Ակնհայտ է, որ Կավբյուրոն գործել է ultra vires, այսինքն, ականհայտորեն գերազանցել է իր լիազորությունների շրջանակը: Իրավունքը, մասնավորապես միջազգային իրավունքը, իսկ սահմանազատման հարցը (boundary delimitation) սոսկ միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների հարց է, նման լիազորություններ չի վերապահել և չի վերապահում կուսակցական մարմիններին, եթե միչևիսկ այդ կուսակցությունները կառավարող կուսակցություններ են:

Անհարժեշտ է նաև ընդգծել, որ Կավբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի նիստը գումարվել է ներկուսակցական ընթացակարգի կոպիտ խախտմամբ, քանի որ Կավբյուրոյի նախորդ նիստը (4 հուլիսի, 1921 թ.) որոշել էր «Ղարաբաղի հարցը» տեղափոխել ՌԿԿ ԿԿ-ի «վերջնական լուծմանը»:

2. Հաջորդ հարցը, որն անհրաժեշտ է լուսաբանել այն է. ինչքանո՞վ է Ադրբեջանի կազմում Արցախի ընդգրկումը խարսխված միջազգային իրավունքի վրա: Սրա համար պետք է տեսնել, թե ի՞նչ դիրքորոշում է ունեցել միջազգային հանրությունը տվյալ հարցի նկատմամբ, և միջազգային իրավունքի ի՞նչ փաստաթղթերում են դրանք ամրագրված:

Հարավային Կովկասի երկրների փոխադարձ սահմանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանի, հարցերը քննության առարկա են դարձել Փարիզի խաղաղության վեհաժողովում (1919-1920թթ.): Հայաստանի և Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սահմանների վերաբերյալ համապատասխան զեկույց է ընդունել Հայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնաժողովը (Commission for the Delimitation of the Boundaries of Armenia): Սույն հանձաժողովի զեկույցի տակ դրված են Ազգերի լիգայի Խորհրդի անդամ երկրների՝ Ֆրանսիայի, Բրիտանական կայսրության, Իտալիայի և Ճապոնիայի, լիազոր ներկայացուցիչների ստորագրությունները: Այս զեկույցը, որը թվագրված է 24 փետրվարի, 1920թ.-ով և վերնագրված է «Զեկույց և առաջարկներ Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովի» (Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia, 24 February 1924), հստակեցրել և ամրագրել է Հայաստանի Հանրապետության սահմանազատման սկզբունքները նրա հյուսիսային հարևանների հետ: Այն մասնավորապես արձանագրում է. «Ինչ վերաբերում է Հայաստանի պետության և Վրաստանի, ինչպես նաև Ադրբեջանի սահմանին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ ներկայումս նախընտրելի է սպասել վերոնշյալ սահմանների հստակեցման վերաբերյալ այնպիսի համաձայնության արդյունքներին, որոնց երեք հանրապետություններն իրենք կհանգեն պայմանագրերի մեջ:

Այն դեպքում, եթե սույն հանրապետություններն իրենց սահմանների վերաբերյալ չեն հանգի որևէ համաձայնության, ապա հարցը պետք է փոխանցվի Ազգերի լիգայի իրավարարությանը, որը կստեղծի միջդաշնակցային Հանձնաժողով՝ տեղում որոշելու վերոնշյալ սահմանները՝ հաշվի առնելով, որպես սկզբունք, ազգագրական տվյալները»:

(As regards the boundary between the State of Armenia and Georgia and Azerbaijan, the Commission considers that, it is advisable for the present to await the results of the agreement, provided for in the treaties existing between the three Republics, in regard to the delimitation of their respective frontiers by the States themselves.

In the event of these Republics not arriving at an agreement respecting their frontiers, resort must be had to arbitration by the League of Nations, which would appoint an inter-allied Commission to settle on the spot the frontiers referred to above, taking into account, in principle, of ethnographical data.)

Հույժ կարևոր է, որ նշյալ փաստաթուղթն ընդգրկվել է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի (22 նոյեմբերի, 1920թ.) (Arbitral Award, November 22, 1920) Ամբողջական զեկույցի մեջ, որպես 1-ին հավելվածի 2-րդ փաստաթուղթ (Full Report, Annex I, No 2), որը վկայում է, որ Միացյալ Նահանգները ճանաչել է նշյալ փաստաթղթի իրավական էությունն ու օրինականությունը:

Նշյալ դրույթները ներառվել են նաև Սևրի պայմանագրի (10 օգոստոսի, 1920թ.) մեջ, որպես Պայմանագրի 92-րդ հոդված. «Հայաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև Վրաստանի, միջև սահմանները կորոշվեն շահագրգիռ երկրների ուղղակի համաձայնության միջոցով: Այն դեպքում, երբ շահագրգիռ երկրները մինչև 89-րդ հոդվածում հիշատակված որոշման օրը չեն կարողանա համաձայնությամբ որոշել սահմանները, ապա խնդրո առարկա սահմանը կորոշվի Գլխավոր դաշնակից ուժերի կողմից, որոնք էլ տեղում կիրականացնեն նաև սահմանաճշումը»:

(The frontiers between Armenia and Azerbaijan and Georgia respectively will be determined by direct agreement between the states concerned.

In the either case the States concerned have failed to determine the frontier by agreement at the date of the decision referred to in Article 89, the frontier line in question will be determined by the Principal Allied Powers, who will also provide for its being traced on the spot) [9].

Նշյալ ամրագրված սկզբունքները, ինչպես նաև Վիլսոնի Իրավարար վճիռը, ի կատար չեն ածվել, քանի որ Հարավային Կովկասի բոլոր երեք երկրներն էլ բռնազավթվել, ապա և բռնակցվել են բոլշևիկյան Ռուսաստանին, այսինքն, կորցնելով իրենց ինքնիշխանությունը, դադարել են միջազգային իրավունքի սուբյեկտներ լինելուց: Պետք է շեշտել, որ բռնազավթման (1920/21-1922թթ.) ապա և բռնակցման

տարիներին (1922-1991թթ.) տեղի ունեցած որևէ գործողություն՝ սահմանազատում, վարչա-տարածքային բաժանում, վարչական միավորների ստեղծում, չէր կարող և չի ստեղծել իրավական հետևանք, քանի որ բոլոր այդ գործողությունները, ի սկզբանե, խարսխված են եղել միջազգային իրավունքի կոպիտ ոտնահարման հետևանքով առաջացած իրավիճակի վրա, այն է միջազգայնորեն ճանաչված անկախ երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների (1918-1920/21թթ.) անօրինական պետականազրկումը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հետխորհրդային Ադրբեջանի, ինչպես նաև Վրաստանի, բոլոր ղեկավարներն ու կառավարությունները միանշանակ բացասական գնահատականներ են տվել Ադրբեջանում, ինչպես նաև Վրաստանում, կոմունիստական տիրապետության ժամանակաշրջանին (1920/21-1991թթ.), մերժել են այն, իրավացիորեն այդ ժամանակաշրջանը համարել օտարերկրյա ռազմական ուժի կողմից ադրբեջանցի և վրաց ժողովրդի պետականազրկման, երկրի ապօրենի բռնազավթման, ապա և բռնակցման տարիներ: Միջազգային իրավունքի տեսանկյունից միանգամայն օրինաչափ գնահատականներ, քանի որ նույն միջազգային իրավունքի հիմադրույթներից է, որ բռնազավթիչ վարչախմբի (օկուպացիոն ռեժիմի) գործողությունները չեն կարող և չեն ծնում իրավական հետևանքներ տվյալ երկրի համար, անկախ այն բանից այդ հետևանքները դրական են, թե բացասական: Ե՛վ Ադրբեջանի, և Վրաստանի ուղղակի իրավահաջորդությունն իրենց առաջին հանրապետություններին ամրագրված է տվյալ երկրների պետական հիմնարար փաստաթղթերով: Ադրբեջանի պարագայում այն ամրագրված է Ադրբեջանի անկախության հռչակագրով /թվագրված 18 հոկտեմբերի, 1991թ./, իսկ Վրաստանի դեպքում «Վրաստանի պետական անկախության վերականգնման ակտով» /թվագրված 9 ապրիլի, 1991թ./:



Առնվազն տարօրինակ է, որ այսօր փորձ է արվում կուսակցական որոշումներին գերակա կարգավիճակ տալ միջազգային փաստաթղթերի նկատմամբ, որոնք այսօր արտահայտում են մի քանի տասնյակ երկրների, այդ թվում Մինսկի եռանախագահության երկու անդամ երկրների՝ Ֆրանսիայի և ԱՄՆ-ի, քաղաքական կամքը:

Հարավային Կովկասում սահմանների, ինչպես նաև հայ-թուրքական սահմանի, հարցը, կարող է և պետք է լուծվի միայն միջազգային իրավունքի հիման վրա արդեն իսկ կայացված վճռի (22 նոյեմբերի, 1920թ.) և հստակեցված սկզբունքների (24 փետրվարի, 1920թ.) կենսագործմամբ: Պետք է շեշտել, որ այսօրվա Եվրոպայի և Միջին արևելքի քաղաքական քարտեզը գրեթե ամբողջովին ձևավորվել է Փարիզի 1919-1920թթ. վեհաժողովի որոշումների, սկզբունքների և առաջարկների հիման վրա: Եթե որևէ մեկը այսօր կփորձի կասկածի տակ դնել Փարիզի վեհաժողովի որոշումները Հայաստանի մասով, ուրեմն, նա կասկածի տակ կդնի այսօրվա Եվրոպայի և Միջին արևելքի ողջ քաղաքական և իրավական համակարգը:

3. Հարցի փորձաքննության համար կարևոր է նաև անդրադառնալ ընդհարապես «սահման» իրավական հասկացությանը և մասնավորապես, այսպես կոչված, «սահմանների անձեռնմխելիությանը», տեսնել թե որքանո՞վ է ժողովուրդների (մարդկանց) ինքնորոշման իրավունքը իբր հակասության մեջ մտնում «սահմանների անձեռնամխելության» սկզբունքից ածանցվող, այսպես կոչված, «տարածքային ամբողջականության» տարփողվող, սակայն իրականում միջազգային իրավունքի մեջ գոյություն չունեցող սկզբունքի հետ:

Նախ՝ ի՞նչ բան է սահմանը: Միջազգային իրավունքում «սահման» տերմինը բնորոշում է այն գիծը, որը որոշում է պետության կամ մեկ այլ միջազգային կարգավիճակ ունեցող միավորի իրավասության տարածքային ոլորտի վերջնագիծը (In International law, the term “boundary” means a line which determines the limit of the territorial sphere of jurisdiction of States or other entities having an international status):

Ավելի պարզ ասած՝ սահմանում է այն գիծը մինչև ուր գործում են տվյալ պետության օրենքները, իսկ դրանից անդին գործում են, անպայմանորեն միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող, մեկ այլ պետական միավորի օրենքները: Այստեղից ակնհայտ է, որ սահմանն ածանցվում է պետականությունից, այսինքն՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչված լինելուց: Անվիճելի է, որ այսօր գործող Մինսկի խմբի երկրներից և ոչ մեկը՝ ներառյալ՝ ԱՄՆ-ը և Ֆրանսիան, նախկին Սովետական Միության մեջ ընդգրկված և ոչ մի վարչական, միավոր երբեք չեն ճանաչել որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Հետևաբար այդ միավորների վարչական բաժանարար գծերը միջազգային իրավունքի առումով երբեք չեն ունեցել սահմանի կարգավիճակ, որպեսզի այսօր հիմք լիներ խոսելու սահմանների անձեռնմխելիության մասին: Առավել ևս սա վերաբերում է բոլոր այն վարչական միավորների (ինքնավար հանրապետություններ, մարզեր և օկրուգներ) և սովետական սոցիալիստական հանրապետությունների բաժանարար գծերին, որոնց վարչական ենթակայության տակ էին գտնվում տվյալ միավորները: Միմիայն վարչական ենթակայության: Անհրաժեշտ է ընդգծել, որ ՍՍՀՄ վարչատարածքային միավորները, ներառյալ նաև ինքնավար միավորները, մաս էին կազմում միասնական և մեկ միջազգային ինքնություն (international personality) ունեցող ՍՍՀՄ-ին և բնավ ոչ այն հանրապետություններին, որոնց միջոցով նրանց ենթակայությունը միջնորդավորված էր պետությանը: Պետությունը մեկն էր՝ ՍՍՀՄ-ը: Ինչպես, օրինակ, Հայաստանի Հանրապետության ցանկացած բնակավայր այսօր մաս է կազմում Հայաստանի Հանրապետությանը, թեև նրա ենթակայությունը միջնորդավորված է մարզային ենթակայությամբ:

Այսու, միջազգային իրավունքի տեսանկյունից անհեթեթ է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը սահմանափակել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի, այսպես կոչված, սահմանով: Սա նշանակում է ստալինյան սահմանադրությանը գերակայություն տալ միջազգային իրավունքի անբեկանելի սկզբունքների, տվյալ դեպքում՝ jus cogens-ի կարգավիճակ ունեցող ազգային ինքնորոշման իրավունքի նկատմամբ:

Եթե Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իր ինքնորոշման իրավունքն իրականացնի Հայաստանի Հանրապետությանը միանալու տարբերակով, ընդ որում, ինքնորոշման դրսևորման ձևը բացառապես նրանց որոշելիքն է, ապա վերոնշյալ հարցերը կմիանան: Սահմանի փաստացի ուղեգծի հարցը երկու հարակից պետությունների որոշելիք խնդիր է՝ երկու պետությունների բացառիկ իրավասության ներքո գտնվող հարց: Այլ պետությունները չեն կարող անել այլ բան, քան ընդունել այդ երկու պետությունների որոշածը (The actual course of a boundary is a matter to be determined by the two adjacent States, a question subject to the exclusive competence of the two States. Other States cannot

but accept what these two States decide):

Հաճախ խոսելով ինքնորոշման իրավունքի մասին, այդ իրավունքը հակադրում են, այսպես կոչված, «տարածքային ամբողջականության» սկզբունքին և դրա համար վկայաբերում են հիմնականում երկու փաստաթուղթ՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը (UN Charter) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտը (1-ը օգոստոսի, 1975թ.) (Conference on Security and Co-operation in Europe, Final Act):

Նախ՝ առաջին փաստաթղթի մասին: ՄԱԿ-ի կանոնակարգի առաջին իսկ հոդվածում ամրագրված են այդ կազմակերպության նպատակներն ու սկզբունքները: Առաջին հոդվածի 2-րդ կետն արձանագրում է. «Միավորված ազգերի նպատակներն են. 1. … 2. զարգացնել ազգերի միջև բարեկամական հարաբերությունները՝ իրավահավասարության սկզբունքի հարգանքի և ժողովուրդների ինքնորոշման հիման վրա, ինչպես նաև ձեռնարկել այլ համապատասխան քայլեր ամրապնդելու համար համընդհանուր խաղաղությունը» (The Purposes of the United Nations are: 1. … 2. To develop friendly relations among nations based on respect for the principle of equal rights and self-determination of peoples, and to take other appropriate measures to strengthen universal peace):

Վերոշարադրյալից հստակ է, որ ՄԱԿ-ը ժողովուրդների ինքորոշումը (շեշտում եմ՝ ինքնորոշումը և ոչ թե պարզապես ինքնորոշման իրավունքը, այսինքն՝ այդ իրավունքի կենսագործումը) դիտարկում է ոչ միայն որպես իր հիմնարար սկզբունքներից մեկը, այլև հիմք ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև համընդհանուր խաղաղության ամրապնդման համար: Հետևաբար ինքնորոշման մերժումը բարեկամությունը խաթարող և համընդհանուր խաղաղությունը սասանող քայլ է:

Ի լրումն, ՄԱԿ-ի կանոնակարգը (հոդված 24, կետ 2) միանշանակորեն շեշտում է, որ «Այս պարտականությունները [նկատի ունի խաղաղության և անվտանգության պահպանումը] կատարելիս, ՄԱԿ-ի Անվանգության խորհուրդը պիտի գործի Միավորված ազգերի նպատակներին և սկզբունքներին համապատասխան»: (In discharging these duties [the maintenance of international peace & security] the Security Council shall act in accordance with the Purposes & Principles of the United Nations): Այսինքն, Անվտանգության խորհուրդը պարտավորված է խաղաղության և անվտանգության պահպանումը զուգորդել և իրականացնել ժողովուրդների ինքնորոշման ճանապարհով, քանի որ վերջինս հանդիսանում է ՄԱԿ-ի հռչակած նպատակներից մեկը:

Ինչ վերաբերում է տարածքային ամբողջականության պահպանմանը, ապա նման հասկացություն ներառված չէ ՄԱԿ-ի նպատակների կամ սկզբունքների մեջ: ՄԱԿ-ի կանոնակարգը (հոդված 2-րդ, կետ 4) խոսում է միայն միջազգային հարաբերություններում, արտաքին ուժի կողմից զավթումի ճանապարհով, տարածքային ամբողջականության խաթարման անընդունելության մասին. «Բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի սպառնալիքից կամ օգտագործումից…» (All Members shall refrain in their international relations from the threat or use of force against the territorial integrity or political independence of any state…):

Այսինքն, խոսքը պետության տարածքային ամբողջականության բացարձակ և անվերապահ պահպանման մասին չէ, այլ միայն ՄԱԿ-ի անդամ մեկ պետության կողմից այլ պետության տարածքային ամբողջականության ուժային խախտման անընդունելիության մասին: Սա բնավ կապ չունի մի որևէ առանձնացող հանրության կողմից իր ինքնորոշման իրավունքի կենսագործման, այսինքն՝ սեփական տարածքով անջատման հետ, եթե, իհարկե, տվյալ հանրությունը կուզի ինքնորոշման իրավունքն իրականացնել անկախության ձևով: Անհրաժեշտ է ընդգծել, որ միմիայն տվյալ հանրության իրավունքն է որոշելու իր ինքնորոշման վերջնածևը՝ կլինի դա անկախ երկիր, անդամակցում դաշնային պետությանը, ինքնավարություն, թե լրիվ տարրալուծում որևէ պետության կազմում:

Բացի այդ պետք է առանձնանշել, որ միջազգային իրավունքի սկզբունքները վերաբերում են միայն միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա կայացած իրողություններին: Այսինքն, տվյալ դեպքում, «որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի սպառնալիքից կամ օգտագործումից» ձեռնպահ մնալու սկզբունքը կարող է վերաբերել օրինապես կայացած պետական միավորներին և միջազգային իրավունքի վրա հստակեցված և ամրագրված սահմաններին, այլ ոչ թե կուսակցական որոշումներով գծված վարչա-տարածքային բաժանարար գծերին:

Միջազգային իրավունքի մասնագետների մեծ մասը ներկայումս ընդունում է, որ ինքնորոշումն իրավական սկզբունք է, ի տարբերություն, այսպես կոչված, տարածքային ամբողջականության: Ըստ այդմ, ակնհայտ է, որ հարցի քաղաքական կողմը չի կարող խաթարել նրա իրավական էությունը: Ավելին, ինքնորոշման սկզբունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի՝ jus cogens-ի, մաս է հանդիսանում, հետևաբար այն անսակարկելի է ու անբեկանելի:

ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովը 637A(VII) բանաձևով (16 դեկտեմբերի, 1952թ.) հայտարարել է. «ՄԱԿ-ի անդամ երկրները պետք է սատարեն բոլոր ժողովուրդների և ազգերի ինքնորոշման սկզբունքի [իրականացումը]» (“The States Members of the United Nations shall uphold the principle of self-determination of all peoples and nations”: Խիստ կարևոր է, որ ՄԱԿ-ի կողմից ընդունած փաստաթղթերն ինքնորոշման իրավունքը [հարգումը] մեկնաբանում են որպես ՄԱԿ-ի կանոնակարգից բխող պարտավորությունների մաս (…regards the principle of self-determination as a part of the obligations stemming from the Charter):

Մյուս կարևորագույն միջազգային փաստաթուղթը, որը հաճախ է վկայակոչվում տարածքային ամբողջականության մասին խոսելիս, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտն է (1-ը օգոստոսի, 1975թ.) (Conference on Security and Co-operation in Europe, Final Act): Վերջինս առավելապես հայտնի է Հելսինկիի եզրափակիչ ակտ անունով (Helsinki Final Act):

Ասվում է՝ իբր նշյալ փաստաթուղթը հռչակում է տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության դրույթները: Բնավ ո՛չ և ճիշտ հակառակը: Հելսինկիի եզրափակիչ ակտը (բաժին 1-ին, ենթաբաժին ա, մաս I, պարբերություն 2-րդ) միանշանակորեն հայտարարում է, որ պետությունների սահմանները կարող են փոփոխվել, և նշված են փոփոխման ուղիները. «Նրանք [մասնակից պետությունները] համարում են, որ իրենց սահմանները կարող են փոփոխվել միջազգային իրավունքին համապատասխան, խաղաղ միջոցներով և համաձայնությամբ» (They [the participating States] consider that their frontiers can be changed, in accordance with international law, by peaceful means and by agreement):

Եզրափակիչ ակտը հստակեցնում է (բաժին 1-ին, ենթաբաժին ա, մաս II, պարբերություն 1-ին), որ «անընդունելի են արտաքին ուժի կողմից զավթման միջոցով տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության ոտնահարումը». [Եզրափակիչ ակտին] Մասնակից-երկրներն իրենց փոխհարաբերություններում, ինչպես նաև ընդհանրապես միջազգային հարաբերություններում, ձեռնպահ կմնան որևէ երկրի տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի սպառնալիքից կամ կիրառումից…» (The participating

States will refrain in their mutual relations, as well as in their international relations in general, from the treat or use of force against the territorial integrity or political independence of any State…):

Այսու, ակնահայտ է, որ Հելսինկիի եզրափակիչ ակտը, ինչպես վերը նշվեց ՄԱԿ-ի կանոնակարգի դեպքում, խոսում է ոչ թե տարածքային ամբողջականության բացարձակ և անվերապահ պահպանման մասին, այլ միայն արտաքին զինված ներխուժման հետևանքով տարածքային ամբողջականության խաթարման անընդունելության մասին: Այսինքն, խոսքը Հելսինկիի եզրափակիչ ակտը ստորագրած մի երկրի կողմից նույն ակտը ստորագրած մեկ այլ երկրի վրա ռազմական հարձակման կամ նման սպառնալիքի կիրառմամբ տարածքային ամբողջականությունը խախտելու կամ տվյալ երկրի քաղաքական կարգը փոխելու անընդունելության մասին է: Պետք է մշտապես հիշել, որ Հելսինկիի եզրափակիչ ակտի, ինչպես նաև դրանից առաջ ՄԱԿ-ի կանոնակարգի, բուն նպատակը եղել և մնում է, միջպետական հարաբերություններում ուժի կամ ուժի սպառնալիքը արգելելու միջոցով, խաղաղության և անվտանգության ապահովումը, և ոչ թե սահմանների հավերժացումը կամ պետությունների տարածքներին «սրբազան կովի» կարգավիճակի շնորհումը: Ազգային ինքնորոշումը միջազգային իրավունքի այն հիմնարար սկզբունքներից է, որի միջոցով օրինապես փոփոխվել (ՍՍՀՄ, Չեխոսլովակիա, Գերմանիա, Հարավսլավիա և այլն) և փոփոխվելու են (Սերբիա) պետությունների սահմանները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարել է եզրակացնել, որ ո՛չ ՄԱԿ-ի կանոնակարգի մեջ և ո՛չ էլ Հելսինկիի եզրափակիչ ակտում չկան «տարածքային ամբողջականության» կամ «սահմանների անձեռնմխելության» հիմնադրույթներ: Նշյալ փաստաթղթերում առկա է միայն փաստաթղթերը ստորագրած երկրների կողմից ուժի կամ ուժի սպառնալիքի միջոցով տարածքային ամբողջականությունը չխախտելու և սահմանները չփոփոխելու հանձնառություն:

...ո՛չ ՄԱԿ-ի կանոնակարգի մեջ և ո՛չ էլ Հելսինկիի եզրափակիչ ակտում չկան «տարածքային ամբողջականության» կամ «սահմանների անձեռնմխելության» հիմնադրույթներ: Նշյալ փաստաթղթերում առկա է միայն փաստաթղթերը ստորագրած երկրների կողմից ուժի կամ ուժի սպառնալիքի միջոցով տարածքային ամբողջականությունը չխախտելու և սահմանները չփոփոխելու հանձնառություն:

Այսպիսով, եթե Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքի ազատ և խաղաղ դրսևորմանը (ցույցեր, հանրահավաքներ, հանրաքվեներ, հայցադիմումներ, կոչեր և այլն) հակադրել է բռնի ուժ, խաղաղ բնակչության դեմ, ներքին զորքերի օգտագործմամբ, ձեռնարկել է ոչ համարժեք պատժիչ գործողություններ, պետականորեն կազմակերպել է Ադրբեջանի հայ քաղաքացիների ջարդեր (Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ և այլն), իր իսկ քաղաքացիների նկատմամբ, վարձկանների օգտագործմամբ (ուկրաինացիներ, աֆղաններ, ռուսներ և այլն), սանձազերծել է անողոք պատերազմ ու խայտառակ պարտություն է կրել, որի հետևանքով կորցրել է վերահսկողությունը իրենը համարվող տարածքի մի մասի նկատմամբ, ապա դա բնավ կապ չունի նշածս փաստաթղթերում հիշատակվող տարածքային ամբողջականության պահպանման կամ սահմանների անձեռնմխելիության հասկացությունների հետ:

4. Ամբողջացնելու համար մեր փորձաքննությունը անհրաժեշտ է մեկնաբանել մի խիստ տարածված մոլորություն, այն է, որ միջազգային հանրությունը ՍՍՀՄ կազմից անկախացող երկրներին ճանաչել է ՍՍՀՄ ներվարչական սահմաններով: Անդրադառնանք հարցի ընթացքին և իրավական կողմին:

1991-ի դեկտեմբերի 16-ին Բրյուսելում Եվրոպական համայնքի (European Community) երկրների արտաքին գործերի նախարարները Եվրոպական խորհրդի խնդրանքով իրենց դիրքորոշումն անկախության ուղին բռնած երկրների ճանաչման գործընթացի նկատմամբ ամփոփեցին մեկ միասնական հռչակագրի մեջ: Փաստաթուղթը պաշտոնապես անվանված է. Հռչակագիր «Արևելյան Եվրոպայում և Սովետական Միության [տարածքում] նոր պետությունների ճանաչման ուղենիշների» վերաբերյալ (Declaration on the “Guidelines on the Recognition of New States in Eastern Europe and in the Soviet Union”): Միջազգային իրավունքում հռչակագիրը (declaration), անկախ ստորագրողների քանակից, միակողմանի փաստաթուղթ է (unilateral act): Այսինքն, այն քաղաքական դիրքորոշման արտահայտում է, սակայն կատարման համար պարտադիր իրավական փաստաթուղթ չէ, թեև կարող է լինել նաև այդպիսին, եթե դրանում ամրագրված են ստանձնվող հանձնառություններ: Քանի որ Եվրոպական խորհուրդը, որի խնդրանքով մշակվել է միասնական դիրքորոշումը, ինչպես նաև արտգործնախարարների հավաքը, պաշտոնական կառույցներ չեն (որովհետև նրանց գոյությունն ու լիազորությունները ամրագրված չեն Եվրամիութենական պայմանագրերի մեջ), ուստի, նշյալ փաստաթուղթը առավելապես քաղաքական բնույթի է, քան իրավական:

Հռչակագրի նախաբանում արտահայտված է փաստաթղթի էությունը. «Համայնքը և նրա անդամ երկրները վերահաստատում են իրենց հավատարմությունը Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի և Փարիզի ուխտի սկզբունքների նկատմամբ, հատկապես՝ ինքնորոշման»: (The Community and its Member States confirm their attachment to the principles of the Helsinki Final Act and the Charter of Paris, in particular the principle of the self-determination.)

Այստեղ առկա է կարևոր մի քանի հանգամանք.

ա) վերոնշյալ փաստաթղթի հիմքը հավատարմությունն է ազգերի ինքնորոշման սկզբունքի նկատմամբ, քանի որ նախաբանում առանձնանշված է միայն այդ սկզբունքը,

բ) անկախացող երկրների ճանաչումը ինքնորոշման սկզբունքի իրականացում է,

գ) անկախության ճանաչումը պայմանավորված չէ տվյալ երկրի մեջ գոյություն ունեցող վարչական միավորի կարգավիճակով կամ ընդհանրապես որևէ վարչական միավորի առկայությամբ կամ սահմաններով,

դ) չկա որևէ հիշատակում, այսպես կոչված, տարածքային ամբողջականության մասին:

Մինչև փաստաթղթի կետերի վերլուծմանն անցնելը, անհրաժեշտ է շեշտել միջազգային իրավունքի մի խիստ կարևոր սկզբունք՝ փաստաթղթերը գործում են ամբողջության մեջ և նրա կետերը փոխկապակցված են: Այսինքն, եթե կողմերից մեկը չի իրականացնում պարտավորություն պարունակող որևէ դրույթ, դրանով նա խաթարում է փաստաթղթի ողջ էությունը և չի կարող վկայակոչել տվյալ փաստաթղթի իր համար իրավունքներ պարունակող կետերը:

Հռչակագրի առաջին կետն իր «հարգանքն է հայտնում ՄԱԿ-ի կանոնակարգի հիմնադրույթների, Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի և Փարիզի ուխտի պարտավորությունների նկատմամբ, հատկապես նրանց, որոնք վերաբերում են օրենքի իշխանությանը, ժողովրդավարությանը և մարդկային իրավունքներին» (especially with regard to the rule of law, democracy and human rights):

Ակնհայտ է՝ այստեղ առանձնանշված են օրենքի իշխանությունը, ժողովրդավարությունը և մարդկային իրավունքները: Սկզբունքներ, որոնք ո՛չ անկախացումից առաջ, և ո՛չ էլ անկախացումից հետո երբեք չեն հարգվել Ադրբեջանի, և

ոչ էլ Վրաստանի, կողմից, հատկապես այդ երկրի հայազգի քաղաքացիների նկատմամբ:

Երկրորդ կետը խոսում է «էթնիկ, ազգային խմբերի և փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման մասին» (guarantees for the rights of ethnic and national groups and minorities): Իրավունքներ, որոնք դարձյալ երբեք չեն հարգվել Ադրբեջանի կողմից:

Միայն երրորդ կետում կա հիշատակում «բոլոր սահմանագծերի անձեռնմխելիության հարգանքի» (respect for the inviolability of all frontiers) մասին և միաժամանակ նշված է դրանց փոփոխելու հնարավորությունը՝ «խաղաղ ճանապարհով և ընդհանուր համաձայնությամբ» (by peaceful means and by common agreement): Պետք է շեշտել, որ խոսքը բնավ չի գնում «սահմանների ճանաչման» (recognition of the boundaries), այլ միայն «բոլոր սահմանագծերի անձեռնմխելիության հարգանքի» (respect for the inviolability of all frontiers) մասին, որն էլ հստակորեն պայմանավորված է տվյալ անկախացող երկրի որոշակի վարքագծով:

Քանի որ, ինչպես նշեցինք վերը, Հռչակագիրը խարսխված է Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի, Փարիզի ուխտի, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնակարգի, սկզբունքների վրա, ուստի, «սահմանների անձեռնմխելիություն» (ճիշտ տերմինն է սահմանագծերի, ինչպես գրված է վերը) հասկացությունը պետք է մեկնաբանվի ըստ այդ փաստաթղթերի: Իսկ այդ փաստաթղթերում խոսքը բնավ էլ սահմանների բացարձակ անձեռնմխելիության մասին չէ, այլ «ուժի կամ ուժի սպառնալիքի» կիրառմամբ դրանց փոփոխելիության անընդունելիության մասին:

Ամփոփելով Եվրամիության կողմից նախկին սովետական և արևելաեվրոպական մի շարք երկրների ճանաչման ուղենիշների քննությունը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Փաստաթղթի հիմքն ինքնորոշման սկզբունքն է, որը չի սահմանափակված միայն որևէ միութենական հանրապետությունով կամ վարչական այլ միավորով:

2. Հաջորդականության սկզբունքի կիրառմամբ օրենքի իշխանությանը, ժողովրդավարությանը և մարդկային իրավունքներին մնացած բոլոր սկզբունքների նկատմամբ տրվել է առաջնային կարգավիճակ:

3. Որպես երկրորդ հիմնական սկզբունք Հռչակագիրը վկայակոչում է էթնիկ, ազգային խմբերի և փոքրամասնությունների իրավունքների երաշխիքը:

4. Ուղենիշների մեջ չկա ճանաչվող կազմավորումների սահմանների բացարձակ անձեռնմխելիության սկզբունք, այլ հարգանք այդ սկզբունքի նկատմամբ և սահմանների փոփոխման հնարավորություն խաղաղ ճանապարհով և ընդհանուր համաձայնությամբ:

Հետևաբար.

ա) «սահման» ասածը և «սահմանների անձեռնմխելիություն» ասածը պետք է հասկանալ միջազգային իրավունքի տեսանկյունով. ՍՍՀՄ վարչական բաժանարար գծերը չեն եղել սահմաններ:

բ) Ադրբեջանը, որը կոպտորեն, բազմիցս և հետևողականորեն ոտնահարել է և ոտնահարում է Հռչակագրի մեջ ամրագրված սկզբունքները, չի կարող վկայակոչել նույն փաստաթղթի միայն մի կետը և փորձ անել իր իրավունքները պաշտպանել դրանով:

Ամփոփում

1. Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության և Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության վարչական բաժանարար գիծը երբեք սահման չի եղել, հետևաբար տեղին չէ խոսել «սահմանների անձեռնմխելիության» մասին:

2. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության վարչական բաժանարար գիծը երբեք սահման չի եղել, հետևաբար տեղին չէ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը սահմափակել ստալինակերտ մարզի վարչարարության պարագծով:

3. Մինսկի եռանախագահության անդամները լիազորված չեն դատողություններ անելու տարածքների պատկանելության կամ սահմանների վերաբերյալ. նրանք իրավարարներ չեն, նրանք միայն միջնորդներ են:

4. Հայ-ադրբեջանական, ինչպես նաև հայ-վրացական, սահմանների վերաբերյալ միջազգային հանրության քաղաքական կամքի վերջին օրինական դրսևորումը եղել է Փարիզի խաղաղության վեհաժողովի (1919-1920թթ.) ad hoc հանձնաժողովի 1920թ.-ի փետրվարի 24-ի զեկույց-առաջարկը:

5. Նախորդ (4-րդ կետում նշված) փաստաթղթի դրույթները ամրագրված են Սևրի պայմանագրում, հետևաբար հանդիսանում են այն ստորագրած երկրների քաղաքական կամքի դրսևորումը:

Եզրակացություն

Հայ-ադրբեջանական սահմանի վերաբերյալ միակ օրինական փաստաթուղթը Փարիզի վեհաժողովի հատուկ հանձնաժողովի 1920-ի փետրվարի 24-ի զեկույց-առաջարկն է, որով Ազգերի լիգային էր վերապահված հայ-ադրբեջանական սահմանազատումը: Ուստի, ՄԱԿ-ը՝ որպես Ազգերի լիգայի իրավահաջորդ, և մասնավորապես ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը՝ որպես Գլխավոր դաշնակից ուժերի տեղապահ, պարտավորություն ունեն կենսագործել այդ սահմանազատումը՝ հիմք ընդունելով 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերի ազգային տեղաբաշխման տվյալները:

Ներկա ազգային տեղաբաշխումը չի կարող հիմք հանդիսանալ սահմանազատման համար, քանզի այն առաջացել է Ադրբեջանի հանցավոր հայաթափման՝ էթնիկ զտման, քաղաքականության հետևանքով, իսկ հանցագործության հետևանքները չեն կարող առաջացնել իրավունքներ՝ Ex injuria non oritur jus:

ԱՐԱ ՊԱՊՅԱՆ
29 հոկտեմբերի, 2008թ.

ՄԵԹՅՈՒ ԲՐԱՅԶԱ. ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ՍԿՍՎԻ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ամերիկացի դիվանագետը, անդրադառնալով տարածքային ամբողջականության սկզբունքին, ասաց, որ «Ադրբեջանը ունի իր տեսակետը, իսկ մենք ասում ենք, որ ղարաբաղյան խաղաղ համաձայնագիրը պետք է սկսվի տարածքային ամբողջականությունից, որովհետեւ այդ սկզբունքը գործում է ողջ աշխարհում: Սակայն համաձայնագիրը չի կարող լինել, եթե նրանում չլինեն կետեր Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման որոշակի աստիճանի եւ կարգավորման գործընթացում ուժ չգործադրելու վերաբերյալ»:

Բրայզան հույս հայտնեց, որ ֆորմալ առումով Ղարաբաղը մի օր կմիանա բանակցություններին, «բայց հիմա էլ միացած են բանակցություններին, քանի որ մենք այցելում ենք Խանքենդի/Ստեփանակերտ, մենք լսում ենք խորհրդարանի անդամներին, տեղի քաղաքական գործիչներին»:

Ադրբեջանցի լրագրողի հարցին՝ «Ուրեմն դուք ճանաչո՞ւմ եք Ղարաբաղը, քանի որ ասում եք՝ այցելում եք Ղարաբաղ, հանդիպումներ ունենում խորհրդարանում», Բրայզան վրա բերեց. «Ո՛չ, ո՛չ, բայց Ղարաբաղում կա մի կառույց, որը կոչվում է խորհրդարան, այդ մարդկանց հետ մենք հանդիպում ենք, պետք է լսել նրանց կարծիքը: Ես չեմ ասում, թե պաշտոնապես ճանաչում ենք Ղարաբաղի խորհրդարանը»: **(«Ազգ», 05.12.2008թ.)**

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

(Սկիզբը՝ թիվ 2/13-ում)

1993թ. նոյեմբերի սկզբներին Բաքուն հանդես եկավ մի քանի երկրների, այդ թվում Թուրքիային ուղղված՝ շտապ զինվորներ ուղարկելու կոչով, իսկ վարչապետ Հասան Հասանովը 1993թ. նոյեմբերի 2-ին և 12-ին Թուրքիա կատարած իր այցերի ընթացքում հանդիպում ունեցավ Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ Դողան Գյուրեշի հետ՝ վերջինիս խնդրելով ավելի շատ ադրբեջանցի սպաներ պատրաստել:

Կասկածից վեր է, որ 1993թ. վերջերին ադրբեջանական բանակը լայնածավալ հարձակման էր պատրաստվում: Եվ պատահական չէ, որ այս ընթացքում Անկարան թուրքական բանակի 5000 զինվոր տրամադրեց Ադրբեջանի Գլխավոր շտաբին: Այս գաղտնի տեղեկությունը հայտնվեց մամուլի էջերում և թուրքական «Այդընլըք» թերթի լրագրողը հիշյալ փաստը հրապարակելու համար ձերբակալվեց: 1993թ. դեկտեմբերի կեսերին ադրբեջանական բանակը նոր լայնածավալ հարձակում ձեռնարկեց ղարաբաղյան ճակատում: Հարձակման սկզբում, ի հաշիվ հսկայական մարդկային և նյութական կորուստների, ադրբեջանական ուժերին հաջողվեց զբաղեցնել նախկինում կորցրած դիրքերը: «Միլլիյեթի» թղթակից Թունջա Բենգինը ադրբեջանական ուժերի 1994թ. հունվարին ձեռք բերած հաջողությունները պայմանավորում էր թուրքական զինվորական տեսուչների և խորհրդականների երկամսյա արդյունավետ գործունեությամբ: Իսկ «Հյուրիյեթ» թերթը նշում էր Ադրբեջանում գործող բարձրաստիճան թուրք զինվորականների կոնկրետ թիվը՝ 256: Սակայն, Բաքվի այս հաջողությունները ժամանակավոր էին, և ադրբեջանական բանակը, կրկին ուժասպառ լինելով, լքեց զբաղեցրած տարածքների մեծ մասը:

1994թ. փետրվարին, երբ պարզ էր, որ ձմեռային ռազմարշավը տապալման առջև է կանգնած, Անկարա կատարած պաշտոնական այցի ընթացքում Ս. Դեմիրելի և վարչապետ Թ. Չիլլերի հետ հանդիպման ժամանակ Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը խնդրեց մեծ թվով թուրքական սպաներ ուղղարկել Ադրբեջան՝ ադրբեջանական բանակը մարզելու: Թուրքական ղեկավարությունը խոստացավ ամեն տեսակի օգնություն: Այս առումով հետաքրքիր են 1994թ. մայիսին Ս. Դեմիրելի և Ղրիմի թաթարների առաջնորդ Մուստաֆա Ջեմիրօղլուի միջև կայացած զրույցի որոշ դրվագները. խոսելով Բոսնիայի մահմեդականներին ցուցաբերվող աջակցության մասին, Դեմիրելը շարունակել է. «Ազերիները նույնպես պետք է շարադրեն իրենց դյուցազներգությունը: **Մենք Ադրբեջանում արել ենք այն ինչ հնարավոր էր: Կան միջոցառումներ, որոնց մասին չեմ կարող խոսել, բայց մենք չէինք կարող թույլ տալ քրիստոնեության և մահմեդականության ընդհարում Ադրբեջանում** (ընդգծումը մերն է - Հ. Դ.): Ես արկածախնդիր չեմ և թույլ չեմ տա, որ իմ երկիրն արկածախնդիր դառնա: Դրա համար էլ այն ուժերին, ովքեր պահանջում էին գնալ Ադրբեջան, ես պատասխանում էի, եթե գնանք, կբախվենք Ռուսաստանի հետ»:

Թուրք ու այլազգի վարձկանների հավաքագրման և Ադրբեջան տեղափոխելու հանգրվան էր դարձել այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության տարածքը: Այստեղ անգլիացի լորդ էրսկինի և թուրք գործարար Մուստաֆա Մութլուի նախաձեռնության դիմաց ադրբեջանական կողմը պարտավորվել էր տարեկան 150 մլն ֆունտ ստեռլինգի նավթ մատակարարել Մեծ Բրիտանիային: Ընդ որում, այդ գործարքի մասին իրազեկ է եղել նաև բրիտանական արտգործնախարարությունը. էրսկինը, հանդես գալով որպես «Սամմիտ լիմիթեդ» ընկերության խորհրդական, բանակցություններ է վարել ադրբեջանական բարձրաստիճան պաշտոնյաների հետ վարձկաններ տրամադրելու հարցի շուրջ: Հյուսիսային Կիպրոսի տարածքը պատահական չէր ընտրված, քանզի այստեղ չէր գործում հակամարտող կողմերի հետ զենքի առքուվաճառքի և մյուս արգելամիջոցները:

Ղարաբաղյան ճակատներում դեպքերի հետագա զարգացումը ի վնաս Ադրբեջանի չէր կարող չանհանգստացնել Անկարային, որտեղ նույնիսկ 1994թ. մայիսյան հրադադարի ստորագրումից հետ չէին հրաժարվել հակամարտության գոտում թուրքական ռազմական ներկայություն ապահովելու մտքից՝ այս անգամ «խաղաղարար ուժեր» անվան տակ: Թուրքական «բազեների» ռազմաշունչ հայտարարություններն այս անգամ պայմանավորվեցին ռուս-թուրքական հարաբերություններում առկա լարվածությամբ. կապված թուրքական կողմի՝ սևծովյան նեղուցների ռեժիմի միակողմանի վերանայման որոշման հետ: «Մենք պատրաստ ենք Ղարաբաղյան հակամարտության գոտի ուղարկել այնքան զինվոր, որքան կխնդրի ադրբեջանական կառավարությունը»,- հայտարարեց թուրքական զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ Դողան Գյուրէշը 1994թ. հուլիսին՝ Բաքու կատարած այցի ընթացքում: Անդրադառնալով հայկական կողմի հայտարարությանը, համաձայն որի, ո՛չ Երևանը և ո՛չ էլ Ստեփանակերտը ոչ մի դեպքում համաձայն չեն լինի Ղարաբաղյան հակամարտության գոտում թուրքական ռազմական ներկայությանը, նա շեշտեց, որ սերբերը նույնպես դեմ էին թուրքական ներկայությանը, սակայն ներկա պահին Բոսնիայում են գտնվում 1500 թուրք զինվորներ:

Ի պատասխան այս հանդուգն հայտարարության, Մոսկվայից կրկին սթափեցնող արձագանք հետևեց: Այս անգամ Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը բավականին խիստ ձևով նշեց. «Մենք թույլ չենք տա թուրքական զորքերի միջամտությունը», ավելացնելով, որ «Ռուսաստանն իր սեփական շահերն ունի Ադրբեջանում»: Ավելի ուշ Պ. Գրաչովը, գլխավորելով ռուսական բարձրաստիճան զինվորական պատվիրակության այցը Հայաստան, անդրադառնալով Դ. Գյուրեշի հիշյալ հայտարարությանը, ոչ երկիմաստ նշեց, որ Հայաստան իր այցը թուրքական կողմին կստիպի ավելի սթափ խորհրդածել:

Տարիներ անց՝ 1996թ. նոյեմբերի 11-ին, Բաքվում գտնվող թուրքական բանակի ցամաքային ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Հիքմեթ Քոքսալը, հայտնելով թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժություններ անցկացնելու մտադրության մասին, զգուշացրեց, որ հայկական ուժերի հետ զինադադարի խախտման դեպքում Թուրքիան կարող է աջակցություն ցույց տալ Ադրբեջանին՝ «միջազգային սկզբունքների շրջանակներում»: Այն փաստը, որ ԱՄՆ-ը Թուրքիայի կառավարությանը մտահոգություն հայտնեց Ադրբեջանին ցույց տրվող թուրքական աջակցության կապակցությամբ, արդեն իսկ վկայում է ցացաբերված օգնության ծավալների ու վտանգավորության մասին:

1992թ. Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքված պայմանագրերի թվում էր նաև ռազմական համագործակցության մասին համաձայնագիրը, որով երկու կողմերը պարտավորվում էին օգնության հասնել միմյանց՝ երրորդ պետության կողմից իրականացված ագրեսիայի դեպքում: Սակայն այս համաձայնագիրն ուներ շատ կարևոր մի վերապահում, այն կիրառելի էր միայն ՄԱԿ-ի և միջազգային համաձայնագրերի սկզբունքներին համաձայն: Սա, փաստորեն, բացառում էր Թուրքիայի անմիջական ռազմական միջամտությունը Ղարաբաղյան հակամարտության ոլորտ, քանզի նման քայլ ձեռնարկելուց առաջ Թուրքիան պետք է ստանար իր դաշնակիցների համաձայնությունը, մյուս կողմից, Հայաստանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից պետք է ճանաչվեր ագրեսոր, որպեսզի արդարացվեր Թուրքիայի ռազմական միջամտությունը:

(Շարունակելի)

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

«ՆԵՄԵՍԻՍ» ՆՎԻՐՅԱԼՆԵՐԻՑ՝ ԳՐԻԳՈՐ ՄԵՐՋԱՆՈՎ

Հայ ազատամարտի առավել իրատես գործիչներից է, ազգային-ազատագրական շարժման մարտիկ Գրիգոր Մերջանովը: Ծնունդով բուլղարահայ (25.03.1880, Ադրիանուպոլիս - ՞), երկար ժամանակ ապրել է արտասահմանում: Երիտասարդ տարիքում ընդունվել է ՀՅԴ շարքերը: Ժնևում մասնագիտացել է պայթուցիկ նյութերի պատրաստման մեջ: Նա գործուն մասնակցություն է ունեցել 1905թ. հուլիսի 21-ին Սուլթան Համիդի դեմ մահափորձի կազմակերպմանը: 1905-06թթ. ակտիվորեն մասնակցել է Կովկասում հայ-թաթարական բախումներին՝ մեծապես նպաստել է Զանգեզուրի և Ղարաբաղի պաշտպանական գործերին: 1915-ին ձերբակալվել է թուրքական իշխանությունների կողմից, սակայն, կարողացել է ազատվել և անցնել Բուլղարիա: 1916-18թթ. ծառայել է բուլղարական բանակում: 1918-ին Կ.Պոլսում ահաբեկել ցեղասպանությանը նպաստած անձանց: 1919թ. Երևանում կայացած ՀՅԴ IX համագումարում ընտրվել է «Նեմեսիսի» (թուրք դահիճներին պատժելու գործողություն) ղեկավար կազմում՝ դառնալով Շահան Նաթալիի օգնականը: Անձամբ է ղեկավարել 1921թ. դեկտեմբերի 5-ին Հռոմում Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմի ահաբեկումը: 1922-ին դուրս է ելկել ՀՅԴ-ից...

Բնավորությամբ շիտակ, հայացքներով իրատես Մերջանովը իր հուշագրությունների մեջ «Իմ կտակը» (Բեյրութ, 1972թ.) անկեղծորեն խոսում է առանձին քաղաքական գործիչների անսկզբունքայնության, անհեռատես քաղաքականության մասին:

Գրիգոր Մերջանով որոշ ժամանակ ապրել է Փարիզում, ուր և մահացել է անհայտության մեջ: Մահվան տարին անգամ անհայտ է:

Նրա «Իմ կտակը» հուշագրությունը արժեքավոր փաստեր է պարունակում Հայ ազատագրական պայքարի և հատկապես «Նեմեսիս» գործողության ընթացքի, նրա անդամների մասին: Մերջանովը հիացմունքով է խոսում Շահան Նաթալիի, Հրաչ Փափազյանի և հատկապես Արամ Երկանյանի մասին, նրան բնորոշելով՝ «...իտեալ ահաբեկիչ մը...»:

Արամ Երկանյանի երդումը

«...12 տարեկան էր, երբ հայրը վերադառնալով արտասահմանից, բերեց Վենետիկի Մխիթարյանների տպագրած գիրքը՝ 1894-96թթ. և 1909-ի Ադանայի սահմռկեցուցիչ ջարդերի մասին: Կարդացածից ցնցված ու տպավորված՝ պատանի Արամը երդվեց . «Ես վրիժառու կդառնամ»:

ՀԱԿՈԲ ՄԱՆՋՅԱՆ

Ո՞վ է, ի՞նչ է ԱՍԱԼԱ-ն: Օտար պետությունների հզոր հովանավորությունը վայելող գաղտնի կազմակերպությո՞ւն, թե՞ մի բուռ սրբազան խենթեր, որոնք դուրս են եկել անձնազոհ պայքարի՝ նպատակ ունենալով ճեղքել լռության այն պատը, որ գոյություն ուներ Հայ դատի հանդեպ: Ցեղասպանության ճանաչում և հայկական մշակույթի հուշարձանների պահպանություն՝ Թուրքիայում: Այն պահին, երբ ԱՍԱԼԱ-ն ելավ պայքարի (1975թ.), երկու հարցերն էլ հրատապ էին:

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ



ԼԵՎՈՆ ԵՐԿԱԹ

1916-1990: Նահատակվել է ԱՄՆ-ում՝ 2 ապրիլ 1990-ին:

Որպես հայտնի հասարակական գործիչ և հրապարակախոս իր մեծ ներդրումն է ունեցել ազգային ազատագրական պայքարում: Հայկական ժողովրդային շարժման ներկայացուցիչն էր ԱՄՆ-ում:

ԿԱՐԱՊԵՏ ՓԱՇԱԲԵՋՅԱՆ

1941-1983: Նահատակվել է Լիբանանում՝ 12 մարտ 1983-ին:

Նահատակվել է իր դռան շեմին՝ թուրքական հատուկ ծառայությունների փամփուշտներից: Նրա կյանքը համակ նվիրում և զոհողություն էր: Նա անմնացորդ նվիրվեց Հայկական ժողովրդային շարժմանը և նրա միջոցով հայկական նորագույն ազատագրական պայքարին, որի ջերմ նվիրյալներից էր:



ԶԱՎԵՆ ԱՎԵՏՅԱՆ

1958-1981: Նահատակվել է Իրանում:



ԵՂԻԱ ՔԵՇԻՇՅԱՆ

1957-1981: Նահատակվել է Իրանում:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Ցեղասպանությունը ծանրագույն հանցագործություն է՝ համաձայն միջազգային իրավունքի: Դրա իրագործման համար պատասխանատվության ենթարկելու հարցը ծագում է միջազգային իրավունքի հիման վրա և այդ իրավական հիմքի վրա էլ պետք է լուծվի:

Հայոց ցեղասպանության փաստը միջազգային հանրության կողմից ճանաչվել է դեռևս այդ հանցանքի իրագործման՝ 1915-1923թթ. հայերի լիակատար և համատարած ոչնչացման ժամանակ: Այդ ժամանակ դեռ չէր ընդունվել ներկայիս հունա-լատինական եզրույթը, և սույն հանցագործությունը նկարագրորեն բնորոշվում էր որպես «ողջ ազգի սպանություն», որպես «հանցագործություն մարդկայնության դեմ»:

Միջազգային իրավունքի այդ ժամանակ գործած ընդհանուր նորմերի հիման վրա պետությունների միջազգային հանրությունը՝ ի դեմս 1919-1920թթ. Փարիզի խաղաղության խորհրդաժողովի, հաստատել է այդ հանցանքի իրագործման փաստը, համապատասխանաբար, ցեղասպանության զոհ դարձած ժողովրդով մինչ այդ բնակեցված տարածքից զրկելու միջոցով Օսմանյան կայսրության քաղաքական պատասխանատվության, ինչպես նաև ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության հարցերը լուծելով: **Ստորագրելով Սևրի պայմանագիրը՝ Օսմանյան կայսրությունը ճանաչեց այդ հանցագործության համար իր պատասխանատվությունը,** սակայն դրա իրագործումը խափանվեց քեմալական Թուրքիայի և դրա դաշնակից՝ բոլշևիկյան Ռուսաստանի և դրանց հարած Ադրբեջանի համատեղ ջանքերով:

Այդ պահից ի վեր, 90 տարիների ընթացքում, հայ ժողովուրդը ձգտում էր հասնել այդ փաստի իրավաբանական որակման վերահաստատմանը՝ փորձելով հաղթահարել այդ հանցագործությունն իրագործած պետության և դրա այնպիսի շահագրգիռ հովանավորների, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Իսրայելը, հուժկու հակազդեցությունը:

Այսօրվա դրությամբ Հայոց ցեղասպանության փաստը, այս կամ այն ձևով, ճանաչել են 19 երկրների խորհրդարաններ: Հնարավոր է նաև, որ ԱՄՆ-ում նախագահական ընտրությունների ելքով պայմանավորված, այդ փաստը կճանաչի և Վաշինգտոնի արտաքին քաղաքականության նավարկուղով ընթացող պետությունների խումբը:

1. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ինքնիշխան պետություն, **եզակի** հնարավորություն ունի ՄԱԿ-ի Միջազգային դատարանում **միակողմանիորեն** Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության վերաբերյալ գործ հարուցել՝ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա. այդ հոդվածը սահմանում է, որ «Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը նշված Կոնվենցիայի մասնակիցներ են, համապատասխանաբար, 1993թ. հունիսի 23-ից և 1950թ. հուլիսի 31-ից: Ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ Թուրքիան որևէ վերապահում չեն կատարել վերոնշյալ Կոնվենցիայի IX հոդվածի, ինչպես նաև այլ դրույթների առնչությամբ: Այսպիսով, և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Թուրքիայի Հանրապետությունը՝ որպես Կոնվենցիայի մասնակիցներ, ճանաչել են Միջազգային դատարանի իրավազորությունը՝ տվյալ հոդվածով նախատեսված հարցերով:

2. Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշեցնել, որ միջազգային իրավունքում գործում է այն դրույթը, որը հաստատվել է Միջազգային դատարանի կողմից այլ դեպքերով, ըստ որի՝ եթե պետությունը վեճի մեջ մտնելու հնարավորություն ունի, սակայն չի անում այդ, նշանակում է, որ այն համաձայն է գոյություն ունեցող իրավիճակի հետ:

3. Չի բացառվում, որ դատական ընթացակարգին դիմելուց Հայաստանի ձեռնպահ մնալը պայմանավորված է այն մտավախությամբ, որ Թուրքիայի կողմից դա կարող է դիտվել որպես թշնամական ակտ: Նման բնույթի մտավախությունները զուրկ են որևէ իրավական հիմքից, քանի որ դատական ընթացակարգին դիմելը չի կարող դիտվել որպես թշնամական ակտ: Ավելին, ցեղասպանության հանցագործության համար միջազգային իրավական պատասխանատվության հարցը կարգավորելու նպատակով՝ Միջազգային դատարան դիմելը ցանկացած պետության **պարտքն ու պարտավորությունն է,** իսկ Թուրքիայի սպառնալիքներն անհամատեղելի կլինեն ՄԱԿ-ում վերջինիս անդամակցության և Ցեղասպանության մասին կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների հետ:

4. Հնարավոր է նաև, որ դատական ընթացակարգի վերաբերյալ զուսպ վերաբերմունքը պայմանավորված է այն մտավախությամբ, որ Դատարանի կողմից կարող են առաջ քաշվել Կոնվենցիայի հետադարձ գործողության, այսինքն՝ ratione temporis իրավազորության հիմնախնդրի հետ կապված առարկություններ:

Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայի հոդված 28-ը չի բացառում պայմանագրերի հետադարձ գործողությունը, այլ միայն պայմանավորում է դա պայմանագրի կողմերի մտադրության առկայության հետ: Վիեննայի կոնվենցիայի համաձայն՝ միջազգային պայմանագրի հետադարձ ուժի ճանաչման համար անհրաժեշտ է, որպեսզի նման մտադրությունը հետևի պայմանագրից կամ այլ կերպ սահմանվի: Այլ կերպ ասած՝ պայմանագրի հետադարձ կիրառելիությունը թույլատրվում է, եթե նման մտադրությունն արտահայտված է հենց պայմանագրում կամ, եթե դա այլ կերպ է սահմանված: Դրանից բխում է, որ կարող են լինել այնպիսի հարցեր, որոնց կապակցությամբ պայմանավորվող պետությունները կամ նույնիսկ ողջ միջազգային հանրությունը կարող են թույլ տալ կոնվենցիոն նորմերի հետադարձ գործողությունը: Այլ կերպ ասած՝ պայմանագրերի հետադարձ գործողությունը սկզբունքորեն չի ժխտվում, եթե դրանում անհրաժեշտություն կա:

Ո՞վ և ինչի՞ հիման վրա է մերժում Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ ուժը: Պարունակո՞ւմ է այն, արդյոք, հետադարձ կիրառելիություն թույլատրող դրույթներ, թե՞ ընդհակառակը, պատասխանատվություն է սահմանում միայն դրա ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունների համար:

Այն պնդումները, որ, իբր թե Կոնվենցիայի տեսանկյունից, մինչև դրա ուժի մեջ մտնելը կատարված ցեղասպանության ակտերը չեն հանգեցնում պատասխանատվության և պատժելի չեն, առաջ են քաշվում նախկինում նման հանցագործություն կատարածների կողմից: Միջազգային կոնվենցիան, որը հաստատում է, որ ցեղասպանությունը հանցագործություն է մարդկայնության և մարդկության դեմ, չի կարող սահմանափակվել ժամանակի մեջ, եթե նախկին

հանցագործություններով ստեղծված իրավիճակները շարունակում են գոյություն ունենալ:

Ո՛չ Ցեղասպանության մասին կոնվենցիայում, ո՛չ էլ դրա նախապատրաստման նյութերում չկա ոչինչ, ինչը թույլ կտար խոսել կողմերի մտադրության մասին՝ բացառելու դրա կիրառումը ցեղասպանության այնպիսի արարքների նկատմամբ, որոնք թեև կատարվել են մինչև դրա ընդունումը, սակայն դրանց հետևանքները դեռ չեն վերացվել:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1946թ. դեկտեմբերի 11-ին ընդունված հայտնի 96(1) բանաձևը, դեռևս այդ ժամանակ, Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց շատ ավելի վաղ, հաստատել է այն, որ «...ցեղասպանությունը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, հանցագործություն է, որը դատապարտվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից և որի կատարման համար մեղավորները և հանցակիցները ենթակա են պատժի...»:

Նշվում էր, որ «ցեղասպանության հանցագործության համար պատժելը միջազգային հնչանակության հարց է»: Հենց Կոնվենցիայում նման բնույթի նախկին ակտերի՝ որպես ցեղասպանություն որակելն ինքնին խոսում է դրան հետադարձ ուժ հաղորդելու մտադրության մասին:

Եթե միջազգային իրավունքի սովորութային նորմերի կոդիֆիկացման արդյունքում մշակված բազմակողմ նորմա սահմանող կոնվենցիան հաստատում է, որ իր ընդունումից առաջ էլ կատարվել են ցեղասպանության հանցագործություններ, դա պետք է դիտել որպես ոչ միայն «պատմական», այլ նաև իրավաբանական փաստերի հաստատում, որպես հաստատում այն բանի, որ դրա ընդունումից առաջ էլ կատարվել են ցեղասպանության հանցագործության հանցակազմի՝ ինչպես այն ամրագրված է Կոնվենցիայում, ներքո ընկնող հանցագործություններ:

Հենց Կոնվենցիայում մինչև դրա ուժի մեջ մտնելը տեղի ունեցած ցեղասպանության դեպքերի վկայակոչումը նշանակում է, որ «ցեղասպանություն» եզրույթը, այն իմաստով, որով այն կիրառված է Կոնվենցիայում ցեղասպանության միջազգային հանցագործությունը բնորոշելու համար, կարող է կիրառվել այդ իրադարձությունների գնահատման համար ոչ միայն և ոչ թե սոսկ որպես «պատմական փաստերի», այն նաև որպես իրավաբանական կամ պրեյուդիցիար բնույթի փաստերի, այսինքն՝ այնպիսի փաստերի, որոնց հաստատումը հանգեցնում է պատասխանատվության՝ ըստ միջազգային իրավունքի:

Այն, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի գործողությունը չէր կարող սահմանափակվել ժամանակի մեջ հաստատվում է նաև միջազգային պրակտիկայով և, մասնավորապես, գլխավոր նացիստական ռազմական հանցագործների գործով Նյուրնբերգյան դատավարության նյութերով: Եթե նույնիսկ որևէ կասկած է գոյություն ունեցել «նյուրնբերգյան սկզբունքների»՝ որպես «անհիշելի ժամանակներից» սովորութային միջազգային իրավունքի մաս կազմող սկզբունքների գնահատման հարցում, ապա նման կասկածը փարատվել է Նյուրնբերգյան դատարանի կանոնադրությամբ և դատավճռով ճանաչված միջազգային իրավունքի սկզբունքների հաստատման մասին ՄԱԿ-ի բանաձևով: Ինչպես նշված է Միջազգային դատարանի 1951թ. Խորհրդատվական եզրակացության մեջ, Ցեղասպանության մասին կոնվենցիայում ամրագրված սկզբունքները, ի տարբերություն դրանում սահմանված պայմանագրային պարտավորությունների, այդ սարսափելի հանցագործությունների կատարման ժամանակ արդեն իսկ սովորութային միջազգային իրավունքի մաս էին կազմում:

Քանի որ հրեաների ցեղասպանության համար նացիստական Գերմանիայի պարագլուխների պատասխանատվությունն ունի այն նույն միջազգային իրավական հիմքերը, ինչ որ և Հայոց ցեղասպանության համար թուրքերի և Թուրքիայի պատասխանատվությունը, ուստիև Նյուրնբերգյան դատարանի դիրքորոշումն ուղղակիորեն վերաբերում է այս հանցագործությանը:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ ուժը հիմնավորող փաստարկներ առաջ են քաշվել նաև ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից, որը երկու անգամ իրավասու, սպառիչ բացատրություններ է տվել Կոնվենցիայի կիրառելիության սկզբունքային, հենքային հարցերի, այդ թվում՝ դրա հետադարձ ուժի վերաբերյալ:

Հիմնվելով Կոնվենցիայի առարկայի և նպատակների, ինչպես նաև դրանում ամրագրված միջազգային իրավունքի նորմերի՝ որպես erga omnes բնույթի նորմերի վրա, Դատարանը նշեց, որ ցեղասպանությունը կանխարգելելու և դրա համար պատժելու պարտականությունը տարածվում է բոլոր պետությունների վրա՝ անկախ Կոնվենցիային մասնակցությունից և, հետևաբար, տարածվում է ցեղասպանության բոլոր դեպքերի վրա, անկախ նրանից, թե դրանք կատարվել են խաղաղության, թե պատերազմի ժամանակահատվածում, միջազգային, թե ներպետական ընդհարման, իրենց, թե օտարերկրյա տարածքում:

Նշվածի արձանագրումից հետևում էր նաև այն, որ Կոնվենցիան տարածվում է նաև նախկինում կատարված հանցագործությունների վրա, որոնց հետևանքները, սակայն, վերացված չեն: Դատարանն ուղղակիորեն նշեց, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան «չի պարունակում որևէ դրույթ, որի նպատակը կամ օբյեկտը ratione temporis դրա (Դատարանի) իրավազորության շրջանակի սահմանափակումն էր»:

Մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը կատարած ցեղասպանության հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելու համար Կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ առկա է նաև ազգային դատարանների դատական պրակտիկա: Այս տեսանկյունից հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում Իսրայելի Գերագույն դատարանում քննված «Էյհմանն ընդդեմ Իսրայելի կառավարության Գլխավոր դատախազի» գործը:

Անհասկանալի պատճառներով, Հայաստանի պետական գործիչները զիջելու տեսանկյունից շատ հեռուն են ուզում գնալ, թեև դա իրավական նախադեպ չի ստեղծում: **Մենք նկատի ունենք Լ. Տեր-Պետրոսյանի դիրքորոշումը, որն առաջարկում էր ընդհանրապես օրակարգից հանել այս հարցը և Ռ. Քոչարյանի արտահայտած ցեղասպանության ճանաչման պայմանները (ոչ մի տարածքային ռեկտիֆիկացիա (շտկում), պետության անունից վնասի փոխհատուցման ոչ մի պահանջ):**

Թուրքերի ցեղասպանության զոհ դարձած հայերի համար այդ հանցագործության ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված պայքարը ոչ միայն պատմական արդարադատության և բարոյական բավարարվածության խնդիր է: Հայ ժողովրդի համար ցեղասպանության դատապարտման համար պայքարի իմաստը և նշանակությունը կայանում է սպառազինությունների մրցավազքի ուղին բռնած, հայ ժողովրդի հանդեպ անասնային ատելություն քարոզող հարևան ցեղասպան պետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից դրա կրկնությունը չթույլատրելու մեջ: 1915-1923թթ. Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի համաձայն, որպես ցեղասպանություն որակելը հսկայական քաղաքական նշանակություն կունենա, քանի որ երաշխիք կլինի այն բանի, որ Թուրքիան և նրա դաշնակից Ադրբեջանը չեն փորձի կրկին կատարել կամ շարունակել ողջ աշխարհի կողմից դատապարտվող հանցագործությունը:

ՅՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՈՎ
Իրավաբանական գիտությունների դոկտոր,
միջազգային իրավունքի պրոֆեսոր

(Անվանի իրավագետն այս հոդվածը
մեզ էր փոխանցել մահվանից օրեր առաջ - Խմբ.)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

1915 թվականին երիտթուրքերի կողմից իրագործված Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի մարդկությունը չկանխեց և նույնիսկ չճանաչեց այն ու չդատապարտեց: Մինչև այժմ առեղծվածային են հետևյալ հարցադրումները:

1. Ինչո՞ւ այս աներ ոճրագործությունը կատարվեց հենց հայերի՝ Օսմանյան կայսրության ամենաընդունակ ու հնազանդ ժողովրդի նկատմամբ:

2. Ինչո՞ւ քաղաքակիրթ աշխարհի տիրակալները ոչ միայն չպաշտպանեցին անօգնական հայերին թուրքական վայրագություններից, այլև իրենց անտարբերությամբ ու թողտվությամբ դաձան առաջին ցեղասպանության մեղսակիցներ:

3. Ինչո՞ւ ողջ 20-րդ դարում չճանաչվեց ու չդատապարտվեց այդ նախճիրը, իսկ 21-րդ դարում ամենուր ճանաչվում ու դատապարտվում է այն: Այս հարցերին իրարամերժ պատասխաններ են տվել տարբեր շահագրգռություններ ունեցող գիտնականներն ու քաղաքական գործիչները:

«Նոր օսմանների» հիմնադիր - պարագլուխ **Ֆուադ Փաշան**, օրինակ, այլատյացության մոլուցքով տարված, Հունաստանին համարում էր անկարևոր երկիր, ձանձրացուցիչ գործիք թշնամի պետությունների ձեռքին:

Իսկ հայերը հակված են ոտնձգության, խելացի կլինի նրանց եռանդը չափավորել,- շարունակում է նա,- մի մեծ Գերմանիա՝ 40 միլիոն բնակչությամբ, մի Ֆրանսիա, բնության կողմից զորավոր կերպով պաշտպանված մի Անգլիա, այս բոլոր ազգությունները կկարողանան իրենց զորավոր և օգտակար անհատականությունը պահպանել ժամանակի ընթացքում: Բայց մի Մոնթենեգրո, մի սերբիական իշխանություն, մի հայկական թագավորություն, ամենափոքր օգուտ չտալով ոչ իրենց և ոչ մարդկությանը, կարող են առավել կամ նվազ ցնորական պետություններ լինել, մարդկային հին բաժանումների դժբախտ մնացորդներ, ամեն նոր աշխարհակալի անխուսափելի որսը՝ դրանով իսկ վտանգելով աշխարհի խաղաղությունը»:[1]

Սերտելով **Ֆուադ Փաշայի** տված այլամերժ այս դասերը, **էրիկ Հոբսբաումը**, առանց պատմական մանրամասների մեջ մտնելու, հայերի, սերբերի, խորվաթների ազատագրական շարժումների մասին, ասում է, որ այդ շարժումները ազգայնական վերնախավն է դրդել, իսկ ըստ էության հայերը չպետք է հավակնեին անկախ պետականության իրենց պատմական որոշակի տարածքի վրա, քանի որ «նրանց վերջին փոքրիշատե կարևոր թագավորությունը կարելի է գտնել ոչ ավելի ուշ, քան առաջին դարում (և. Ք.), և դուրս է գտնվում նրանց պատմական հիշողությունից»:[2]

17-րդ դարի վերջին, երբ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների համար Թուրքիան սկսեց մեծ վտանգ ներկայացնել, գրավելով Բուլղարիան, Ռումինիան, Բեսարաբիան, Հունաստանը և Բալկանյան այլ երկրները, Թուրքիայի նվաճողական ձգտումներին դիմակայելու համար 1684թ. Ավստրիան, Լեհաստանը և Վենետիկը կազմակերպեցին «Սրբազան լիգան»: 1686թ. նրանց միացավ նաև Ռուսաստանը: Արևելքում գործող իրենց դիվանագետների ու կաթոլիկ միսիոներների միջոցով լիգան աշխատանք էր տանում հայկական և վրացական շրջաններում և համոզում նրանց, որ իբր նպատակ ունեն հայերին ու վրացիներին ազատագրելու թուրքական ու պարսկական լծից:

Երբ 1687-88թթ. թուրք-ավստրիական պատերազմում ավստրիացիները գլխովին ջախջախեցին և Եվրոպայից դուրս շպրտեցին թուրքերին, արևմտյան երկրների՝ հայերին օգնություն ցույց տալու խոստումները դուրս եկան օրակարգից: Հակաթուրքական պայքարի հիմնական ուժը մնաց Ռուսաստանը, և հայերն իրենց ազատության երկչոտ հույսերը կապեցին նրա հետ:

Իսկ 19-րդ դարի առաջին երեսնամյակում, երբ Ռուսաստանը գրավեց Արևելյան Հայաստանը, իսկ Արևմտյանը մնաց Թուրքիայի լծի տակ, հայ ժողովուրդը ակամայից ընկավ համաշխարհային հակամարտութունների նոր ու դեռևս չբացահայտված ոլորտ: Ողջ 19-րդ և 20-րդ դարերն անցան պատմաքաղաքական այնպիսի բարդ ու հակասական իրավիճակում, որ հայ ժողովրդի երկու հիմնական հատվածները՝ արևելահայությունը և արևմտահայությունը ընկան ոչ միայն երկու ոխերիմ՝ թշնամի պետությունների՝ արևելյան հարցը շահարկող տերությունների, այլև երկու հակամարտ համաշխարհային խմբավորումների՝ Անտանտի և Եռյակ միության, ֆաշիստական ու հակաֆաշիստական, սոցիալիստական ու կապիտալիստական ճամբարներում գտնվող պետությունների՝ Ռուսաստանի և Թուրքիայի լծի տակ:

Արևմտահայության ցեղասպանության երկրորդ հիմնական պատճառը թուրքերի ազգայնացման գործընթացի վերելքն էր 19-րդ դարի վերջին և ազգային պետություն կազմելու բուռն ազգայնամոլ ձգտումը: Թուրք ազգային բուրժուազիայի առաջացման և ձևավորման պատմական այս ժամանակահատվածը բախտորոշ նշանակություն ունեցավ կայսրության քրիստոնյան ժողովուրդների, հատկապես հայերի համար, որովհետև այն համընկավ նաև այդ ժողովուրդների ազգային զարթոնքի վերելքին:

Թուրքիան 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին բազմազգ պետություն էր, որտեղ յուրաքանչյուր օժտված ազգ ձգտում է իր անկախությանը: Որպես գերիշխող ազգ, թուրքերը ձգտում էին քաղաքական գաղափարների միջոցով հիմնավորել ու արդարացնել իրենց տիրապետող դիրքը, ամենածայրահեղ այլատյացության և ազգայնամոլության մեթոդներով: **Էռնեստ Գելների** դիպուկ արտահայտությամբ «Օսմանյան թուրքերը… (միջնադարում - Հ. Մ.) հարկ էին հավաքում միայն: Մնացած առումներով հանդուրժող էին ու հույժ անտարբեր իրենց իշխանության տակ եղած զանազան հավատների ու մշակույթների նկատմամբ: Դրան հակառակ՝ դրանց յաթաղանավոր հաջորդներն անկարող եղան խաղաղություն հաստատելու, մինչև ազգայնական սկզբունքը չտարածեցին ամեն տեղ, ամեն լեզվում: Սրանք արդեն միայն հարկերով ու հնազանդությամբ չբավարարվեցին: Սրանց արդեն հպատակների մշակութային ու լեզվական հոգիներն էին պետք»:[3]

Թուրքերի համար պարզ է դառնում, որ թուրքական էթնոսը իր զարգացման ցածր մակարդակի պատճառով չի կարող խաղաղ ճանապարհով ձուլել հպատակներին: Ակնհայտ է դառնում, որ այդ նպատակին չեն կարող հասնել մասնակի հաշվեհարդարներով: Դրա համար հրապարակ նետվեց «ով չի թուրքանում, պետք է սրի քաշվի» մարդատյաց սպառնալիք-կարգախոսը, «որը,- ինչպես նշում է ակադեմիկոս **Հ. Սիմոնյանը**,- թուրք ազգային բուրժուազիայի գաղափարական ժառանգության և թուրքական բռնակալության դարավոր պատմության արյունոտ արարի համառոտ բանաձևումն էր»:[4]

Այսպես ծնվեց այդ արյունոտ ոճրագործության գաղափարը և իրագործվեց ամենադաժան միջոցներով, հատկապես 1914-1918թթ. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Այս մեծ արհավիրքից անցել է 93 տարի: Փոխվել են ժամանակները, հանցագործություն կատարած և տուժած սերունդները, ինչպես նաև ոճրագործներին չդատապարտած սերունդները: Վերացել են համաշխարհային այն թշնամական խմբավորումները, որոնց թողտվությամբ իրագործվեց այն, և որոնց կամքով միջազգայնորեն չճանաչվեց ու չդատապարտվեց Հայոց ցեղասպանությունը: 1990-ական թվականների սկզբներին ԽՍՀՄ-ի փլուզումով փոխվեց աշխարհի հակադիր ուժերի հաշվեկշիռը: Տեղի ունեցավ մեծա-

մասշտաբ հեղաբեկում, որը վերջ դրեց ոչ միայն սառը պատերազմին, այլև համաշխարհային ուժային երկու բևեռներից մեկին:

Արդյո՞ք դրանով ավարտվում է նաև մեծ ուժերի ռազմական մրցակցությունն ամբողջությամբ, և արդյո՞ք հնին փոխարինելու կգա միջպետական խմբավորումների և գերիշխանության նոր մոդել: Առայժմ առկա է անցումային մի իրավիճակ, որի պայմաններում այնքան էլ հստակ չէ նոր դաշինքի ստեղծման հավանականությունը:

Ուժերի հավասարակշռության տեսության կողմնակիցները, սակայն, պաշտպանում են այն տեսակետը, որ ԽՍՀՄ-ի անկման հետ միասին կարող է ի հայտ գալ ինչ-որ նոր միջազգային խմբավորում՝ հավասարակշռելու համար ԱՄՆ-ի միաբևեռայնությանը: ԱՄՆ-ի, Ճապոնիայի և ԵՄ-ի միջև ընթացող մրցակցությունը կարող է հանգեցնել երեք խոշոր առևտրային բլոկների ստղծմանը և ռազմաքաղաքական կացութածների կազմավորմանը:

Կապիտալիզմը ձգտում է լինել գերիշխող, դրա համար նա պետք է ունենա մրցակից, ինչ-որ «թշնամի»: Կոմունիզմը մի այդպիսի թշնամի էր և այժմ, երբ այն վերացել է, կապիտալիզմը զբաղված է մեկ այլ թշնամի ստեղծելով: Ֆրեդ Հալիդեյի կածրիքով, այդ նոր հակառակորդը կարող է լինել իսլամը:[5]

Համաշխարհային հակամարտ խմբավորումները լուծարվել են: Հին հակամարտող խմբավորումների մեջ մտնող շատ պետություններ ձգտում են ինտեգրվել նոր կազմավորվող եվրոպական միության մեջ: Ոչ միայն Ռուսաստանն է կորցրել իր նախկին տիրապետող դիրքն աշխարհում, այլև Թուրքիան է կորցրել Մերձավոր և Միջին Արևելքում ունեցած ռազմավարական կարևորությունը:

Ինչպես 17-րդ դարի վերջերին, այնպես էլ այժմ Թուրքիան վտանգ է ներկայացնում Եվրոպայի համար: Գերմանիայում և Ֆրանսիայում ապրող թուրք բազմամիլիոն զանգվածը չի կարող չմտահոգել այդ երկրների կառավարող շրջաններին: Թուրքիան Եվրոմիության մեջ մտնելուց հետո բնականաբար, ազդեցիկ տեղ կգրավի այդ միության մեջ և կազդի Եվրոպայի ժողովուրդների ճակատագրի վրա:

Իրողություններ են սրանք, որ պետք է մտահոգեն Եվրոմիությանը և ստիպեն նրանց, սահմանափակել Թուրքիայի առաջխաղացումը: Եվ դարձյալ, Հայոց ցեղասպանության փաստն է, որի շահարկումով նրանք կարող են մտրակել թուրքերին: Այս նոր իրավիճակում ի՞նչ ընթացք կունենա Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը՝ մարդկությանը հուզող այս հիմնախնդիրը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո որակվեց՝ որպես ծանրագույն հանցագործություն մարդկության նկատմամբ:

Հայոց ցեղասպանության մասին ՀՍՍՀ Գերագույն Խորհուրդը միայն 1989թ. ընդունեց օրենք, որով Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում իրագործված հայերի ցեղասպանությունը դատապարտվեց՝ որպես մարդկության դեմ ուղղված ոճրագործություն: Այս ուշացած քայլից հետո շատ երկրներ աստիճանաբար ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը:

Նոր իրավիճակում պաշտոնական Երևանը Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու համար որևէ նախապայման չի դնում և նույնն է ակնկալում Թուրքիայից՝ համոզված, որ Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատումը բերելու է 1915թ. ցեղասպանության ճանաչման: Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին կտանի ավելի բաց հասարակության ստեղծմանը, որը բաց կանի Հայաստանի հետ սահմանները և կճանաչի ցեղասպանությունը:

Թուրք հայտնի պատմաբան ու սոցիոլոգ Թաներ Աքչամը, իր «Թուրքական ազգային «եսը» և Հայկական հարցը» գրքում գրում է, որ թուրք հանրությունը իրեն մեղավոր չի ճանաչում ցեղասպանության համար: Ներքևիները չեն ուզում իրենց վրա վերցնել մեղքի մի մասը, որովհետև դա վերևիների ձեռքի գործն էր: Մեղքի զգացման բացակայության մյուս պատճառը եղեռնը որպես «վրեժխնդրության ակտ» դիտարկելն է: Հասարակ ժողովուրդը չի հերքում եղեռնի փաստը, այլ այն հանգեցնում է «հանցանք և պատիժ» տրամաբանությանը:[6]

Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպության տնօրեն Սեդաթ Լաչինները դժգոհությամբ նշում է, որ Եվրոպայի որոշ արմատական խմբեր Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցությունը կապում են Հայկական հարցի հետ, և պնդում, որ Թուրքիան չպետք է դառնա ԵՄ-ի անդամ մինչև հայկական պահանջներին պատասխանելը:

Հայ-թուրքական ժամանակակից հարաբերությունները ծանրաբեռնված են անցյալի ժառանգությամբ, եղեռնով, դրա հետևանքներով, ապաշխարանքի բացակայությամբ:

Թուրքայի համար և տարածաշրջանում այժմ, քան երբևէ կարևորվում է քրդական վտանգը, որը, ինչ խոսք, նոր լուծումների պահանջ է առաջադրում: Այսպիսով, որքան էլ ցանկանան թուրքերն ու նրանց հետ այսօրվա հարաբերությունների պահպանությամբ շահագրգռված ազդեցիկ տերությունները քողարկել ահավոր փաստը, միևնույնն է, իրոք, անհնար է: Փլուզվել են վերջին 200 տարվա համաշխարհային կառույցները, սկզբնավորվում են նորերը, որոնք անպայմանորեն իրենց հետ կբերեն նոր հարաբերությունների ստեղծման և հին մեղքերի քավության անհրաժեշտություն:

ՀԵՆՉԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի
վարիչ, պրոֆեսոր

Ծանոթագրություն

1. «Արոր», Ա. տարի, 1910, թիվ 6, էջ 185:
2. E. J. Hobsbawm. Nations and nationalism Since 1870. Cambridge Univ. Press, 1993, p. 76:
3. Տե՛ս. Էռնեստ Գելներ, Ազգերը և ազգայնականությունը, Եր. 2003, էջ 61:
4. Հ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր. 1986, էջ 235:
5. Տե՛ս, Միջազգային հարաբերությունների արդի տեսություն, Եր. 2001, էջ 42:
6. Տե՛ս, Հայաստան-Թուրքիա, բաց խոսակցություն, Եր. 2005, էջ 50:

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱ. ԱՄՆ-Ն ՊԵՏՔ Է ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆԻ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԱՄՆ նախագահի թեկնածուներ Բարաք Օբամայի եւ Ջոն Մըքքեյնի հոկտեմբերի 7-ին կայացած հեռուստաբանավեճի ընթացքում Բարաք Օբաման կրկին հաստատեց իր դիրքորոշումն՝ աշխարհում ցեղասպանությունները կանխելու անհրաժեշտության մասին: Պատասխանելով բանավեճը վարող Թոմ Բրոքոուի այն հարցին, թե ինչպե՞ս թեկնածուները կվերաբերվեն, ըստ էության, հումանիտար աղետ համարվող իրավիճակներին, որոնք չեն ազդում ԱՄՆ-ի ազգային անվտանգության վրա, ինչպես, օրինակ, Կոնգոյի, Ռուանդայի, Սոմալիի իրադարձությունները՝ Բարաք Օբաման պատասխանել է, որ ամենից զատ, գոյություն ունեն բարոյական պարտավորություններ եւ ԱՄՆ-ն պետք է ամեն ինչ անի կանխելու համար ցեղասպանությունները: «Երբ աշխարհում ցեղասպանություններ եւ էթնիկ զտումներ են կատարվում, իսկ մենք պասիվ հետեւում ենք այդ իրադարձություններին, դա վիրավորական է, առաջին հերթին մեզ համար»,- հայտարարել է Բարաք Օբաման եւ հավելել, որ ԱՄՆ-ի միջամտությունը պետք է համակարգված լինի տարածաշրջանում նրա դաշնակիցների հետ: **/PanARMENIAN.Net/ 09. 10. 2008թ.**

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՆԹԱՏԵՔՍՏՈՒՄ

1915 թվականի ողբերգական իրադարձություններից անցել է 93 տարի, սակայն մարդկության պամության ամենաամոթալի էջերից մեկի՝ հայերի ցեղասպանության հետ կապված բազմաթիվ խնդիրներ դեռևս մնում են չլուծված: Ոչ միայն պատմական արդարության վերականգնման, պատասխանատվության և արդարացի հատուցման հիմնահարցերն են մնում օրակարգում, այլև խնդիր է պատմական ճշմարտության համընդհանուր և գործնական ճանաչումը: Չնայած նրան, որ վերջին տարիներին այս ոլորտում առկա է զգալի առաջընթաց՝ բազմաթիվ պետությունների խորհրդարաններ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, տեղի են ունենում այլ կարևոր զարգացումներ, այնուհանդերձ, վերջնական արդյունքի հասնելը պահանջում է վճռականություն և շարունակական աշխատանք:

Այս ենթատեքստում առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության հետ կապված միջազգային իրավական մոտեցումների հստակեցումը, համապատասխան իրավական խնդիրների ճշգրիտ մեկնաբանությունը: Միջազգային իրավական հստակ դիրքորոշման մշակումը մեծ և պատասխանատու խնդիր է: Հուսով ենք, որ ստորև ներկայացված մեր նկատառումները Հայոց ցեղասպանությանն առնչվող միջազգային իրավական որոշ հիմնահարցերի վերաբերյալ կարող են օտակար լինել:

Ինչպես հայտնի է, **ցեղասպանությանը վերաբերող հիմնական միջազգային իրավական ակտը 1948թ. դեկտեմբերին ընդունված «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա կատարման համար պատժի մասին» կոնվենցիան է** (ստորև՝ Ցեղասպանության մասին կոնվենցիա): Նպատակ չդնելով մանրամասն ներկայացնել նշված իրավական փաստաթղթի բովանդակությունը՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այդ միջազգային-իրավական ակտի և Հայոց ցեղասպնության հարաբերակցության խնդիրներին:

Նշենք, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների (որոնցում սահմանվում է ցեղասպանության հանցակազմը) բոլոր կետերը իրենցից ներկայացնում են 1915թ. թուրքական իշխանությունների կողմից Հայկական Հարցի «լուծմանը» ուղղված ոճրագործությունների ուղղակի և իրավաբանորեն հստակեցված նկարագրությունը, և այս իմաստով Հայոց ցեղասպանությունը կարող է ճանաչվել որպես «դասական» ցեղասպանություն, որը լիովին համապատասխանում է այդ հասկացության բոլոր սահմանված չափանիշներին:

Այս հանգամանքը քաջ գիտակցելով հանդերձ՝ իրատեսությունը թելադրում է մեզ անդրադառնալ այն հարցին, թե որքանով է իրավաբանորեն արդարացված 1948թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայի վկայակոչումը 1915թ. (ինչպես նաև ավելի վաղ և հետագայում) տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ: Հարցադրման շահարկումն օգտագործվում է մեր ընդդիմախոսների կողմից և ինքնին բավականին հետաքրքիր միջազգային իրավական խնդիր է: Հարցն այն է, թե կարո՞ղ ենք, արդյոք, Ցեղասպանության մասին կոնվեցիային վերագրել ռետրոակտիվ էֆեկտ, այն է՝ հետադարձ իրավանաբական ուժ:

Խնդրի դիտարկման արդյունքները թույլ են տալիս պնդել, որ 1948թ. կոնվենցիան կիրառելի է 1915թ. Հայոց ցեղասպանության առումով: Այս կարծիքը պայմանավորված է մի շարք փաստարկներով, որոնք հակիրճ կարող են ներկայացվել հետևյալ կերպ:

Ինչպես ցույց է տալիս նշված կոնվենցիայի նախաբանը, ինչպես նաև Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության վերլուծությունը, մինչև այդ փաստաթղթերի ընդունումը միջազգային իրավունքի մեջ գոյություն են ունեցել հետագայում «ցեղասպանություն» երևույթը արգելող և այն կատարելու համար խիստ պատասխանատվություն սահմանող սովորութային միջազգային-իրավական նորմեր: Այսինքն՝ 1948 թվականին ընդունված կոնվենցիան իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան մինչև նրա ընդունումն արդեն գոյություն ունեցող միջազգային-իրավական նորմերի կոդավորում: Այստեղ գործ ունենք սովորութային նորմերի կոդիֆիկացիայի հետ, ճիշտ այնպես, օրինակ, 1961թ. ընդունված Դիվանագիտական հարաբերությունների մասին կոնվենցիան: **Դիվանագիտական հարաբերությունները կարգավորող սովորութային նորմերը հնագույններից են, և ոչ ոք չի կարող հայտարարել, որ նրանք սկիզբ են առել միայն 1961թ.:**

Ինչ վերաբերվում է Նյուրնբերգյան դատավարություններին, ապա սոսկ նրանց անցկացման փաստը մինչև նշված կոնվենցիայի ընդունումը արդեն իսկ վկայում է ներկայացված տեսակետի օգտին: Հակառակ մոտեցումը, այսինքն՝ ցեղասպանությունն արգելող միջազգային-իրավական նորմերին նախորդող սովորութային նորմերի առկայության ժխտումն ուղղակիորեն կասկածի տակ է դնում նշված դատավարությունների օրինականությունը, վճիռների իրավական հիմնավորվածությունը. մի բան, որ ժամանակակից աշխարհում իրեն չի կարող թույլ տալ ոչ ոք:

Հատկանշական է նաև այն, որ Նյուրնբերգյան դատավարությունների փաստաթղթերում ցեղասպանություն կազմող գործողությունները անվանվում են «հանցագործություն ընդդեմ մարդկության», կիրառվել է հենց հայերի ցեղասպանության կապակցությամբ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի համատեղ հռչակագրում դեռևս 1915 թվականի մայիսի 24-ին[1]:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ համապատասխան երևույթը կամ հանցավոր գործողությունները արգելող նորմը, փաստորեն, գոյություն է ունեցել մինչև «ցեղասպանություն» բառի ի հայտ գալը: Genocide եզրույթը առաջարկվել է հայտնի լեհ իրավաբան Ռ. Լեմկինի կողմից Օսմանյան Թուրքիայում հայերի ոչնչացումից հետո, և տրամաբանական է, ինչպես նշում է հեղինակներից մեկը[2], որ նա չի հորինել նոր հանցագործություն, այլ գտել է առավել ճշգրիտ եզրույթը գոյություն ունեցող (արդեն իսկ կատարված) հանցագործության համար: **Ինչպես նշվել է ՄԱԿ-ի հատուկ հետազոտությունում, «Ցեղասպանություն բառը համեմատաբար նոր է, սակայն այն կոչված է նշել հին հանցագործությունը»**[3]: Ուստի, **մեր ընդդիմախոսների բոլոր այն պնդումները, թե 1915 թվականին և ավելի վաղ տեղի ունեցած իրադարձությունները ցեղասպանություն չեն կարող լինել, զուրկ են որևէ իրավական հիմքից:**

Նույնիսկ, եթե մի պահ ընդունենք, որ վերը շարադրված փաստարկները գոյություն չունեն, և որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից առաջ համապատասխան միջազգային-իրավական նորմեր գոյություն չեն ունեցել, ապա անգամ այդ դեպքում՝ առկա են մեր դիրքորոշումը հաստատող պատշաճ իրավական հիմքեր: **Ցեղասպանության մասին Կոնվենցիայի կիրառելիությունը 1915թ. թուրքական կառավարության կողմից իրականացված ցեղասպանության վերաբերյալ կարելի է հիմնավորել այդ գործողության և նրա արդյունքների շարունակական բնույթով:** Ցեղասպանության արդյունքում հայ ժողովրդի մեծամասությունը ստիպված է ապրել իր հայրենիքից դուրս՝ ամեն օր, ամեն ժամ դիմակայելով ազգային ինքնությունը կորցնելու, որպես ազգային հանրություն, առանձին էթնո-մշակութային միավոր վերանալու վտանգին: Մեր ժողովրդի սփյուռքահայ հատվածը կամովին չի լքել իր հայրենիքը և տասնյակ տարիներ ստիպված

մարտնչել իր ինքնության պահպանման համար. նա հայտնվել է այդ վիճակում բռնության արդյունքում: Եվ քանի որ Ցեղասպանության մասին կոնվենցիան նպատակ է հետապնդում կանխել և պատժել որևէ ազգային խմբի բռնի գործողությունների հետևանքով ամբողջովին կամ մասնակի ոչնչացումը, ուստի, 1915թ. Ցեղասպանությունը հանդիսանում է նշված կոնվենցիայի խախտում:

Այդ ենթատեքստում կարևոր նշանակություն ունի նաև այն, որ **ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1968թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիայում հրաժարվեց կիրառել վաղեմության ժամկետը մարդկության դեմ գործած հանցագործությունների նկատմամբ, որոնց շարքում առաջինը ցեղասպանություն հանցագործությունն է:** Այդ իրավական ակտում ուղղակիորեն նշվում է, որ վաղեմության ժամկետը չի կարող կիրառվել Նյուրնբերգյան նշված հանցագործությունների, ինչպես նաև զինված հարձակման պատճառով բռնագաղթի ենթարկելու կապակցությամբ, «անկախ նրանց կատարման ժամանակից»: 1968թ. կոնվենցիայի այս հստակ ձևակերպումը միանշանակ նախատեսում է, որ այն ամբողջությամբ վերաբերում է բոլոր նշված հանցագործություններին, անկախ նրանից, թե երբ են կատարվել:

Բացի դրանից, շատ կարևոր է նաև **ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ընդունած Ցեղասպանության մասին կոնվենցիայի վերաբերյալ վերապահումների մասին եզրակացությունը, ուր մասնավորապես հստակորեն նշվում է, որ «այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է Կոնվենցիան, հանդիսանում են սկզբունքներ, որոնք ճանաչված են բոլոր քաղաքակիրթ ազգերի կողմից և պարտադիր են բոլոր պետությունների համար առանց որևէ կապի նշված Կոնվենցիայի հետ»**[4]: Այսինքն՝ եթե անգամ չլիներ 1948թ . Ցեղասպանության մասին կոնվենցիան, ապա միևնույնն է, կատարված ոճրագործությունները հանցավոր կլինեին միջազգային իրավունքի տեսանկյունից, իսկ դրանց կատարողները՝ ենթակա միջազգային իրավական պատասխանատվության:

Հիմնարար նշանակություն և համապատասխան ուսումնասիրություն պահանջող հարց է շարունակում մնալ հայերի ցեղասպանության համար պատասխանատվության խնդիրը: Այստեղ ևս պահանջվում է հստակ միջազգային իրավական դիրքորոշման մշակում, ժամանակակից միջազգային-իրավական նորմերի հմուտ օգտագործում: Նշված ոլորտում առկա հիմնախնդիրների շարքից կարելի է առանձնացնել 1915թ. ցեղասպանության համար ժամանակակից Թուրքիայի պատասխանատվության խնդիրը, որը, ըստ էության, կապված է Օսմանյան կայսրության իրավահաջորդության հարցի հետ: Այսինքն, արդյո՞ք Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության քայքայումը վերջն էր նրա միջազգային-իրավական իրավասուբյեկտության: Եթե այս հարցի պատասխանը դրական է, ապա պետք է արձանագրել, որ համաձայն պետությունների իրավահաջորդության կանոնների՝ Օսմանյան կայսրության իրավական պատասխանատվությունը դադարում է վերջինիս գոյության դադարման հետ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ առկա են իրավական երկու հնարավորություններ: Առաջինն այն է, որ Օսմանյան կայսրության լուծարման հետևանքով նրա տարածքում ստեղծվեցին մի շարք պետություններ, այդ թվում նաև՝ ժամանակակից Թուրքիան, որոնք առնչություն չունեն կայսրության իրավասուբյեկտության հետ: Եվ երկրորդը, Օսմանյան կայսրության քայքայումը, սկիզբ դրեց մի շարք նոր պետությունների առաջացմանը, որոնց թվում են, օրինակ, Իրաքը, Սիրիան, Լիբանանը, սակայն **Թուրքիան, հանդիսանալով Օսմանյան կայսրության իրավահաջորդը, նոր պետություն չէ, այլ նրա միջազգային իրավասուբյեկտության շարունակողն է:**

Ներկայացված երկու իրար բացառող հնարավորությունները տեսականորեն հավասարապես կարող են համապատասխանել միջազգային իրավունքին, ուստի, այստեղ գործ ունենք ոչ այնքան իրավունքի, որքան փաստի խնդրի հետ, փաստի, որը պետք է բացահայտվի կոնկրետ պատմական իրողությունների ենթատեքստում և գնահատվի միջազգային իրավունքի դիրքերից:

Իսկ պատմական իրողությունը այն է, որ Օսմանյան կայսրության քայքայման արդյունքում չստեղծվեց լիովին նոր մի պետություն՝ Թուրքիայի Հանրապետություն, այլ գոյություն ունեցող պետության ներսում, որը պատերազմի ընթացքում կորցրել էր իր գաղութները, փոփոխվեց կառավարման համակարգը:

Այսպիսի մոտեցման հիմքում ընկած են ոչ միայն զուտ տրամաբանությունը կամ իրադարձությունների օբյեկտիվ գնահատականները:

Այսպես, քննարկվող խնդրի կապակցությամբ կարևոր նշանակություն ունեն նաև միջազգային-իրավական պրակտիկան, միջազգային հարաբերություններում առկա նախադեպերը: Որպես նորագույն օրինակ՝ կարելի է դիտարկել Ռուսաստանի Դաշնության իրավահաջորդությունը, որը միջազգային հանրության կողմից իրավացիորեն ճանաչվեց որպես Խորհրդային Միության իրավա-սուբյկտության օրինական շարունակող:

Բացի դրանից, պետք է նշել, որ վերը ներկայացված կարծիքը ժամանակին ստացել է հեղինակավոր հրավական հիմնավորում, որը իր նշանակությունը և իրավական ուժը չի կորցրել մինչ օրս: Խոսքը, այսպես կոչված, «Օտտոմանյան պարտքի արբիտրաժի» վճռի մասին է, որում, ըստ էության, պատասխան է տրվում այն հարցին, թե հանդիսանո՞ւմ է, արդյոք, Թուրքիայի Հանրապետությունն Օսմանյան կայսրության իրավահաջորդը: Այդ դատավարության ընթացքում քննարկվում էր Օսմանյան կայսրության արտաքին պարտքի վճարման հետ կապված հարցը: Համաձայն արբիտրաժի որոշման՝ Թուրքիան պատասխանատու էր Օսմանյան կայսրության արտաքին պարտքերի համար, քանի որ հանդիսանում էր նրա իրավահաջորդը: Գործի քննության արդյունքում միջազգային ատյանը հանգել էր մի եզրակացության, որը անհրաժեշտ ենք համարում մեջբերել բառացիորեն. **«Միջազգային իրավունքի համաձայն՝ Թուրքիայի Հանրապետությունը պետք է ճանաչվի որպես Օսմանյան կայսրության իավահաջորդ»**[5]:

Եվ վերջապես, այն հանգամանքը, որ ժամանակակից Թուրքիան համառորեն ժխտում է ակնհայտ պատմական իրողությունները, նույնպես միանշանակ պատասխան է տալիս հայերի ցեղասպանության համար պատասխանատվության մասին հարցին:

Իրավական առումով հենց թուրքական պետությունն է հանդիսանում ցեղասպանության կազմակերպիչը և իրագործողը, ուստի, առաջին հերթին հենց նա պետք է կրի կատարվածի համար միջազգային իրավական պատասխանատվության ողջ ծանրությունը: Ինչ վերաբերում է դրան հասնելու ուղիներին, ապա այստեղ անհրաժեշտ է հիշատակել Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածը, որը նվիրված է ցեղասպանության համար պետություններին պատասխանատվության ենթարկելու

հետ կապված վեճերի առնչությամբ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի իրավասությանը: Համաձայն նշված միջազգային-իրավական դրույթի՝ վեճերը կոնվենցիայի կողմերի միջև, որոնք վերաբերում են կոնվենցիայի կիրառմանը, ներառյալ վեճերը, կապված ցեղասպանության համար պետությունների պատասխանատվության հետ, կարող են ներկայացվել Միջազգային դատարանի քննությանն այդ վեճի կողմերից մեկի պահանջով:

Այս կապակցութամբ, սակայն, **անհրաժեշտ ենք համարում հատուկ շեշտել, որ այդպիսի հնարավոր դատավարության խնդիր պետք է լինի կատարվածի համար պատասխանատվության և հատուցման խնդիրը, այլ ոչ թե Հայոց ցեղասպանության իրողության քննարկումը:** Ընդհանրապես նման քննարկումները պետք է լիովին անընդունելի համարվեն մեզ համար: Դժվար է պատկերացնել որևէ հրեայի, որը քննարկումների մեջ մտներ Հոլոքոստը ժխտողների հետ: Նույն կերպ հայերի ցեղասպանության փաստի ցանկացած ժխտումը, ցանկացած վերապահումները և կասկածները ուղղակի վիրավորանք պետք է համարվեն հայ մարդու համար, անհարգանքի ուղղակի դրսևորում մեկ միլիոնից ավելի անմեղ զոհերի հիշատակի հանդեպ:

Միևնույն ժամանակ դա չի նշանակում, թե չպետք է աշխարհին ներկայացնենք պատմական ճշմարտությունը և բացահայտենք մեր ընդդիմախոսների համառ ջանքերը՝ ժխտելու ցեղասպանության իրողությունը և դրանով խուսափելու պատասխանատվությունից:

Նմանատիպ ժխտումներով լի է թուրքական մամուլը, պատմական գրականությունը, նրանց կողմից ջանքեր են գործադրվում սուտը և կեղծիքը հրամցնել աշխարհին: Օրինակ՝ թուրքական դեսպանատների ինտերնետ կայքերում առկա են հատուկ էջեր, որոնք սովորաբար անվանվում են «հայկական մեղադրանքներ»[6], ուր հեղինակները անհաջող փորձեր են կատարում ժխտել անժխտելին և ապացուցել անապացուցելին: Թուրքական դիրքորոշման էությունը ցեղասպանության վերաբերյալ ժամանակին բավական դիպուկ նկարագրվել է հետևյալ կերպ. «Հայերի ցեղասպանություն չի եղել, հայերի ցեղասպանությունը հիմնավորված էր, հայերն իրենք իրենց են կոտորել, հայերն են կոտորել թուրքերին»[7]: «Երկխոսել» նմանատիպ քարոզչության հետ ինչ-որ տեղ անիմաստ է, ցեղասպանության ժխտումը կամ արդարացումը քաղաքակիրթ աշխարհում ինքնին հանցագործություն է համարվում: **Սույն տողերի հեղինակը անձամբ է մասնակցել խնդրին վերաբերող միջազգային կարևոր իրավական փաստաթղթի ընդունմանը, ուր Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին միանշանակ պահանջ է ներկայացվում քրեական պատասխանատվություն սահմանել ցեղասպանության ժխտման, հիմնավորման կամ արդարացման համար**[8]: Հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին զուգահեռ վերոհիշյալ դրույթի իրագործումը կստիպի մեր ընդդիմախոսներին ավելի սթափ գնահատել իրողությունները:

Կատարվածի համար պատասխան տալը անխուսափելի է, ինչի երաշխավորը պիտի լինեն **պատմական արդարությունը, միջազգային իրավունքը և մենք**, մեր հաստատակամությունը:

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Գրականության ցանկ

1. Տե՛ս, Геноцид армян в Османской империи: Сб. документов и материалов под пед. М. Г. Нерсисяна, Ереван, 1983, с. 602-603.

2. Ю. Г. Барсегов. Геноцид армян. Преступление по международному праву. М., 2000. стр 62.

3. UN Doc: E (CN. 4) Sub. 2 (1985) 6, p. 9.

4. Reserves a la Convention sur le genocide. Avis consultatif. C. I. J. Recueil, 1951, p. 15.

5. Reports of Internationa Arbitral Awards, N1, 1925, p. 59,

6. Տե՛ս, օրինակ, http://www.turkishembassy.org/governmentpolitics/issuesarmenian.htm:

7. Tribunal Permanent des Peuples. Le Crime de silence. Le genocide des armeniens. Preface de Pierre Vidal-Naquet. Paris. 1984, p. 12-13,

8. Council of Europe, ECRI general policy recommendation N 7 on national legislation to combat racism and racial discrimination. Adopted by ECRI on 13 December 2002.

ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆ

Կանադայում գործող Ջորյան ինստիտուտի մի բաժանմունքը կազմող «Ցեղասպանության եւ մարդու իրավունքների ուսումնասիրության միջազգային ինստիտուտի» եւ ցեղասպանագետների միության ջանքերով հրատարակվող «Ցեղասպանության ուսումնասիրություններ ու կանխարգելում» հանդեսի օրերս հրատարակված հերթական համարը նվիրված է ցեղասպանությունների հետեւանքներին, տեղեկացնում է խմբագրությանը հասցեագրված մամլո հաղորդագրությունը:

Հատորը մասնավորապես քննարկում է արդարադատության իմաստով հետցեղասպանական շրջանը Ռուանդայում, համերաշխության փորձերը Բոսնիայում եւ նախկին Հարավսլավիայում, ինչպես նաեւ ժխտողական քաղաքականության ազդեցությունը Մեծ եղեռնին հաջորդած սերունդների վրա:

Հատորում տեղ է գտել Լուիզվիլ համալսարանի մարդաբանության բաժնի պրոֆեսորի օգնական Ջենի Բըռնեթի «Տեղական արդարության անարդարությունը: Ճշմարտությունը, համերաշխությունը եւ վրեժը Ռուանդայում» վերնագրով հոդվածը, որտեղ քննության են առնվում տեղական դատարանների եւ երդվյալ ատենակալների համակարգում տեղ գտած անարդարությունները նույնիսկ այսօր՝ տասնչորս տարի այնտեղ կատարված ցեղասպանությունից հետո:

Բրանդիս համալսարանի քաղաքագիտության ամբիոնի դասախոս, դոկտորականի հայցորդ Մայա Չաթիչի «Երկու հաշտությունների պատմությունը: Գերմանացիներն ու հրեաները Բ աշխարհամարտից հետո եւ Բոսնիան Դեյթոնից հետո» հոդվածը գտնում է, որ առաջինի (գերմանացիներ ու հրեաներ) հաջողությունը հենվում է այն փաստի վրա, որ հանցագործն ու զոհը ստիպված չէին միեւնույն հողակտորի վրա շարունակել ապրել:

Հաջորդ հոդվածը պատկանում է Ավստրալիայից Դիքինի համալսարանի պատմության եւ հասարակագիտության ամբիոնի գիտաշխատող Դոննա-լի Ֆրիզին: Իր «Ցեղասպանության փուլերը: Ժխտողականության պատմություններ: Ատոմ Էգոյանի «Արարատը» վերնագրով հոդվածում նա բացահայտում է ցեղասպանության շարունակական բնույթը:

Հատորի խմբագիր Հենրի Թերիոն անգնահատելի աշխատանք է կատարել, ներկայացնելով ցեղասպանությունը ոչ թե որպես «մեկուսացված փաստ», այլ «մղձավանջային մի ստվեր», որը հարատեւորեն ուղեկցում է իրարահաջորդ սերունդներին: Հատորի վերաբերյալ լրացուցիչ մանրամասնությունների համար այցելել «admin@genocidestudies.org» կայքը: **(«Ազգ», 01. 11. 2008թ., Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ)**

Проблема признания Геноцида армян

(Курсовая работа)

Введение

Геноцид армян 1876-1922гг. один из наиболее значительных событий истории армянского народа и всего человечества. Он сильно повлиял не только на судьбу армянского народа, но и на судьбу всего человечества, т.к. опыт турок во второй половине 20-ого в. успесшно применял А. Гитлер. Геноцид и, в частности, проблема признания Геноцида армян на сегодня являются одним из наиболее актуальных в списке проблем мировой истории 20-ого столетия .

Проблема признания Геноцида армян довольно широка. С одной стороны, это проблема самой Армении, армянского народа и армянской диаспоры, это проблема турецкой ответственности и утверждения справедливости, а с другой - это проблема мирового масштаба и всего человечества, т.к. он вторгается в сферу междунароного права, медународных отношений и Большой политики. С проблемой признания и осуждения Геноцида армян главным образом связывается также проблема осуждения и предотвращения геноцида в целом.

В данной работе проблема признания Геноцида армян рассматривается в двух основных ракурсах: как проблема согласно международному праву и как проблема Большой политики: первая глава озаглавлена "Геноцид армян - преступление по международному праву".

Те, кто сегодня выступают в роли защитников организаторов и исполнителей этого чудовищного преступления, основываясь на так называемом климо "События 1915-ого года", утверждают, что этот все нарастающий интерес к отрицательному (имееся ввиду к Геноциду армян) является историчским анахронизмом и потому в этой главе большое внимание уделено международно-правовым актам и правомочности применения термина "Геноцид" в отношении резни армянского народа, так же вопросу установления реальных временных рамок Геноцида армян как важнейшего аспекта в рамках проблемы признания, и рассмотрен международно-правовой путь осуждения Арменоцида.

Особо хотелось бы отметить, что Геноцид армян был осужден мировым сообществом и, в частности Турцие, еще в годы его совершения, и на то, что в ряде международных дакументов и междунрдно-правовых актов как, например, Конвенция о предупреждении геноцида и наказания за это, а так же Вердикт Постоянного Трибунала Народов по Геноциду армян уже содержатся основные кретерии турецкой ответственности и компенсации за Геноцид армян. Так же здесь отмечен тот факт, что кроме понятия геноцид, есть и понятие Арменоцид. Последний отличается главным образом тем, что он фактически проводился на исторической территории народа и является наиболее длителным. из всех известных случаев геноцида.

Во второй главе: "Проблема призннния Геноцида армян и Большая политика", эта проблема рассмотрена в качестве составной части мировой политики и международных отношений. Здесь она разделена на несколько уровней. В частности:

1. Двусторонние отношения. Проблема признания геноцида и всего комплекса вопросов, связанных с ним, рассматриваются в сфере армяно-турецких и армяно-азербайджанских отношений.

2. Региональные отношения и проблема признания Геноцида армян как геостратегический аспект. Проблема признания Геноцида армян является фактором, влияющим на отношения и интеграционные процессы в регионе Южного Кавказа. Т.к. проблема признания и осуждения Геноцида армян на сегодня является одним из основных направлений внешней политики Республики Армения и, фактически единственный вопрос внешней политики, который выходит за региональные рамки и является частью Мировой политики, он воздействует и на выбор геостратегического направления развития на региональном и глобальном уровнях. Два из четырех соседних государств Армении - Турция и Азербайджан - активно противодействуют процессу принятия и осуждения геноцида, а два других - Иран и Грузия - лояльны к этому вопросу. Россия традиционно воспринималась армянами как одна из наиболее последовательных и эффективных союзниц в вопросе международного признания геноцида. Однако наблюдаемое в последние годы российско-турецкое сближение, а также общее ослабление позиций России в мире делают подобные ожидания нереальными. Фактически, в вопросе признания и осуждения геноцида и оказания с этой целью давления на Турцию Армения может ожидать поддержки со стороны Европейского Союза, США. Такое положение является дополнительным фактором геостратегического характера, способствующим укреплению влияния Запада на Армению.

3. "Большая политика". В 1987 году Европейский Парламент принял резолюцию "О политическом решении Армянского Вопроса". В документе события, имевшие место в 1915-1917 гг. на территории Османской империи и направленные против армянского народа, в соответствии с Конвенцией ООН 1948 года "О предупреждении преступления геноцида и наказании за это", квалифицировались как геноцид. В этой же резолюции Европейскому Совету рекомендовалось оказывать давление на турецкое правительство с тем, чтобы оно признало геноцид. Стало очевидно, что начался процесс включения этого вопроса в повестку дня "большой европейской политики". Однако к сожалению несмотря на то, что документальных и материальных доказательств Геноцида армян придостаточно, на сегодня фактически вопрос признания Арменоцида превращен в предмет политического торга и используется для надавления на Турцию или же для привлечения внимания многомилионной армянской диаспоры к различным событиям или процессам.

В заключении же хотелось бы отметить, что несмотря на междунродно-правую основу и казалось бы огромные сдвиги в деле признания и осуждения Геноцида армян, сегодня еще рано говорить о процессе признания как о завершившемся факте.

История и мировая действителъность показывают, что в международных отношениях первачную роль пока не играют гуманитарные соображения, и любые события в международных отношениях, кроме международно-правовой или гуманитарной, под собой имеют также политические факторы. Вот почему, с точки зрения национальных и государственных интересов, для армянской дипломатии крайне важным в вопросе признания и осуждения Геноцида армян является правильная оценка и использование не только международно-правовой базы, но и тех реалий мировой политики, которые могут воздействоватъ на данный вопрос.

Кристина Петросян
Российско-армянский государственний университет, факулътет политологии,
II курс, 2008г.

КОНВЕНЦИЯ О НЕПРИМЕНИМОСТИ СРОКА ДАВНОСТИ К ВОЕННЫМ ПРЕСТУПЛЕНИЯМ И ПРЕСТУПЛЕНИЯМ ПРОТИВ ЧЕЛОВЕЧЕСТВА

26 ноября 1968г.
ПРЕАМБУЛА

Государства-участники настоящей Конвенции,

Ссылаясь на резолюции Генеральной Ассамблеи Организации Объединенных Наций 3 (I) от 13 февраля 1946 года и 170 (II) от 31 октября 1947 года о выдаче и наказании военных преступников, на резолюцию 95 (I) от 11 декабря 1946 года, подтверждающую принципы международного права, признанные Уставом Нюрнбергского международного военного трибунала и приговором при этого трибунала, и на резолюции 2184 (XXI) от 12 декабря 1966 года и 2202 (XXI) от 16 декабря 1966 года, в которых ясно осуждаются как преступления против человечества нарушение экономических и политических прав коренного населения, с одной стороны, и политика апартеида — с другой,

Ссылаясь на резолюции 1074 D (XXXIX) от 28 июля 1965 года и 1158 (XLI) от 5 августа 1966 года Экономического и Социального Совета Организации Объединенных Наций о наказании военных преступников и лиц, совершивших преступление против человечества,

Отмечая, что они в одной торжественной декларации, акте или конвенции, касающихся судебного преследования или наказания за военные преступления и преступления против человечества, не содержится положения о сроке давности,

Считая, что в соответствии с международным правом военные преступления и преступления против человечества относятся к самым тяжким преступлениям,

исходя из убеждения, что эффективное наказание за военные преступления и преступления против человечества является важным фактором в деле предубеждения таких преступлений, защиты прав человека и основных свобод, укрепления доверия, поощрения сотрудничества между народами и обеспечения международного мира и безопасности,

отмечая, что применение к военным преступлениям и преступлениям против человечества внутренних правовых норм, касающихся срока давности в отношении обычных преступлений, является вопросом, вызывающим серьезную озабоченность мирового общественного мнения, так как оно препятствует судебному преследованию и наказанию лиц, ответственных за такие преступления,

признавая необходимость и своевременность утверждения в международном праве, посредством настоящей конвенции, принципа о том, что не существует срока давности в отношении военных преступлений и преступлений против человечества, а также обеспечения повсеместного применения этого принципа,

согласились о нижеследующем:

Статья I

Никакие сроки давности не применяются к следующим преступлениям, независимо от времени их совершения:

а) военные преступления, как они определяются в Уставе Нюрнбергского международного военного трибунала от августа 8 1945 года и подтверждаются резолюциями 3 (I) от 13 февраля 1946 года и 95 (I) от 11 декабря 1946 года Генеральной Ассамблеи Организации Объединенных Наций, а также, в частности, <<серьезные нарушения>>, перечисленные в Женевских конвенциях о защите жертв войны от 12 августа 1949 года;

б) преступления против человечества, независимо от того, были ли они совершены во время войны или в мирное время, как они определяются в Уставе Нюрнбергского международного военного трибунала от 8 августа 1945 года и подтверждаются в резолюциях 3 (I) от 13 февраля 1946 года и 95 (I) от 11 декабря 1946 года Генеральной Ассамблеи Организации Объединенных Наций, изгнание в результате вооруженного нападения или оккупации и бесчеловечные действия, являющиеся следствием политики апартеида, а также преступление геноцида и наказании за него, даже если эти действия не представляют собой нарушения внутреннего законодательства той страны, в которой они были совершены.

Статья II

В случае совершения какого-либо из преступлений, упомянутых в статье I, положения настоящей конвенции применяются к представителям государственных властей и частным лицам, которые выступают в качестве исполнителей этих преступлений или соучастников таких преступлений, или непосредственно подстрекают других лиц к совершению таких преступлений, или участвуют в заговоре для их совершения, независимо от степени их завершенности, равно как и к представителям государственных властей, допускающим их совершение.

Статья III

Государства — участники настоящей конвенции обязуются принять все необходимые внутренние меры законодательного или иного характера, направленные на то, чтобы в соответствии с международным правом создать условия для выдачи лиц, указанных в статье II настоящей конвенции.

Статья IV

Государства — участники настоящей конвенции обязуются принять в соответствии с их конституционной процедурой любые законодательные или иные меры, необходимые для обеспечения того, чтобы срок давности, установленный законом или иным путем, не применялся к судебному преследованию и наказанию за преступления, указанные в статьях I и II настоящей конвенции, и чтобы там, где такой срок применяется к этим преступлениям, он был отменен.

Статья V, VI, VII, VIII, IX...

Декларация Организации Объединенных Наций о правах коренных народов

Организация Объединенных Наций A/61/L.67
Генеральная Ассамблея
7 September 2007
Russian
Original: English
07-49832 (R) 100907 100907
0749832

Генеральная Ассамблея, принимая к сведению рекомендацию Совета по правам человека, содержащуюся в его резолюции 1/2 от 29 июня 2006 года, в которой Совет принял текст Декларации Организации Объединенных Наций о правах коренных народов, ссылаясь на свою резолюцию 61/178 от 20 декабря 2006 года, в которой она постановила отложить рассмотрение Декларации и принятие

решения по ней, чтобы дать время для проведения относительно нее дальнейших консультаций, и постановила также завершить ее рассмотрение до конца шестьдесят первой сессии Генеральной Ассамблеи, принимает Декларацию Организации Объединенных Наций о правах коренных народов, содержащуюся в приложении к настоящей резолюции.

Статья 1

Коренные народы имеют право, коллективно и индивидуально, на полное осуществление всех прав человека и основных свобод, признанных в Уставе Организации Объединенных Наций, Всеобщей декларации прав человека и в нормах международного права, касающихся прав человека.

Статья 2

Лица, принадлежащие к коренным народам, и коренные народы свободны и равны со всеми другими народами и людьми и имеют право быть свободными от какой бы то ни было дискриминации при осуществлении своих прав, в особенности дискриминации на основе их коренного происхождения или самобытности.

Статья 3

Коренные народы имеют право на самоопределение. В силу этого права они свободно устанавливают свой политический статус и свободно осуществляют свое экономическое, социальное и культурное развитие.

Статья 4

Коренные народы при осуществлении их права на самоопределение имеют право на автономию или самоуправление в вопросах, относящихся к их внутренним и местным делам, а также путям и средствам финансирования их автономных функций.

Статья 5

Коренные народы имеют право сохранять и укреплять свои собственные политические, правовые, экономические, социальные и культурные институты, сохраняя при этом свое право, если они того желают, на полное участие в политической, экономической, социальной и культурной жизни государства.

Статья 6

Каждый человек, принадлежащий к коренному народу, имеет право на гражданство.

Статья 7

1. Лица, принадлежащие к коренным народам, имеют право на жизнь, физическую и психическую неприкосновенность, свободу и личную безопасность.

2. Коренные народы имеют коллективное право на жизнь в условиях свободы, мира и безопасности в качестве самобытных народов и не должны подвергаться никаким актам геноцида или каким бы то ни было другим актам насилия, включая принудительное перемещение детей, принадлежащих к группе, в другую.

Статья 8

1. Коренные народы и принадлежащие к ним лица имеют право не подвергаться принудительной ассимиляции или воздействию в целях уничтожения их культуры.

2. Государства обеспечивают эффективные механизмы предупреждения и правовой защиты в отношении:

a) любого действия, имеющего своей целью или результатом лишение их целостности как самобытных народов или их культурных ценностей, или этнической самобытности;

b) любого действия, имеющего своей целью или результатом лишение их своих земель, территории или ресурсов;

c) принудительного перемещения населения в любой форме, имеющего своей целью или результатом нарушение или подрыв любого их права;

d) принудительной ассимиляции или интеграции в любой форме;

e) пропаганды в любой форме, имеющей целью поощрение или разжигание расовой или этнической дискриминации, направленной против них.

Статья 9

Коренные народы и принадлежащие к ним лица имеют право принадлежать к коренной общине или народности в соответствии с традициями и обычаями данной общины или народности. Осуществление такого права не может порождать никакой дискриминации в какой бы то ни было форме.

Статья 10

Коренные народы не подлежат принудительному удалению со своих земель или территорий. Никакое перемещение не осуществляется без свободного, предварительного и осознанного согласия соответствующих коренных народов и производится после заключения соглашения, предусматривающего справедливую и честную компенсацию и, где это возможно, вариант возвращения.

Статья 11

1. Коренные народы имеют право на соблюдение и возрождение своих культурных традиций и обычаев. Это включает в себя право на сохранение, защиту и развитие прежних, нынешних и будущих форм проявления их культуры, таких, как археологические и исторические объекты, памятники материальной культуры, рисунки, обряды, технологии, изобразительное и исполнительское искусство и литература.

2. Государства обеспечивают средства правовой защиты через эффективные механизмы, которые могут включать в себя реституцию, разработанные совместно с коренными народами, в отношении их культурной, интеллектуальной, религиозной и культовой собственности, отчужденной без их свободного, предварительного и осознанного согласия или в нарушение их законов, традиций и обычаев.

Статья 12

1. Коренные народы имеют право соблюдать, отправлять, развивать и передавать свои духовные и религиозные традиции, обычаи и обряды; право сохранять, охранять и посещать без постороннего присутствия свои места религиозного и культурного значения; право пользоваться и распоряжаться своими обрядовыми предметами и право хоронить на родине останки своих умерших.

2. Государства стремятся обеспечить возможность доступа к находящимся у них обрядовым предметам и останкам умерших и/или их возвращения на родину в рамках справедливых, транспарентных и эффективных механизмов, разработанных совместно с соответствующими коренными народами.

Статья 13

1. Коренные народы имеют право возрождать, использовать, развивать и передавать будущим поколениям свою историю, языки, традиции устного творчества, философию, письменность и литературу, а также давать свои собственные названия и имена общинам, местам и лицам и сохранять их.

2. Государства принимают действенные меры по обеспечению защиты этого права, а также по обеспечению того, чтобы коренные народы могли понимать происходящее и быть понятыми в ходе политических, судебных и административных процессов, путем, если это необходимо, обеспечения перевода или с помощью других надлежащих средств.

Статья 14... Статья 46...

ՆՈՐԱՀԱՅՏ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Վերջին ժամանակներս հայերի ցեղասպանության վերաբերյալ հայտնաբերվել են նոր կարևոր աղբյուրներ և փաստաթղթեր: Երկարատև որոնումների արդյունքում գերմանական Բադեն-Բադեն քաղաքի արխիվում, գերմանական արտաքին քաղաքականության փաստաթղթերի ժողովածուում (1937 - 1945), «D» սերիայի 7-րդ հատորի 171 էջում հայտնաբերվեց այն արտահայտությունը, որն արել է **Հիտլերը** 1939թ. օգոստոսի 22-ին: Այն ներկայացնում ենք տողերիս հեղինակի թարգմանությամբ: Ահա այն. **«Ես հրամայել եմ… այն մասին, որ պատերազմի նպատակը ոչ թե որոշակի սահմանագծի հասնելն է, այլ հակառակորդի ֆիզիկական բնաջնջումը: Արդ, ես հրահանգել եմ իմ ընտիր մահապարտներին անգութ և անխնա բնաջնջել լեհական ցեղին ու լեզվին պատկանող տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այդպես մենք կարող ենք նվաճել մեզ անհրաժեշտ կենսատարածքը: Ի վերջո ո՞վ է հիշում այսօր հայերի բնաջնջումը»**:

Հետազոտողների տվյալներով ներկայում Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության արխիվներում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ գոյություն ունեն ավելի քան երեք հազար փաստաթուղթ, որոնցից միայն մի մասն է հրապարակվել: Եվ ահա այդ փաստաթղթերի մի մասը ծավալուն ժողովածուով կազմել ու հրապարակել է գերմանացի հայտնի հրապարակախոս, լրագրող, հմուտ հետազոտող **Վոլֆգանգ Գուստը:** Շուրջ 700 էջանոց այդ ժողովածուն նոր լույս է սփռում Հայոց ցեղասպանության հաստատման, միջազգային ճանաչման ու դատապարտման ասպարեզում: Առանց տարակուսանքի կարելի է ասել, որ այդ ժողովածուն կարևոր դեր խաղաց 2005 թվականի հայերի ցեղասպանության վերաբերյալ Գերմանիայի Բունդեսթագի կողմից բանաձև ընդունելու գործում: Ցավոք աշխարհի մեծ տերություններից մեկը՝ Գերմանիան, Թուրքիայի ճնշման ներքո, բանաձևում չի օգտագործել ցեղասպանություն - գենոցիդ բառը: Այդուհանդերձ բանաձևում գրված է. **«Բունդեսթագը ցավում է Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության արաքների համար, որոնք հանգեցրել են Անատոլիայի հայերի գրեթե լրիվ բնաջնջմանը: Նա ցավում է նաև գեմանական ռայխի անփառունակ դերի համար, որը, բազմակողմանիորեն իրազեկ լինելով հայերի նկատմամբ կազմակերպված հալածանքների ու բնաջնջման մասին, նույնիսկ չի փորձել կասեցնել ոճրագործությունները»**: Փաստորեն, բանաձևում արտացոլված է հայերի ցեղասպանության էությունը: Դրանով Գերմանիան դառնում է աշխարհի 17 պետությունը, որը, ըստ էության, ճանաչում է հայերի ցեղասպանությունը, դատապարտում է ցեղասպան թուրքական պետությանը:

Փաստաթղթերի ռուսերեն ժողովածուն սկսվում է Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան **Հանս Վանգենհայմի**՝ արտաքին գործերի պետական քարտուղար Գոտլիբ Ֆոն Յագովին 1913թ. հունիսի 5-ին ուղարկած նամակով: Այնտեղ նա գրում է. **«Առանց Հայկական հարցի լուծման անհեռանկար է ուզած քաղաքականություն, որն ուղղված է թուրքական տիրապետության դադարեցմանը… Այն հանգամանքը, որ թուրքերը չեն կարող համատեղ ապրել հայերի հետ, պայմանավորված է հայերի համեմատ թուրքերի տնտեսական անընդունակությամբ: Այդ կապակցությամբ բնորոշ է Ադանայի օրինակը: Մի քանի տարի առաջ այնտեղ տեղի ունեցան հայերի կոտորածներ, և այն ամենը, ինչ պատկանում էր հայերին, իսպառ ավերվեց ու այրվեց… Վայրագությունը կարելի է կանխել միայն եվրոպական ներկայացուցիչների առկայությամբ: Հյուպատոսները անբավարար են: Այնտեղ պետք է լինեն այնպիսի մարդիկ, որոնք ունակ են մարտի մեջ մտցնել ոստիկանությանը կամ զինվորական միավորում»:**

Ինչպես տեսնում ենք՝ հետաքրքիր մոտեցում է ցուցաբերում փորձված դիվանագետ Վանգենհայմը, սակայն երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, նա հանդես եկավ բացահայտ հակահայկական ու թուրքամետ դիրքորոշմամբ:

Որպես գերմանական աղբյուր, առաջին անգամ հրապարակվում է այն պաշտոնական փաստաթուղթը, որը հաստատում է Հայոց Մեծ եղեռնի խորհրդանշող օրը՝ ապրիլի 24-ը: 1915թ. ապրիլի 30-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռայխկանցլեր **Բեթման Հոլվեգին** ուղարկած զեկուցագրում հաղորդում է, որ **«Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը և ամբողջ կիրակի ու երկուշաբթի՝ 26-ի օրը այստեղ կատարվել են բազմաթիվ հայերի ձերբակալություններ… Ձերբակալվածները հիմնականում բժիշկներ, լրագրողներ, գրողներ, հոգևորականներ, ինչպես նաև մի քանի հայ պատգամավորներ են»**:

Գերմանական հորահայտ փաստաթղթերում նշված են այն միջոցներն ու մեթոդները որոնցով իրականացվում էր հայերի ցեղասպանությունը: Նույն Վանգենհայմը 1915թ. հուլիսի 13-ին ռայխկանցլեր Բեթման Հոլվեգին ուղարկում է գերմանա-ամերիկյան որբանոցում աշխատող, գերմանուհի **Ֆրիդա Վոլֆ Գունեկեի** նամակում նկարագրված հայերի ցեղասպանության աննախադեպ, սարսափելի տեսարանները: Նա գրում է, որ **«սուլթան Համիդի ժամանակվա դաժանությունների փորձով հայ բնակչությանը սկզբում զինաթափում էին, այնուհետև մորթում»:**

Ֆրիդա Վոֆը գրում է, նաև, որ սիրիական անապատներ տեղահանված հայերը բացարձակապես մնում էին առանց հարցի ու ջրի և մեռնում էին սովից ու հիվանդություններից: Երբ որևէ մեկը դիմում էր թուրք ոստիկաններին ու չինովնիկներին, թե ո՞րն է այդ դաժանությունների պատճառը, նրանք պատասխանում էին. **«այդպես են հրամայել գերմանացիները»**:

Ֆրիդա Վոլֆը հետևություն է անում. **«Եթե մենք՝ գերմանացիներս, մեզ համարելով Թուրքիայի բարեկամներ ու այդ ամենը տեսնելով հանգիստ լռում ենք, ապա մենք վայրենիներ ենք»**:

Հայերի ցեղասպանության ականատես գերմանացի մայոր **Ֆոն Միկուշը** պատմում է, որ 3000 բնակչությամբ հայկական մի գյուղում թուրքական զինված խմբերը հայերի մի մասին նետում էին ջրհորներ, իսկ մյուս մասին այրում էին նավթով, ողջակիզում: Այսպիսով, ողջակիզում սկզբում կիրառվել է հայերի նկատմամբ, իսկ հետո՝ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ, հրեաների նկատմամբ:

Նորահայտ փաստաթղթերում նշվում է, որ հայերի ցեղասպանության միջոց էր նաև բռնի թուրքացումն ու իսլամացումը: 1915թ. դեկտեմբերի 15-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի գլխավոր հյուպատոս **Մորդմանը** գրում է, որ հայերի բռնի թուրքացումն ու իսլամացումը առավել լայն շրջանակներով իրականացվել է Տրապիզոնի մարզում, իսկ Սամսունի փոխհյուպատոս Կուկհոֆը հաղորդել է, որ հայ եկեղեցիները վերածվում են մզկիթների:

Նորահայտ փաստաթղթերում որոշակիորեն բացահայտվում են թուրքական ռազմական իշխանությունների, նրանց ղեկավարների հրամանները հայերի տեղահանությունների ու բնաջնջման մասին: 1915թ. օգոստոսի 29-ին գերմանական նախարար-ռեզիդենտ (հետախուզության գաղտնի ղեկավար) **Մաքս Ֆոն Օպպենհայմը** ռայխկանցլեր Բեթման Հոլվինգին ուղարկած հաղորդագրության մեջ հայտնում է, որ հանդիպել է Ջեմալ փաշայի հետ և ծանոթացել նրա հրամաններին, որոնք վերաբերում էին տեղահանված հայերի նկատմամբ գործողություններին: Այդ հրամաններից մեկը ստորագրվել է 1915թ. մարտի 16-ին (թուրքական հին տոմարով): Փաստաթղթում նշված է, որ Զեյթունի շրջակայքում անհրաժեշտ է կանխել կամ դադարեցնել թուրք բնակչության խժդժությունները, որպեսզի տեղահանվող հայերի դեմ կիրառվող գործողությունները իրականաց-

վեն հիմնականում զինվորականների կողմից: 1915թ. ապրիլի 2-ին Ջեմալ փաշան ստորագրում է մեկ այլ հրաման, որով պարտադրվում է թուրքական իշխանություններին՝ իրագործել հայ բնակչության համընդհանուր տեղահանություն: Այնուհետև, 1915թ. ապրիլի 28-ին, մայիսի 25-ին, հունիսի 4-ին ու 10-ին արձակած հրամաններով, Ջեմալ փաշան խնդիր է դնում հայերի տեղահանությունը կազմակերպել և իրագործել այնպես, որպեսզի հայերի նկատմամբ կատարած դաժանությունների մասին լուրերը չհասնեն արտասահմանյան երկրներ:

Փաստաթուղթը հաստատում է, որ հայերի տեղահանության ու ցեղասպանության մասին, բացի Թալեաթի հրամաններից, եղել են նաև Ջեմալի հրամանները:

Պաշտոնական զեկուցագրերում տեղ են գտել նաև հայերի ցեղասպանությանը կայզերական Գերմանիայի մեղսակցությունը հաստատող նոր վավերագրեր: Դրանցից մեկը Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան **Վոլֆ Մետերնիխի** 1915թ. դեկտեմբերի 7-ին ռայխկանցեր Բեթման Հոլվեգին ուղարկած զեկուցագիրն է և դրա հետ կապված գերմանական վարչապետի՝ ռայխկանցլերի պատասխանը: Դեսպանը գրում է. **«Վերջին շաբաթներին հայկական սարսափների մասին խոսել եմ էնվեր փաշայի, Խալիլ Բեյի, իսկ այսօր Ջեմալ փաշայի հետ և ասել եմ, որ այդ ամենի նկատմամբ հուզումներն ու զայրույթը տարածվել են արտասահմանյան երկրներում և հատկապես Գերմանիայում... Ջեմալ փաշայի շտաբի պետ Ֆոն Կրեսը, ինձ հետ խոսելիս, շեշտել է, որ այս աղետը աննկարագրելի է, և գերազանցում է նախորդ բոլոր պատկերացումները: Ի դեպ՝ տարածում է գտել այն տեսակետը, որ գերմանացիները համաձայնվել են կոտորածների հետ»**: Վոլֆ Մետերնիխը նշում է, որ Կոստանդնուպոլսի ոստիկանության պետի հայտարարությամբ քաղաքից տեղահանվել է 4000 հայ և խնդիր է դրված վերջ տալ այդ քաղաքում ապրող շուրջ 80 հազար հայի գոյությանը:

Հարկ է ասել, որ գերմանացի դեսպան Վոլֆ Մետերնիխը, որը գերմանացի դիվանագետների մեջ առավել մարդասեր և արդարամիտ էր, առաջարկում էր Գերմանիայի կառավարողներին կոնկրետ ու զորեղ միջոցներով դադարեցնել հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը:

Ջեկուցագիրը ստանալուց տասն օր անց, դեկտեմբերի 17-ին, ռայխկանցլերը գրավոր հայտնում է իր տեսակետը: Ահա այն. **«Մեր միակ նպատակը մինչև պատերազմի վերջը Թուրքիային մեր կողմը պահելն է, մեզ համար միևնույնն է՝ կկոտորվեն հայերը, թե ոչ: Պատերազմի առավել շարունակման դեպքում թուրքերը մեզ դեռ շատ պետք կլինեն: Չեմ հասկանում, ինչպես կարող է Մետեռնիխը այդպիսի բան առաջարկել»**:

Հայերի նկատմամբ նման միտք է արտահայտել նաև Գերմանիայի արտաքին գործերի նախարար **Արթուր Ցիմմերմանը**. **«Ըստ էության, հայերը պետք չեն Գերմանիային: Հայերով բնակեցված Հայաստանը վնասաբեր է Գերմանիայի շահերին»**:

Գերմանաիայի պաշտոնական շրջանների նման դիրքորոշումը էլ ավելի էր նպաստում թուրքական մոլեռանդ իշխանությունների հակահայկական բարբարոսություններին: 1915 թվականի սեպտեմբերի 2-ին, երբ գերմանացի զինծառայողներից մեկը դիմում է հայերի տեղահանության հանճնաժողովի թուրք նախագահին՝ չորս հայ երեխաների ազատ արձակելու մասին, լսում է հետևյալ պատասխանը. **«Դուք չեք հասկանում թե մենք ինչ ենք մտածում: Մենք ուզում ենք արմատապես ոչնչացնել հայ անունը... Մենք ուզում ենք միայն ու միայն թուրքերի գոյությունը»**:

Տողերիս հեղինակը սեփական նախաձեռնությամբ կազմակերպել է այս և այլ նորահայտ փաստաթղթերից առավել կարևորների թարգմանությունը գերմաներենից ռուսերեն և իր խմբագրությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակել է Երևանում: Այդ փաստաթղթերը, ինչպես գերմաներեն, այնպես էլ ռուսերեն, հրապարակվել են առաջին անգամ: Մենք հավատում ենք, որ այս կերպ մեր համեստ վաստակն ենք բերել Հայոց ցեղասպանության դատապարտման և հետևանքների վերացման անշրջելի գործընթացին, երբ էլ որ այն սկիզբ առնի:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, տեղեկատվության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս

ԼԵՓՍԻՈՒՍԸ ԹԱՔՑՐԵ՞Լ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բունդեսթագում Ձախերը պահանջում են քննադատական մոտեցում ցուցաբերել Յոհաննես Լեփսիուսի (1858-1926) ունեցած դերի հանդեպ եւ վերանայել այն: Հուլիսի 29-ին Բունդեսթագում Ձախերի խմբակցության խոսնակ Ուլլա Ելփկեի հարցապնդմանն է անդրադառնում գերմանական «Վելթը»՝ մեջբերելով խոսնակի բառերը. «Լեփսիուսը ոչ միայն հալածյալ հայերի իրավունքների պաշտպան է եղել, այլեւ՝ աջակողմյան հակաժողովրդավար (անտիդեմոկրատ)»: Լեփսիուսն Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայոց ցեղասպանության մեջ գերմանացիների ունեցած պատասխանատվությանը վերաբերող հրատարակած վավերաթղթերն իբր անհետացրել է: Անդրադարձը լրացնում է ձախերի «Յունգե վելթ» օրաթերթում տպագրված «Պարզաբանել եւ կոծկել» հոդվածը, ուր ենթավերնագիր է՝ Հայոց ցեղասպանության հիշատակի կենտրոնին աջակցելով դաշնային կառավարությունը պատվում է Վայմարյան Հանրապետությանն ընդդիմադիր աջ արմատականին: Հոդվածագիրը ներկայացնում է պատգամավոր Ելփկեի նույնաբովանդակ հարցապնդումը, թե պատմության կեղծարարին պատվելով չի՞ վտանգում արդյոք ցեղասպանության հիշատակն ընդհանրապես: 2005-ին Բունդեսթագում Հայոց ցեղասպանության մասին ընդունված բանաձեւից բխող հիշատակի մի ձեւ էր հայերի կենաց համար մարտնչած Լեփսիուսի՝ Պոտսդամում գտնվող տունը մոռացությունից փրկել՝ հիշատակի վայր դարձնելով: Բացումը նախատեսված է 2008-ի դեկտեմբերին՝ Լեփսիուսի ծննդյան 150-ամյակին ընդառաջ: «Յունգե վելթն» ներկայացնում է նաեւ ցեղասպանագետ Վոլֆգանգ Գուստի կարծիքը. «Լեփսիուսը երկու մեծ գործ է արել՝ ցեղասպանության պարզաբանումն ու գերմանական դերի կոծկումը: Պատերազմից հետո արտգործնախարարությունը փաստաթղթերի խմբագրումը հանձնարարել է Լեփսիուսին, որ բացթողումներով ու կեղծարարությամբ կոծկել է Գերմանիայի պատասխանատվությունը»: Այն, որ 1919-ին Լեփսիուսի հրատարակած «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918» վավերաթղթերի ժողովածուն մեքենայությունների համարում ունի, ընդունում է նաեւ դաշնային կառավարությունը փոքր հարցմանն ի պատասխան:

Գերմանական օրաթերթերում հրապարակված այս կարծիքը մեզ՝ հայերիս համար է դժվար հարցական դնում. անշուշտ, 19-րդ դարի մտավորականությունը ազգայնական էր, բայց վերը շարադրվածն անցնում է այդ սահմանը: Ինչպիսի՞ դիրք պիտի ունենանք հայության մեջ սրբացված այնպիսի մի անհատի հանդեպ, ինչպիսին Յոհաննես Լեփսիուսն է: Հարց, որ քննարկման հրավեր է ակնկալում:

(«Ազգ», 31. 07. 2008թ., ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա)

ԹՈՒՐՔ ԲԺԻՇԿՆԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Հայոց ցեղասպանության ժամանակ բազմաթիվ թուրք բժիշկներ մասնակից եղան ու իրենց ձեռքերը լվացին հայ արվեստակիցների արյունով: Դրանք են՝ **Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը, Մեհմեդ Ռեշիդը, Համդի Սուաթը, Թևֆիք Սելիմը, Մեհմեթ Ռեֆիկ, Սուլեյման Նուման, Ալի Սաիբը, Շևքեթը, Ֆերիտունը, Համդի Սուլեյմանը, Ֆայիքը, Զիան, Հասան Ֆուաթը, Մյուլազըմ Համիթը, Մեհմեթ Էսաթը, Ֆազընլը Բերկինը, Մեհմեթ Հասանը, Ահմեդ Միթհադը** և ուրիշներ: Թուրք բժիշկները հալածում և սպանում էին իրենց պաշտոնակիցներին, որոնցից այնքան շատ բան էին սովորել: Թուրք **բժիշկների ու դեղագործների** հայ բնակչության զանգվածային ջարդերին ակտիվորեն մասնակցելը թուրք **մտավորականության** ճնշող մեծամասնությանը բնորոշ երևույթ էր:

Հայկական տեղահանությունների, Պոլսի հայ մտավորականության ջարդերը կազմակերպող Հատուկ հանձնախմբի (Teskilati Mahsusa) մասնակիցներից մեկը բժիշկ **դոկտոր**[1] **Նազըմն** էր, որը վայրագությամբ իրագործում էր ականավոր հայ բժիշկների ոչնչացումը: Հայ բժիշկները թուրք բժիշկներից առավել մեծ համբավ էին վայելում՝ իրենց բարձր գիտական պատրաստվածությամբ, բարեխղճությամբ, մարդասիրությամբ, և դա անշուշտ շարժում էր թուրք բժիշկների նախանձը և չարությունը հայ բժիշկների նկատմամբ: Ջարդարար, գազանաբարո թուրք բժիշկը ձերբակալել, բանտարկել ու աքսորել էր տվել հայ տաղանդավոր բժիշկներից շատերին, որոնց թվում էր նաև Օսմանյան կայսրության պառլամենտի անդամ, բազմավաստակ բանասեր, երկրագործ Նազարեթ Տաղավարյանը, ազգային երեսփոխան Կարապետ Փաշայան Խանը, հասարակական գործիչ, բժիշկ, մեծ մտավորական Ռուբեն Սևակը:

1915-ին «Միություն և առաջադիմություն» կուսակցության (Ittihat ve Terakki) կենտրոնում Թալեաթի նախագահությամբ գաղտնի խորհրդակցություն է տեղի ունենում, որի բացման ժամանակ Նազըմը հայտարարում է. «Պետք է գործել արագ ու վճռականորեն: Հայերը վտանգավոր են, ինչպես թարախապալարը. նախ՝ այդ թունավոր վերքն անվտանգ է թվում, սակայն եթե այն ժամանակին չվիրահատվի փորձառու վիրաբույժի կողմից, ապա անհապաղ մահվան կհանգեցնի: Եթե բավարարվենք մասնակի սպանդով, ինչպես դա տեղի ունեցավ 1909-ին Ադանայում և այլուր, ապա դա օգուտի փոխարեն վնաս կպատճառի, քանզի մենք դրանով ռիսկի ենք դիմում արթնացնել այն տարրերին, որոնց (արաբներին ու քրդերին) մենք նույնպես պատրաստվում ենք շարքից հանել, վտանգը եռակի անգամ ավելանում է և դժվարացնում է մեր մտադրության իրականացումը: Եթե մաքրումը չկրի համընդհանուր ու ավարտուն բնույթ, ապա օգուտի փոխարեն վնասն անխուսափելի է: Հայ ժողովրդին պետք է արմատապես ոչնչացնել, որպեսզի և ոչ մի հայ չմնա մեր հողում և մոռացվի այդ անունը»**:**

Նազըմի ելույթից զգացվում է, թե ինչպիսի ոսկերչական ճշգրտությամբ էր նա ըմբռնել ստեղծված պահի հարմարավետությունը: Նա կարողացավ ոչ միայն ճշգրիտ պահն ընտրել, այլև ճիշտ կանխատեսումներ անել մեծ տերությունների «միջամտության» վերաբերյալ:

Շարունակելով իր ելույթը՝ Նազըմը հավելում է. «Թո՛ղ կորչեն բոլոր ոչ թուրքական տարրերը, ինչպիսի ազգության ու կրոնի պատկանելիս էլ որ լինեն: Մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրքական տարրերից»:

1919-ի ապրիլին դատարանում Նազըմը ներկայացվում է որպես Հատուկ կազմակերպության ջարդարար ջոկատների գլխավոր կազմակերպիչ: Հատուկ կազմակերպության մեջ ներգրավված են եղել մարդասպաններ ու պրոֆեսիոնալ ոճրագործներ, որոնք թուրքական արդարադատության և ներքին գործերի նախարարությունների հատուկ թույլտվությամբ կայսրության բազմաթիվ բանտերից ազատ են արձակվել ու ընդգրկվել 50-200 հոգուց բաղկացած «Չեթե» անունը կրող ջարդարար ջոկատների մեջ: Այդ ջոկատները ղեկավարվել են օսմանյան զինվորական ակադեմիայի շրջանավարտ սպաների հատուկ խմբի կողմից: Թեև այդ ջոկատներից շատերը, որպես հրոսակներ, Կովկասյան ռազմաճակատում օգտագործվել են Ռուսաստանի դեմ, այնուամենայնիվ, դատարանն իր ամբաստանագրում պնդում էր, որ «այդ ոճրագործներն ու անհիրավները ստեղծված են եղել հիմնականում ջարդելու ու բնաջնջելու տեղահանվածների քարավանները»: Նազըմին առնչվող ամբաստանագիրը նրան բացահայտորեն ներկայացնում է՝ որպես ցեղասպանության վերջնական որոշումն իրականացնողներից մեկը:

Դատավարության ժամանակ որոշ մեղադրողներ հայտարարեցին, որ «Միություն ու առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի արխիվը գողացել է Նազըմը: Հնարավոր է, որ այդ արխիվը ոչնչացված է: 1919-ի հուլիսի 5-ին Թուրքիայի ռազմական դատարանը, մեղավոր ճանաչելով Նազըմին, հեռակա կարգով մահվան դատապարտեց նրան: Գերմանիայում ապաստանած Նազըմը հետագայում՝ Թուրքիայի կառավարության կողմից ապահովություն ստանալուց հետո, վերադառնում է երկիր և շատ չանցած փորձում տապալել Մուստաֆա Քեմալի[2] վարչակարգը: 1926-ին Անկարայում նրան կախում են:

Բեհաեդդին Շաքիրը իթթիհատի կենտրոնական վարչության ղեկավարներից էր և Թեշքիլաթը Մախսուսեի անդամ: Նա զբաղեցրել է արևելյան նահանգներում գործող ջարդարար ջոկատների գլխավոր հրամանատարի պաշտոնը: Շաքիրը ջարդարար ջոկատներին հատկացրել է մեծ քանակությամբ փող և ոչնչացման միջոցներ: Նա, մոռանալով իր բժշկական երդումը, 1915-ին դարձել էր ամբողջ հայ ազգի, մասնավորապես, հայ բժիշկների ջարդարարը:

Երբ ռուսական բանակը մոտենում է Էրզրում քաղաքին, Շաքիրը հրամայում է քաղաքի բնակչությանը քշել դեպի Երզնկա: Եփրատ գետի ափին դարանակալ քրդերը թուրք զինվորականների հետ կողոպտում, առևանգում են անպաշտպան ժողովրդին և հանձնում գետի հոսանքին: Ռուսական բանակը, գրավելով հայաշատ Էրզրումը, այնտեղ գտնում է 16 հայ ծերունիների և մի քանի պառավ կանանց:

1915-ի ապրիլին նրա կազմած ցուցակներով ձերբակալվում են 58 ականավոր հայ բժիշկներ, որոնց թվում էին Մաքսուդ Աբիկյանը, Նշան Աճեմյանը (Երզնկայում), Միքայել Ղարագյոզյանը (Տիգրանակերտի մոտերքում), Սուրեն Նշանյանը (Կեսարիայում), Միսաք Փանոսյանը (Եվդոկիայում) և այլոք:

Նրա դեմ ամենաճանրակշիռ վկայությունը տվել է 3-րդ բանակի հրամանատար Վեհիբը. «Հայերի կոտորածն ու բնաջնջումը և նրանց ունեցվածքի կողոպտումը արդյունք էին Իթթիհաթ վե Թերաքիի որոշման: Բեհաեդդին Շաքիրն այն մարդկանցից մեկն էր, որը 3-րդ բանակի գոտում հայթայթեց մարդ մորթող մսագործներին, ղեկավարեց ու օգտագործեց նրանց: Կառավարության լիդերները ենթարկվում էին Բեհաեդդին Շաքիրի հրամաններին ու ցուցումներին: 3-րդ բանակի գործողության գոտում տեղի ունեցած մարդկային բոլոր ողբերգությունները, բոլոր սադրանքներն ու անբարոյական արարքները նրա մեքենայությունների արդյունքն էին՝ այդ թվում կախաղանից ազատ արձակված մարդկանց, արյունոտ ձեռքերով ու արնակալած աչքերով ժանդարմների հավաքագրումը»: Այս վկայությունը հաստատել են նաև որոշ թուրք պատմաբաններ:

Վերոնշյալ խորհրդակցությունում ելույթով է հանդես գալիս նաև Բ. Շաքիրը. «Եթե այնպիսի խեղճ մարդը, որպիսին հանդիսացել է Մովսեսը, այնպիսի տարագիրը, որպիսին հանդիսացել է Հիսուսը և այնպիսի որբը, որպիսին հանդիսացել է Մուհամմեդը կարողացել են աշխարհում ստեղծել առանձին մեծագույն կրոններ, ապա ինչո՞ւ մենք՝ ուժեղ կամքի ու խելքի տեր անձինք, չենք կարող ստեղծել ու տարածել մեր կրոնը և Թուրանի գաղափարը»: Այստեղից հետևում է, որ Շաքիրն իր ու երիտթուրքերի մասին շատ մեծ կարծիք ուներ և ցանկանում էր պատմության մեջ այնպիսի հանրաճանաչություն վայելել, ինչպիսին՝ վերոնշյալ անձինք: 1920-ին Բ. Շաքիրը քաղաքացիական օրենսգրքի

171-րդ և 181-րդ հոդվածներով հեռակա կարգով մահված է դատապարտվում: Դոկտոր Նազըմի նման նա նույնպես ապաստանել էր Գերմանիայում[3] և դատավճռի արձակումից 2 տարի անց՝ 1922 թվականի ապրիլի 17-ին, Շաքիրին Բեռլինում պատուհասում է վրիժառու Արամ Երկանյանը:

1915-ին Դիարբեքիրի կառավարիչ **Մեհմեթ Ռեշիդը** ապրիլի 19-ին հրամայում է ձերբակալել Դիարբեքիրի ազգային վարչական մարմիններին, առևտրականներին, հայ բժիշկներին, եկեղեցականներին, ուսուցիչներին, մի խոսքով՝ տեղի հայության ընտրանուն՝ թվով 635 մարդ: Արյունարբու թուրք և քուրդ զինվորականները նրանց տանում և գազանաբար սպանում են Բեզվանի ձորում:

Ռեշիդի հրամանով իրականացվում է 800 հայ երեխաների ողջակիզումը. մեկ շինության մեջ են լցնում 800 հայ երեխաների և կրակի տալիս: Նա է գլխավորել ավելի քան 100.000 քրիստոնյաների սպանդը:

Պոլսի «Ռեսիմլի Թարիհ» հանդեսը 1953-ի հուլիսի 5-ին հրապարակել է մի ուշագրավ հարցազրույց՝ կապված բժիշկ Ռեշիդի հետ. «Դուք բժիշկ էիք և իբրև բժիշկ ձեր պարտականությունն էր մարդ փրկել: Ինչպե՞ս եղավ, որ այսքան անմեղների գունդ առ գունդ ձերբակալելով, մահվան գիրկը նետելու պատճառ եղաք»: Ռեշիդը պատասխանում է. «Չնայած, որ մասնագիտությամբ բժիշկ եմ, սակայն չեմ կարող ուրանալ իմ ազգությունը: Ես աշխարհ եմ եկել որպես թուրք: Իմ ազգային ինքնությունն ամեն ինչից առաջնային է... Հայ դավաճաններն ապաստան էին գտել հայրենիքի ծոցում: Նրանք վտանգավոր մանրէներ էին: Մի՞թե բժշկի պարտականությունը չէ այս մանրէներին ոչնչացնելը: Կա՛մ հայերը պիտի վերացնեին թուրքին և տիրանային այս երկրին, կա՛մ էլ նրանք պիտի ոչնչացվեին թուրքի կողմից: Ես չէի կարող վարանել և կատարեցի իմ ընտրությունը: Թուրք լինելս գերակայեց իմ բժշկական կոչման վրա: Իհարկե, խիղճս տանջում է, բայց և ես չէի կարող տեսնել իմ երկրի կործանումը: Փակեցի աչքերս և գործի անցա առանց վերապահության: Իսկ ինչ վերաբերում է պատմության առջև պատասխանատվությանը, ապա հոգը չէ, թե այլ ազգերի պատմաբաններն ինչ կգրեն իմ մասին»: Ահա և թուրք բժշկի մոտ ֆանատիզմը հաղթում է ողջամտությանը: 1919-ին՝ ոստիկանության կողմից բռնվելու հաջորդ օրը, ինքնասպան է եղել:

1917թ. «Գաղթականական ալբոմում» առաջին անգամ տպագրված լուսանկարը

Դարեր ի վեր բժշկական գիտաժողովներում խստիվ դրված է եղել այն հարցը, որ մարդկանց վրա գիտափորձեր կատարելն արգելվում է: Մինչ այդ, աշխարհի ոչ մի բժշկական կազմակերպություն և ոչ մի բժիշկ ողջ մարդկանց վրա գիտական փորձեր չէր արել, մինչև անգամ մահվան դատապարտվածների վրա: Բայց թուրք բժիշկները հաշվի չէին առնում միջազգային մարդասիրական որևէ օրենք: Նրանք աննախադեպ ոճրագործ քայլերի դիմեցին:

1915-ին օսմանական բանակում բծավոր տիֆը մեծ չափերի հասավ, ինչի պատճառով խիստ մեծացավ «դրա դեմ պատրաստված» շիճուկի պահանջարկը: Սանիտարական վարչության բժիշկ-մանրէաբանները ստեղծել էին բծավոր տիֆի պատվաստում-վիրուս: Շաքիրն առաջին բժիշկն էր, որ շիճուկի առաջին նմուշներն անձամբ փորձարկեց հայերի վրա: Ավելին, թուրքական բժշկական խորհրդում հենց նա առաջարկեց փորձեր կատարել հայ զինվորների և տարագիրների վրա: Ինչպես վկայում է օսմանյան բանակում ծառայող մի սիրիացի բժիշկ, տիֆի, դիզենտերիայի ու տենդի լայն տարածումը զորքերում տեղի էր ունենում այն պատճառով, որ զինվորները երբեմն խմում էին այնպիսի ջուր, ինչից հրաժարվում էին անգամ անասունները: Բացի այդ, դեղերի ու ապանեխիչների պաշարը սպառված էր, մինչդեռ բնակավայրերի շուրջը լճացած նեխաջրերը և անթաղ դիակների ժանրահոտը (ժանտահոտը, կամ ժահրահոտը) վարակիչ հիվանդությունների պատճառ էին: Հաստատված է, որ 1915 թվականին ռուսական զորքերը, վախենալով քաղաքի բնակչությունը կործանող վարակիչ հիվանդություններից, վարանում էին շարժվել էրզրումի կողմերը, ուր օրական 1000 մարդ էր մեռնում տիֆից ու ծաղկից:

Եվ շիճուկի առաջին փորձերը կատարվեցին Երզնկայում 1915-ի ձմռանը՝ Մյունխենի բժշկական համալսարանում կրթություն ստացած, կայսերական բժշկական վարժարանի պաթոլոգիական կազմախոսության պրոֆեսոր **Համդի Սուաթի (Աքնար)**[4] և նրա օգնականների՝ 3-րդ բանակային կորպուսի գլխավոր բժիշկ **Թևֆիք Սելիմի (Սաղլամ)** ու մյուս թուրք բուժաշխատողների կողմից: Նրանք հազարավոր հայ զինվորների ու տարագիրների ներարկում էին գիտական հաստատում չգտած, բծավոր տիֆի դեմ պատրաստված շիճուկը, ինչով և նրանց մահվան դատապարտեցին: Պատվաստանյութը պատրաստված էր ամեն տեսակ գիտական տեսության հակառակ: Երզնկայում ապաստանած հազարավոր հայերի հետ վարվում էին այնպես, ինչպես փորձակենդանիների հետ: Նրանց ուժով նետում էին Երզնկայի հիվանդանոցը և «գիտական» փորձերի ենթարկում: Այդ մասին 1918-ի դեկտեմբերի 23-ին վկայություններ է տվել Հայդար Ջեմալը՝ բաց նամակ ուղարկելով ներքին գործերի նախարարությանը: Վերջինս որպես բժիշկ աշխատել է նույն հիվանդանոցում և ականատես է եղել այդ «գիտափորձերին»:

Այդ պատվաստանյութով Երզնկայում փորձեր կատարողներից մեկը զինվորական բժիշկ **Մյուլազըմ (Թեղմեն) Համիթն էր**, որի համար փորձի առարկա են հանդիսացել հայ կուրսանտները և բժիշկները: Մյուլազըմ Համիթը փորձերում օգտագործելու նպատակով նրանց վերցնում էր Երզնկայի Ռազմական Ակադեմիայից, ապա նման եղանակով սպանում:

Այդ «գիտափորձերի» հետևանքով շատ հայ երեխաներ և զինվորներ զոհվեցին: Հայ զինվորներին կենտրոնացնում էին աշխատանքային գումարտակներում ու բռնի պատվաստումներ անում: Նախքան պատվաստումը, նրանց խաբում էին՝ ասելով, թե պատվաստումը նախատեսված է բծավոր տիֆի դեմ: Պատվաստումները մեծ մասշտաբ էին ընդունել: Տվյալ ժամանակվա ստամբուլյան թերթերը թմբկահարում էին «մեծ հրաշքի» և «գիտական մեծ հայտնագործության» մասին: Անվերջ շնորհավորական հեռագրեր էին ուղարկվում: Եթե որոշ թուրք բժիշկներ իսկապես գիտական փորձեր էին կատարում, ապա մնացածների համար դա ծառայում էր անցանկալի անձանցից շուտափույթ կերպով ազատվելու միջոց: Պատվաստումների ենթարկվածների մեծամասնությունը մահանում էր դրանցից մի քանի օր անց: Նման չարագործությունների էին դիմում նաև թուրք բժշկապետեր **Թևֆիք Սելիմը, Մեհմեթ Ռեֆիկ, Սուլեյման Նումանը, պրոֆեսոր բժիշկ Մեհմեթ Էսաթը (Ըշըք)** և ուրիշներ:

Իրականում նախատեսված էր փորձերն իրականացնել լաբորատոր կենդանիների՝ ծովախոզուկների ու ճագարների վրա: Այս փորձակենդանիներին ներարկում էին տիֆային արյուն, որը եռացված չէր մինչև 56 աստիճան, ինչի հետևանքով այն մնում էր չախտահանված:

Կայսերական վարժարանի պրոֆեսոր, օսմանյան ռազմական ուժերի գլխավոր բժիշկ, բրիգադի գեներալ **Սուլեյման Նումանը**, որն իթթիհատի կարկառուն դեմքերից էր, Էնվերի անբաժան մտերիմը, թուրքական բանակի առողջապահական քննիչը, հարյուրավոր հայերի ողբերգական մահվան պատճառ է դարձել: Նա հովանավորել է ջարդարար թուրք բժիշկներին, որոնցից շատերն աստիճանի բարձրացում են ստացել իրենց գործած հանցագործությունների համար: Նրա անվան հետ է կապված էրզրումի, Սեբաստիայի և Երզնկայի բնակչությանը թունավորումների

ճանապարհով ոչնչացնելու գործողությունների իրականացումը: Այս բժիշկ-քաղաքագետը, լինելով բանակի բժշկական անձնակազմի պետը, դատապարտվել է հայ բժիշկների և բանակի հայ բժշկական անձնակազմի անդամների սպանությունը լիազորելու ոճրագործության համար:

Տրապիզոնի վիլայեթի առողջապահական ծառայության ղեկավար **Ալի Սաիբի** հանձնարարությամբ որբացած հայ երեխաներին և հիվանդներին ներարկել էին նոր դեղորայք, ինչի հետևանքում նրանք բոլորը թունավորվեցին ու մահացան: Այս մասին տեղյակ էր Առողջապահական կազմակերպության տեսուչ, բժիշկ **Զիյա Ֆուադը**: Որոշ համակենտրոնացման ճամբարներում օգտվում էին Սաիբի մեթոդից:

1915-ին Երզնկայի հիվանդանոցի պաշտոնավորող **Շևքեթը** մտադրվել էր իրագործել նույն հիվանդանոցում աշխատող 8 հայ բժիշկների սպանությունը, բայց հիվանդանոցի աշխատակիցներից ոմանք ավելի «խելացի» են գտնվել. նրանց առաջարկով 8 հայ բժիշկների հանձնարարվել է բուժել բծավոր տիֆով վարակված թուրք զինվորներին: Հետևանքում, նրանք բոլորն էլ, բծավոր տիֆով վարակվելով, մահացել են:

Մեկ այլ թուրք բժիշկ՝ գնդապետի աստիճան ունեցող **Ֆազընլը Բերկինը** Բահաեդդին Շաքիրի հետ կազմակերպել է Սեբաստիայի ու Էրզրումի զանգվածային կոտորածները: Նա իր մասնակցությունն է ունեցել հայ մեծանուն գրողներ Դանիել Վարուժանի ու Ռուբեն Սևակի սպանությունը կազմակերպելու մեջ:

Հազարավոր հայերի սպանության, կանանց ու երեխաների առևանգման վայրագ գործողությունների հեղինակներ են դարձել թուրք բժիշկներ **Մեհմեթ Հասանը (Էզաջի)** և **Ահմեդ Միթհադը**: Նրանք կազմակերպել են կայսրության տարբեր նահագներից տեղահանված հայ զանգվածների կոտորածը: 1919-ին անգլիացիները նրանց ձերբակալեցին ու աքսորեցին Մալթա կղզի:

Սեբաստիայի վիլայեթում հայկական քարավանները կոտորելու գործում թուրք բժիշկներից **Ֆայիքն** անմիջական մասնակցություն է ունեցել: Սեբաստիայի վիլայեթի մեջ մտնող Մարզվան շրջանի կայմակամ (գավառապետ), մասնագիտությամբ բժիշկ Ֆայիքը հպարտորեն հայտարարել էր, որ սպանել ու կախաղան է հանել հազարավոր հայերի և այլոց: Ֆայիքը զինվորական հրամանատար Մահիրի ու ոստիկանապետ Սալիհի հետ միասին կազմակերպում է Մարզվանի 16.000 հայերի տեղահանությունն ու կոտորածը, ինչպես նաև հարյուրավոր հայուհիների հարեմ քշելը: Պատերազմից հետո նա ձերբակալվում է:

Թուրք բժիշկների գործած ոճիրները չէին կարող գաղտնի պահվել: Կոտորածներից հետո որոշ թուրք բժիշկներ ականատեսի իրավունքով և խղճի թելադրանքով, փորձել են մերկացնել իրենց գործընկերների մարդկության դեմ ուղղված հանցագործությունները: Կոտորածի շրջանում թուրք հայտնի բժիշկները, տեղյակ և կամ անձամբ ականատես լինելով կատարված բոլոր «գիտափորձերին», փաստորեն հարկադրված են եղել լռելու: Սակայն բոլորը չէ, որ լռել են: Թուրք արյունարբու բժիշկների կատարած ոճրագործությունների մասին մամուլում հանդես են եկել և դատապարտել առանձին թուրք բժիշկներ:

Նույն թվականի դեկտեմբերի 23-ին վիրաբույժ **Հայդար Ջեմալը** գրում է Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթին. «1916 թվականի սկզբին 3-րդ բանակի առողջապահության գլխավոր պաշտոնատարի հրահանգով, երբ բծավոր տիֆի տարածումը լուրջ խնդիր էր դարձել, Երզնկայում տեղահանման ենթարկվող անմեղ հայերին ներարկել են բծավոր տիֆից տառապող հիվանդների արյուն՝ առանց նախօրոք վարակազերծելու այն: Այս փորձը, որը պատշաճ էր միմիայն կենդանիների վրա կատարելու, պատճառ դարձավ մեծ թվով անմեղ հայերի մահվան, որոնք հավատացած էին, թե ներարկումը բուժման նպատակների համար է»: Հայդար Ջեմալը հայտարարում է, որ դա կարող են հաստատել Երզնկայի կենտրոնական հիվանդանոցի գլխավոր **բժիշկ Ռեֆեթը** և երկու հայ բժիշկ, ովքեր աշխատել են նրա հետ, ինչպես նաև Երզնկայում Կարմիր Խաչի գլխավոր **բժիշկ Սելահեդդինը:**

«Թյուրքյե Ստամբուլ»[5] օրաթերթին ուղարկած և 1918-ի դեկտեմբերի 24-ի 46-րդ համարում լույս տեսած իր նամակում Սելահեդդինը նշել է. «Ներքին գործերի նախարարությանը հասցեագրած վիրաբույժ Ջեմալ Հայդարի բաց նամակում երեկ ես հիշատակվում եմ որպես որոշ փաստերի անմիջական ականատես: Տեղյակ լինելով, թե ինչ է կատարվել Երզնկայի կենտրոնական հիվանդանոցում, իմ պարտքն եմ համարում պարզել այդ գործը…: 1915-ին շատ հայերի, ովքեր դժվարությամբ թաքնվել էին Երզնկայում, որպես փորձադաշտ նետեցին քաղաքի կենտրոնական հիվանդանոց, որպեսզի նրանց վրա բակտերիոլոգիական փորձեր ձեռնարկեն, որոնք սովորաբար իրականացվում են ծովախոզուկների ու ճագարների վրա: Այդպես շատ հայեր մահացան…»:

Թուրքական «Ալեմդար» թերթին ուղարկած և 1919-ի հունվարի 8-ի համարում տպագրված նամակում Սելահեդդինը կրկին անդրադարձել է այդ թեմային. «Եթե ենթադրենք, որ «Միություն ու առաջադիմություն» կուսակցության կառավարությունը երբեք նշանակություն չէր տալիս խղճին, բարոյականությանը, ազնվությանը և ամեն տիպի սուրբ սովորույթներին, ապա հեշտությամբ կարելի է հասկանալ այն իշխող գաղափարը, որը հայերին այդքան տառապանքներ պատճառեց: Միևնույն ժամանակ ոչ ոք պատասխանատվության չկանչվեց կատարած վայրենության համար, և մարդիկ կարծում էին, որ այդ ամենն անպատժելի կմնա»:

Փաստորեն, Սելահեդդինը խոստովանում է, որ հայերի վրա կատարված բծավոր տիֆի շիճուկի փորձերը հեղինակազրկել ու արատավորել են թուրքական բժշկագիտությունը, և որ դրանք ոչ միայն չեն նպաստել մարդկանց առողջության վերականգնմանը, այլև գիտական առումով դրական ոչ մի արդյունք չեն տվել:

Դոկտոր Հայդար Ջեմալի վկայությամբ թուրք պրոֆեսորներից այս փորձն անձամբ ղեկավարել է օսմանյան բժշկական վարժարանի ուսուցիչ **Համդի Սուաթը**, որն այդ փորձերի արդյունքները «Զինվորական բժշկական թերթում» հրապարակելիս, հայտարարել էր, որ իր փորձերը կատարել է «մահվան դատապարտվածների» վրա, բայց իրականում փորձերին ենթարկվածները հայկական ծագում ունեին, որոնց հիմնական մեղքը հայ լինելն էր:

Նամակն անկեղծ խոստովանություն է և իր նախադեպը չունեցող փաստաթուղթ: Իր բողոքն ուղղելով ներքին գործերի նախարարին և պահանջելով պատասխանատվության ենթարկել հանցագործ թուրք բժիշկներին, Հայդար Ջեմալը եզրափակել է. «Հայերի դեմ գործադրված այս վայրագությունները միաժամանակ թե՛ վարչական էին և՛ թե գիտական: Դրանք խայտառակ սպի են բժշկական բնագավառի համար: Ես պատրաստ եմ այս խնդրի շուրջ հաղորդել մանրամասնություններ»:

1919-ի գարնանը Թուրքական ռազմական տրիբունալի 20-րդ նստաշրջանի ընթացքում երկու թուրք բժիշկ՝ Տրապիզոնի առողջապահության ծառայության տեսուչ **Զիա Ֆուադը** և առողջապահության ծառայության ղեկավար **Ադնանը** վկայություններ են տվել այն մասին, որ Տրապիզոն նահանգի առողջապահական ծառայության ղեկավար **Ալի Սահիբը** պարբերաբար թունավորել է քաղաքի Կարմիր Խաչի հիվանդանոց բերված հայ մանուկներին և հրամայել է Սև ծովում ջրահեղձ անել բոլոր նրանց, ովքեր հրաժարվել են ընդունել այդ «դեղամիջոցը»: Դոկտոր Ալի Սահիբը մեկ այլ մեթոդ էլ է կիրառել, որը հայտնի է «շոգեբաղնիք» անվամբ: Շինությունը մինչև վերջ լցվում էր հայ մանուկներով, ապա այնտեղ ներսարած բանակային սարքավորման միջոցով խեղդող, խիստ տաք գոլորշի էին մղում, որն էլ անհապաղ սպանում էր երեխաներին:

Ոչ լրիվ տվյալներով 1915-1918թթ. թուրքերը տիֆի շիճուկ են ներարկել ու սպանել 43 բժշկի, 14 դեղագործի, բժշկական հաստատությունների 13 ուսանողի: Այդ տարիներին թուրքական յաթաղանին զոհ է գնացել շուրջ 170 բուժաշխատող[6]:

Թուրք բժիշկները չկարողացան կանխել նաև զորքերում առաջացած վեներական հիվանդությունները: Թուրք զինվորականների անասնական սանձարձակությունները, ի վերջո, ճակատագրական հետևանքներ ունեցան հենց իրենց համար:

1915-1918թթ. օսմանյան 9 բանակներում հիվանդների ու վիրավորների թվաքանակն ուներ հետևյալ պատկերը.

	հիվանդներ	վիրավորներ
1915	409.560	225.537
1916	853.079	314.936
1917	947.075	48.667
1918	844.878	122.697
Ընդհանուր	3.054.592	711.837

Եթե այս 9 բանակին ավելացնենք այլ ռազմաճակատներում գործող թուրքական զորամիավորումները, ապա հիվանդների ընդհանուր թվաքանակը կկազմի 3.515.471, իսկ վիրավորներինը՝ 763.753: Սրանից հետևում է, որ հիվանդների ընդհանուր թվաքանակն ավելի քան 4.5 անգամով գերազանցել է վիրավորների թվաքանակը:

Իսկ 1915-1918թթ. օսմանյան 9 բանակներում հիվանդություններից ու վերքերից (վիրավորվելուց) մահացածների թվաքանակը հետևյալն է.

	հիվանդություններից մահացածներ	վերքերից մահացածներ
1915	57.462	21.988
1916	126.216	21.986
1917	133.469	8.081
1918	84.712	7.407
Ընդհանուր	401.859	59.462

Եթե այս 9 բանակներին հավելենք այլ ռազմաճակատներում գործող թուրքական զորամիավորումները, ապա հիվանդություններից մահացածների թվաքանակը կկազմի 466.759, իսկ վերքերից մահացածներինը՝ 68.378: Փաստորեն, ստացվում է, որ հիվանդություններից մահացածների թվաքանակը գրեթե 7 անգամով գերազանցում էր վերքերից մահացածների թվաքանակը: Բացի այդ, 1915-ից սկսած թուրքական զորքերում անընդհատ աճում էր հիվանդների ու հիվանդություններից մահացածների թվաքանակը:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրք բարբարոսների ձեռքով կազմակերպված հայկական կոտորածների գործադրման մեջ զգալի դեր է խաղացել թուրքական բժշկական անձնակազմը, որն անմիջականորեն իր մասնակցությունն է ունեցել վայրագությունների իրականացման երկար շղթայի մեջ: Թուրք բժիշկները, օգտվելով ազատ գործելու լայն հնարավորություններից, հայ զանգվածների տեղահանումների, սպանությունների ու ոճիրների ընթացքում աշխույժ գործունեություն են ծավալել բժշկական ահավոր փորձեր կատարելու նպատակով: Իթթիհատական կուսակցությանը հավատարիմ ու նվիրված շատ թուրք բժիշկներ թողեցին իրենց ասպարեզը և դարձան նահանգային կառավարիչներ՝ կազմակերպելով ու իսկելով զանգվածային կոտորածների ողջ ընթացքը:

Կարելի է փաստել, որ երիտթուրքերի ու նացիստների հակամարդկային մեթոդները համընկնում են. համակենտրոնացման ճամբարներ, բժշկական փորձարկումներ, ռասայական խտրականություն, գազը որպես սպանության միջոց: Գերմանացիները և՛ ընդօրինակեցին թուրքերից, և՛ մշակեցին իրենց սեփական փորձը: 20-րդ դարի սկզբին Հարավ-արևմտյան Աֆրիկայում (Նամիբիայում) գերմանական գաղութային ոճրագործ քաղաքականությունը դարձավ նրանց կողմից իրականացված Եվրոպական ցեղասպանության նախատիպը:

ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Թուրքագետ

Ծանոթագրություն

1. Խմբագրությունը մշտապես ձեռնպահ է եղել հեղինակներից ստացված հոդվածները խմբագրելուց, սակայն այս դեպքում մենք համոզված ենք, որ **դոկտոր** բարձր ու պատվավոր կոչումը չի սազում ոճրագործներին, ուստի առաջարկում ենք այսուհետ չգործածել **դոկտոր**, **բժիշկ, պրոֆեսոր, մտավորական, փաշա, բեյ** կոչումները ոճրագործների անվանումների կողքին: Դրանք թողնում ենք բացառապես այն դեպքերի համար, երբ անհրաժեշտություն կա երևույթը ընդգծելու:

2. Սվազում ամերիկյան գեներալ Հաբարդի հետ հանդիպման ժամանակ Քեմալը նշել է, որ Թուրքիայում սպանվել է 800.000 հայ:

3. Ամենևին էլ պատահական չէ, որ Առաջին աշխարհամարտում՝ Օսմանյան կայսրության պարտությունից ու կործանումից հետո, երիտթուրքական այս երկու պարագլուխները (և ոչ միայն նրանք) քաղաքական ապաստան էին գտել հենց Գերմանիայում, որն Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան կայսրության դաշնակիցն էր և, ըստ էության, հանցակիցը Հայոց ցեղասպանության հարցում:

4. Ծնվել է 1873-ին արբերդում, մահացել է 63 տարեկան հասակում՝ 1936-ի մարտի 13-ին: 1899 թվականին ավարտել է Ստամբուլի բժշկական դպրոցը: Հեղինակ է թուրքերեն 2 գրքի, թուրքերենով՝ 5 հոդվածի, գերմաներենով՝ 29 հոդվածի, ֆրանսերենով՝ 10 հոդվածի: Ընդհանուր առմամբ՝ 2 գիրք և 44 հոդված:

5. Ամենևին էլ պատահական չէ, որ 1919-ի մարտի 1-ին այս թերթը գրել է. «Մեր (թուրքերի) կողմից առաջ քաշված այն փաստարկները, համաձայն որոնց, հայերն առաջինն են մեզ վրա հարձակվել Վանում, իսկ հետո մենք Անատոլիայում վրեժ էինք լուծում, կարող է բավարարել միայն նրանց, ովքեր ղեկավարվում են «զգացմունքներով» և ոչ թե գիտական փաստարկներով ու իրավական նորմերով: Այդպիսի մոտեցումը չի կարող մեզ պաշտպանել Եվրոպայի ու Ամերիկայի հասարակական կարծիքից»:

6. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ բժիշկների սուր կարիքը հարկադրել է թուրքական իշխանություններին ժամանակավորապես խնայել նրանց: Չնայած դրան՝ շատ հայ բժիշկներ, զգալով վերահաս վտանգը, փախուստի են դիմել ու հանձնվել ռուսներին ու անգլիացիներին:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ

«Վարդգես Եղիայանն ընդդեմ Մ. Նահանգների ազգային արխիվի եւ տարեգրության վարչության» (գործ NCV08-16248, Կալիֆոռնիայի շրջանային դատարան): Նման վերտառությամբ դատական հայց է հարուցվել Հայոց ցեղասպանության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր չտրամադրելու համար, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 11-ի համարը: «Այդ փաստաթղթերը ձեռք բերելու մեր շարունակական փորձերն անարձագանք են մնացել»,- նշում է Գլենդեյլում գործող «Մակքարլի եւ Ռոզեն» փաստաբանական ընկերության գործընկերներից Մարկ Մակքարլին, որը ներկայացնում է Վարդգես Եղիայանին վերոնշյալ դատական գործընթացում: «Նրանց դիրքորոշումը հակասում է «Տեղեկատվության ազատության օրենքի» դրույթներին»:

«Նրանք հաստատեցին դիմումն ստանալու փաստը եւ պարտավոր էին 20 օրում բավարարել մեր խնդրանքը, բայց մինչեւ օրս պատասխան չկա»,- բացատրում է Եղիայանը, որը ճանաչված դատապաշտպան է եւ մեծ դեր է խաղացել հատկապես ցեղասպանությանը զոհ գնացած մեր նախնիների ապահովագրական պոլիսների փոխհատուցումը ձեռք բերելու գործում: «Մեր պահանջը նույնպես կապված էր այդ գործի հետ», եզրակացնում է Վարդգես Եղիայանը:

(«Ազգ», 14. 10. 2008թ., Հ. Ծ.)

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՓՆՏՐՏՈՒՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արդի թուրք գրականությունը այնքանով է առնչվում Մեծ եղեռնին, որ խոսում է թուրք-հայկական հարաբերությունների մասին: Իսկ Մեծ եղեռնը առաջին փաստագրությունն է այդ հաբերությունների:

Թուրքական բռնապետությունը մերժող հայ ժողովրդի տառապանքը՝ խտրականություն, հալածանք, կոտորած, աքսոր ու տեղահանություն, ոչ միայն արգելված, այլև մոռացված թեմա է թուրք գրականության մեջ: Ինչպես **Օներ Թուրքեշն** է գրում. «Հանրապետական Թուրքիայում հրատարակված շուրջ հինգ հազար վեպերից ու գեղարվեստական գրականությունից հազիվ մեկ-երկու տասնյակը խոսեն հայերի մասին: Երևույթ, որ ընդգծում է թուրք պաշտոնական գիծը՝ պաշտպանել ուրացման թեզը: Պատմության խեղաթյուրումը սկսվեց հենց 1894-ի ջարդերից: Դրան զուգընթաց, մտածված կերպով հող էր պատրաստվում ապագա լռության, դրան հաջորդող ժխտման և ուրացման համար»:

«Հայերը իրենք հրահրեցին 1894-96-ի ջարդը». այդպես են վկայում Բարձր դռանը հղված հարյուրավոր խոստովանագրեր-հեռագրերը՝ ուժի ու չարչարանքի տակ առնված ստորագրություններով: Խոստովանագրեր-հեռագրերի և Հայոց ջարդերի մասին Յոհաննես Լեփսիուսը վկայություններն ընթանրացրել է «Հայաստանը և Եվրոպան» գրքում: Օրինակ՝ Եզրնջանում հայ հոգևոր առաջնորդը 1895-ի ջարդերի ընթացքում մերժեց ստորագրել այդ խոստովանագիրը, իսկ արդյունքը եղավ այն, որ ձերբակալեցին շրջանի բոլոր երևելիներին: Հանրապետական Թուրքիայի թուրք-հայկական հարաբերությունների քաղաքական հետևանքի արդյունքում, հայի գոյության, նրա կրած հավաքական տառապանքնների հիշողությունը ջնջվեց թուրք քաղաքացու ուղեղում: Այդ մասին՝ ոչ մի ակնարկ թուրք պատմագրության մեջ, անկասկած նաև դասագրքերում ու գեղարվեստական գրականության մեջ:

Թուրքիայի ազգային քաղաքականությունը նպատակասլաց կերպով պատրաստում էր թուրք քաղաքացու ազգային ինքնությունը, ինչպես **էվոլի Քյորողլուն** է ասում. «…Թուրք պատմության մեջ կատարված է ընտրողական մոտեցում, որում կողմնակալ մոտեցումով ընտրված են այն դրվագները, որոնք պիտի ծառայեին նպատակին, դուրս են թողնված շատ հարցեր, այդ թվում նաև Հայության հարցը, հայ ժողովրդի անցյալի տառապանքները»:

Մինչև 1960-70-ականն թվականները Թուրքիայում ուսանած ու դաստիարակված երիտասարդ սերունդը տեղեկություն չուներ Թուրքիայի անցյալում մեծ ազդեցություն ունեցող հայության մասին: Լռությունը, անճշմարտությունը լռությամբ ծածկելը ուրացման նախորդ փուլն էր, որն իր վախճանին հասավ. լռության պատը ճեղքվեց 1970-ականն թվականներին, երբ թուրք իշխանությունը պիտի բացատրեր իր ժողովրդին թե թուրք դիվանագետները ինչո՞ւ են գնդակահարվում, ահաբեկվում: Թուրք կազմակերպություննները ինչո՞ւ են հարձակման ենթարկվում: Հայերն ինչո՞ւ են ՄԱԿ-ում աշխատանք տանում, ինչո՞ւ են պնդում թե թուրքերը ցեղասպանություն են կատարել, և նրանցից էլ պահանջում են ընդունել ոճիրը: Այս ժամանակահատվածում համաշխարհային գրականությունը, քաղաքական գրականությունն ու լրատվամիջոցները հեղեղվեցին ուրացման արտահայտություններով, այսպես կոչված «գիտական ուսումնասիրություններով», ուր սկիզբը կոպիտ ու անհաջող էր, հետո զարգացաև, երբ օտարազգի թրքամետ կամ թուրք կառավարության «մասնագետների» ձեռքով գրվեցին: Ուրացման քաղաքականությունը հասել է դասագրքերին ևս: **Թաներ Աքչամն, Օսման Քոքերը** և շատ-շատերը այս փաստի առնչությամբ վկայում են, որ «իրենք դպրոցում սովորել են թե ինչպես հայերը Առաջին համաշխարհային պատերազմի օրերին դավաճանեցին երկրին, միացան թշնամուն և փորձեցին տապալել Օսմանյան կայսրությունը: Հայերը խաբեբա են. դավաճան և օժտված են բացասական բոլոր հատկանիշներով»:

Դրությունն այսօր փոխվել է Թուրքիայում, ներքին ու արտաքին քաղաքական հարաբերությունների փորձադաշտում առաջացել է թուրք մտավորականների ու գրողների մի խավ, որ հարցադրման է ենթարկում իշխանության պարտադրած թուրք ազգային ինքնության կառույցի այդ բաղադրատոմսը: Հանրապետության քաղաքացի, ազգությամբ թուրք, կրոնով իսլամ, սա թուրք ազգային ինքնությունն է բացատրում**: Թուրք մտավորականությունը, որին կարելի է տարբեր աստիճանի այլախոհ համարել, իր իսկ ինքնության փնտրտուքի մեջ է: Նա փորձում է իր ինքնության արմատները գտնել այն պատմության մեջ,** որին մերվել է ուսանողական տարիներին, փորձում է թուրք հասարակության էթնիկ, կրոնական ու սոցիալական ծալքերը բացել: Չմոռանանք, որ այդ այլախոհական գործունեությունը հակադրվում է նախ իրենց իշխանության կողմից, դատական սահմանադրությամբ՝ 301 հոդվածով, մանավանդ, երկրի ներսում ծավալված ազգայնամոլական ծածուկ շարժումով, որը **Հրանտ Դինքի** ու շատերի ահաբեկման պատճառ եղավ: Ինչն էլ ազատախոհ մտավորականին խորհելու տեղիք տվեց, թե իրենք որքա՞ն կարող են այսպիսի մթնոլորտում՝ հանրության մտայնության մեջ, փոփոխություն մտցնել: Այս առումով **Ահմենդ Ալթանի** «1915-2007թթ.» հոդվածում, Հրանտ Դինքի սպանության առիթով գրված, ասվում է. «Կարծես՝ շատ բան չի փոխվել, նրանք 1915-ին էլ սպանվեցին, նրանք սպանվում են 2007-ին: Ի՞նչ էր ասվում այդ ջարդի մասին, որ տեղի ունեցավ անցյալ դարի սկզբին: Նանք մեզ սպանեցին, մենք էլ նրանց սպանեցինք: Ի՞նչ ենք ասելու Հրանտի սպանության մասին: Հրանտը մեզ սպանեց, մենք էլ նրա՞ն հետ սպանեցինք»: **Ահմեդ Ալթանը,** «Թարաֆ» թերթում խոսելով այսօրվա հայ-թուրքական հարաբերությունների մասին, գրում է. «Եթե այսօր թուրքին պարտադրվի իր աչքերով տեսնել թուրք կանանց ու աղջիկների բռնաբարումը, առևանգումը, իր ժողովրդի հալածանքը, ի՞նչ կմտածի: Մտածենք որպես թուրք ժողովուրդ և փորձենք հասկանալ այն ժողովրդին, որին անգամ իր ցավը սգալու իրավունք չենք տվել: Մտածենք, և գուցե ինքներս մեր մեջ շշնջանք՝ ներողություն: Այս ձևով գուցե անդի աշխարհում մի ծեր հայ ներողամտորեն ժպտա մեր երեսին»:

Թուրք սահմանադրության քրեական օրենսգրքի 301 հոդվածը հալածում է բոլորին, ով համարձակվում է խոսել Հայկական հարցի մասին, ով հարց է տալիս թե ո՞ւր են նախահանրապետության ժամանակահատվածում Թուրքիայի պատմության մեջ այդքան մեծ ազդեցություն թողած և այսօր միանգամայն անհետացած հայերը: Հրանտ Դինքը դատապարտվեց, որովհետև ասել էր՝ ես թուրք չեմ, ես հայ եմ Թուրքիայից և որովհետև պնդում էր, թե այն, ինչ կատարվեց 1915 թվականին, ցեղասպանություն էր: Բասկին Օրանը դատապարտվեց, որովհետև Թուրքիայի փոքրամասնությունների նկատմամբ մարդու իրավունքների պաշտպանության իր գրած զեկույցում գրել էր, որ Թուրքիայի փոքրամասնությունների նկատմամբ Լոզանի համաձայնագրի որոշումները չեն իրագործվում: Օրհան Փամուկը դատապարտվեց, որովհետև իր հարցազրույցներից մեկում ասել էր, թե Թուրքիայում 1 մլն հայ և 30. 000 քուրդ է սպանվել: **Էվիլ Շաֆաքը** դատապարտվեց, որովհետև իր վեպերից մեկում իր հայ հերոսը «ցեղասպանություն» բառն էր գոր-

ծածել, հայերի ջարդը Թուրքիայում, որպես պատմական հիշողություն հաջորդ սերնդին փոխանցելու իր փորձի մեջ:

Հոդված 301-ը, ազգայնամոլների սպառնալիքները, թուրք իրշխանության քաղաքական, սոցիալական դժվարությունները չեն ընկճում որոշ թուրք գրողների: **Քեմալ Յալճինը** մեկն է այդ գրողներից, որ ճամփա ընկավ Թուրքիայի խորքերում գտնելու հայ վերապրողներին՝ լսելու նրանց անցյալի ցավոտ պատմությունները և վկա լինելու դեռ շարունակվող հալածանքներին ու խտրականությանը: Վերապրողների ու նրանց սերունդների բերանով բողոքելու հայ մշակույթի կոթողների կործանման դեմ: Քեմալ Յալճինը պատմում է նրանց հիշողությունների մեջ միշտ կենդանի մնացած, երբեք չմոռացվող 1915 թվականի սարսափելի դեպքերի և հանրապետական Թուրքիայում կրած հալածանքներ մասին. 1942-ի վալիք վերիսի՝ ունևորության հարկը, 1955-ի ջարդը, ավերն ու թալանը, 1960-ականների թրքացման գործընթացը՝ «Քաղաքացի թրքերեն խոսիր»: Եվ հետո խտրականություն ու հալածանք բոլոր վերապրողների սերունդների դեմ, «գյավուր» են նրանք և հալածված, հայ թե մուսուլմանացած քրիստոնյա: Իսկ մուսուլմանացածների դեմ էլ ավելի էր հակակարանքը, նրանց ինքնության թղթի վրա «մյուֆթեթի» ճակատագրական բառն էր, ինչը նշանակում է, որ այդ անձը ծնված օրից իսլամ չի եղել, այլ իսլամ է ընդունել հետագայում: Այդ բառը նրանց հալածում է ամենուր: Հայը սրից պրծած է, անարդարորեն և անտեղի կերպով հալածված, սպանդից ազատված:

Քեմալ Յալճինը գտնում է իսլամացած հայերի, որոնք անկեղծորեն դավանում են իրենց նախորդների ընդունած կրոնին: Մայրենի լեզուս քրդերեն է, քրդական մի գյուղում եմ մեծացել, արմատներս հայ են, ես ինձ քուրդ եմ զգում, սակայն ինքնությունս հայ է, կրոնս իսլամ: Պարադոքսալ երևույթ մեզ համար, ազգային ինքնության մի խառնաշփոթ, որ, վերջապես, պիտի փորձենք ընդունել և ընկալել: Յալճինը հանդիպում է ծպտյալ հայերի, որոնք, իսլամացած, գաղտնի դավանում են քրիստոնեությանը: Նրանցից շատերը պատրաստ են գաղտնիության վարագույրը պատռել ու ինքնադրսևորվել՝ որպես հայ քրիստոնյա:

«Սիրտս քեզմով կխայտա» աշխատությունում **Սենենդե Գյուլերգյուրենդեն** գրում է. «Եթե սպանում եք հայերին ու հույներին, ինչո՞ւ եք նրանց եկեղեցիները կործանում: Այս եկեղեցիները փոքր Ասիայի հարստությունը չե՞ն: Ասելով, թե Փոքր Ասիայում հայ չկա, ուզում եք ասել, թե երբե՞ք հայ չի եղել: Կարո՞ղ եք հայ ժողովրդի պատմությունը և նրա դեմ կատարված ոճիրը ջնջել, պարզապես ասելով, թե հայ չկա»:

Թուրք բանաստեղծ **Մեհմեդ Ուզունը** իր «Նռան ծաղիկների գույնը» հուշագրության մեջ ճշգրիտ նկարագրում է թուրքական յաթաղանից ազատված հայ մարդու հոգեվիճակը, որն ինքը զգում է, որպես Թուրքիայից դուրս ապրող աքսորական:

Թուրք արդի գրականության մեջ արտացոլվում է նաև հայ կնոջ տառապանքը, երբ նա պարտադրանքի տակ թուրքի կամ քրդի կին է դարձել:

Ֆեթիհնե Չեթինի «Մեծ մայրս» պատումում Սեների դարձած Հրանուշը իր ինքնությունը՝ իր անցյալի պատմությունը, թոռնուհուն հանձնեց: Ու ծնվեց «Մեծ մայրս»՝ «Անե, անե», գողտրիկ հուշագրությունը: Ֆեթիհնե Չեթինի հայտնագործումը յուրովի լուսավորեց Մեծ եղեռնի մութ անկյուններից մեկը թուրք հասարակության համար:

Օրհան Փամուկը իր «Ձյունը» վեպում անդադար հիշեցնում է Կարսում հայերի երբեմնի ներկայության մասին: Կարսի մշակութային կյանքում նրանց ունեցած դերի մասին և, կարծես, հրահրում է ընթերցողին հարցնելու՝ «Ի՞նչ եղան նրանք»:

Էդվի Շեֆեքի «Դաստրիտ օֆ Իստամբուլ» վիպակում, Շէվլիհ դարձած Շուշանը փախավ շատ-շատերի նման՝ թողնելով իր փոքրիկին՝ Լէվենտ Գյազանչիհ, որ մեծացավ մորից լքված, լի հոգեբանական բարդույթներով: Լէվենտը գիտե՞ր իր մոր հայ լինելը: Հեղինակը չի ասում, սակայն մի բան պարզ է, որ այդ գաղտնիքը Լէվենտի սերունդներին չի փոխանցվել: Է. Շեֆեքը մի հարցազրույցում վկայում է, թե հազարների է հասնում այդպիսիների թիվը, որ չգիտեն անգամ իրենց արմատներում հայի արյան հետք կա: Եվ հորդորում է այսօրվա թուրքին փնտրել իր ինքնությունը, պրպտել իր ընտանիքի պատմությունը:

Փոփոխությունը ներսից պիտ գա, թուրք գրականության օգնությամբ: Իրավամբ, թուրք նորագույն գրականությունը կյանք ու արտահայտություն է տալիս ցայժմ մահաքուն մնած թուրք պատմական հիշողությանը: Գրականությունը լուսավոր մտքերի արտահայտություն է, քաջություն՝ ընդունելու անցյալը, անցյալի սխալը և փոփոխության ուղղությամբ քայլերը առաջնորդելու:

Տարօրինակ մի զգացում ընդգծեմ Թուրքիայում ապրող հայերի զգացումի մեջ, որ վկայում է Քեմալ Յալչենը. «Թուրքիան իմ հայրենիքն է, Թուրքիան բոլորինս է, մի փչացրեք Թուրքիան»: Նույնը վկայում է էդվին Շաֆաքը իր «Դաստրիտ օֆ Իստամբուլ» վիպակում, որտեղ նրա պոլսահայ հերոսը՝ Արամը, Պոլիսը իրենն է համարում:

Այսօր շատ են այսպիսի օրինակները, բայց արդյո՞ք այդ տենդենցը՝ միտումը, ընդհանրական բնույթ է կրում, թուրքական գրականությունը պիտի կարողանա՞ արտահայտել այն, ինչ դեռ չի ասել: Հուսանք, որ պատումներն ու հուշերը կլուսավորեն ապագա ուսումնասիրողի ճամփան:

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ
ԱՄՆ

ԱՐՄԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ. ՄԻՋՆՈՐԴՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱՄՈԶԵԼ, ՈՐ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

04. 12.2008, /PanARMENIAN.Net/ «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը չի կարող լուծվել փոխադարձ զիջումների ճանապարհով: Հակամարտությունը կարող է լուծվել կամ միակողմանի զիջումների միջոցով, ինչին պարտադրում են Հայաստանին, կամ էլ ստիպված կլինենք ամեն ինչ թողնել այնպես, ինչպես կա: Ելքն այսպիսին է, ու քանի դեռ Երեւանին եւ Ստեփանակերտին ստիպում են այսպես կոչված «փոխադարձ զիջումների» գնալ, մենք տանուլ ենք տալիս»,- մամլո ասուլիսի ժամանակ հայտնել է ԼՂՀ նախկին արտգործնախարար Արման Մելիքյանը: Նրա համոզմամբ, հակամարտության ամենակարեւոր հարցերից մեկը Ադրբեջանի հայ փախստականների ապագայի հարցն է: «Հայ փախստականների հարցը կապելով որեւէ տարածքների հանձնման հարցի հետ՝ մենք կկարողանանք, վերջապես, լուծել Ադրբեջանի հողերի վերադարձի խնդիրը: Այսինքն, ազատագրված տարածքները չպետք է փոխանցվեն որեւէ մեկին: Այդ հողերը պատկանում են հայերին, որոնք բնակվում էին Ադրբեջանի ԽՍՀ տարածքում եւ որոնք վտարվեցին Կիրովաբադից, Քաքվից եւ Ադրբեջանի այլ շրջաններից: Հասկանալի է, որ այսօր նրանք չեն կարող վերադառնալ այնտեղ, քանի որ չկա անվտանգության ոչ մի երաշխիք»,- նշել է Արման Մելիքյանը՝ ավելացնելով, որ այսօր միջնորդները փորձում են Հայաստանին համոզել, որ հայ փախստականների խնդիրը գոյություն չունի: «Այսօր Հայաստանի կառավարությունը չպետք է փորձի դուր գալ ինչ-որ մեկին: Ջինվորականները պատվով են կատարել իրենց գործը, այժմ քաղաքական գործիչների եւ դիվանագետների հերթն է: Հիմա նրանք պետք է ցույց տան իրենց հմտությունները եւ բացեն հակամարտության լուծման ճանապարհն այնպես, որպեսզի դա բարենպաստ լինի մեզ համար»,- ամփոփել է Արման Մելիքյանը:

ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՐԱՔ ՎԿԱՆԵՐ

Բանասիրական գիտությունների դոկտոր,
ժողովրդագետ Վերժինե Սվազլյանը՝
Հայոց ցեղասպանությունը վերապրած Մարիամ
Բաղդիշյանի (ծնվ. 1909 թ., Մուսա լեռ)
հուշերն ու երգերը գրի առնելիս:

Հայոց ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ ուղղված միջազգային քաղաքական ոճրագործություն, պատմության դաժան պարտադրանքով դարձել է հայ ժողովրդի ազգային ինքնության, մտածողության և հոգեգիտակցական ներաշխարհի անբաժանելի մասը:

Որքան տարիներն անցնում են, այնքան ավելի է մեծանում հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, որը պայմանավորված է վերջերս բազմաթիվ երկրների կողմից պատմական այդ փաստի ճանաչման ու դատապարտման իրողությամբ: Սակայն պաշտոնական թուրք ու թուրքամետ պատմագրությունն առ այսօր ամեն կերպ ճգնում են խեղաթյուրել հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած 1915-1923թթ. պատմական ստույգ իրողությունները:

Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, քաղաքագետների և հասարակական գործիչների ասույթներ, գեղարվեստական տարբեր ժանրերի ստեղծագործություններ, սակայն հրատարակված այդ հսկայական գրականության մեջ բացակայել է ժողովրդի ձայնը՝ պատմական հիշյալ իրադարձություններից անմիջական տպավորություններ ստացած ականատես-վկա վերապրողների պատմած հուշերն ու հաղորդած ժողովրդական երգերը, որոնք ևս պատմաճանաչողական, փաստավավերագրական և սկզբնաղբյուրային կարևոր արժեք են ներկայացնում: Քանի որ հայ ժողովուրդն ի՛նքն է կրել այդ բոլոր անասելի տառապանքները, հետևաբար, ժողովուրդն ի՛նքն է այդ զանգվածային քաղաքական ոճրագործության առարկան (object): Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրն անգնահատելի արժեք ունի հենց իրավական տեսակետից:

Տակավին 1955-ից, երբ Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության մասին բացահայտ խոսել չէր կարելի, երբ մազապուրծ վերապրած ականատես-վկա տարագիր հայրենադարձները հանիրավի զրպարտվելու և աքսորվելու ահ ու դողի մեջ էին ապրում, ես՝ Երևանի Խ. Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի ուսանողս, արհամարհելով ամեն կարգի դժվարություն և գիտակցելով ժողովրդական բանավոր ավանդության այդ կարգի նյութերի պատմագիտական և փաստավավերագրական արժեքը, սկզբում արևմտահայի արյան կանչով և անձնական նախաձեռնությամբ, իսկ 1960-ից Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի, իսկ 1995-ից՝ նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հովանու ներքո, գիտական այլ աշխատանքներին զուգահեռ, ամառվա կիզիչ արևին, ձմեռվա ցուրտ սառնամանիքին, թաղից թաղ, գյուղից գյուղ ոտքով շրջելով, Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված ականատես-վկաներին որոնել-գտնելով, թույլ տալով, որ ազատ արտահայտեն իրենց անմիջական տպավորությունները, գրի եմ առել (նաև՝ ձայնագրել ու տեսագրել) նրանց պատմած սահմռկեցուցիչ **հուշերը**, տպավորիչ **զրույցներն** ու պատմական տարաբնույթ **երգերը**: Հայոց ցեղասպանության ականատես վերապրողներից գրի առածս սկզբնաղբյուրային այդ վկայությունները՝ ծավալուն պատմաբանագիտական ուսումնասիրություններով, ՀՀ ԳԱԱ հրատարակչության կողմից տպագրվել են ինչպես հայերեն, նույնպես և օտար լեզուներով իմ մի շարք աշխատություններում:[1]

Ժողովրդական այդ նյութերը հաղորդած ականատես-վկաները գերազանցապես ավագ սերնդի ներկայացուցիչներն են (ավագագույն վերապրողը ծնվել է 19-րդ դարում՝ Մարիցա Փափազյան (ծնվ. 1874թ., Սամսուն))՝ իրենց պատմական բնօրրանից բռնի կերպով արտաքսված հայերը, որոնք 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության ընթացքում տարագրվել են Արևմտահայաստանից, Կիլիկիայից (1921թ.) և Անատոլիայի հայաբնակ գավառներից (1922թ. Իզմիրի աղետ):

Պատմական այդ իրադարձությունների ընթացքում արևմտահայության զգալի մասը (ավելի քան 1,5 միլիոն) անխնա բնաջնջվել է, իսկ աքսորի ճամփաներին կողոպտված, ուևեզրկված և ուժասպառ, հրաշքով փրկվածները, գաղթի զրկանքները ճաշակելով և ճամփին բազմաթիվ զոհեր տալով, հասել են Արևելյան Հայաստան կամ՝ սփռվել աշխարհի տարբեր երկրներ: Հետագայում այդ մնացորդացի որոշ մասը Թուրքիայից, Հունաստանից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից, Բալկանյան երկրներից և ԱՄՆ-ից պարբերաբար ներգաղթել են Արևելյան Հայաստան և բնակություն հաստատել իրենց երբեմնի բնօրրանների հիշատակները խորհրդանշող Երևանի մերձակա նորակառույց քաղամասերում (Այգեստան, Սարի թաղ, Շենգավիթ, Նոր Բութանիա, Նոր Արեշ, Նոր Կիլիկիա, Նոր Արաբկիր, Նոր Զեյթուն, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Մարաշ), ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններում (Նոր Խարբերդ, Նոր Կեսարիա, Նոր Հաճըն, Նոր Այնթապ, Նոր Մուսա լեռ, Նոր Եդեսիա (Ուրֆա), էջմիածնում (այժմ՝ Վաղարշապատ), Հոկտեմբերյանում (այժմ՝ Արմավիր), Արարատում, Թալինում, Հրազդանում, Լենինականում (այժմ՝ Գյումրի), Կիրովականում (այժմ՝ Վանաձոր) և այլուր):

Ավելի քան 50 տարիների ընթացքում իմ հետևողական պրպտումներով, ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, նույնպես և Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Հունաստան, Ֆրանսիա, Կանադա, ԱՄՆ և Թուրքիա կատարած իմ անձնական կամ գիտաժողովային կարճատև ուղևորությունների ընթացքում մշտապես որոնել, հայտնաբերել եմ Հայոց ցեղասպանությունից վերապրող ականատեսների ավագ, միջին և կրտսեր սերունդների ներկայացուցիչներին, մոտիկից ծանոթացել նրանց հետ, թափանցել նրանց հոգու խորխորատները:

Տեղի տալով իմ թախանձագին հորդորներին՝ նրանք, պոռթկացող հուզումով կրկին վերապրելով իրենց տխուր անցյալը, արցունքախառն հեկեկոցներով սկսել են պատմել իրենց հիշողության մեջ անթեղած սրտամորմոք հուշերը,

թե ինչպես երիտթուրքական ոստիկանները բռնի տեղահանել են իրենց պապենական շեն բնօրրանից և իրենց աչքերի առաջ անմարդկայնորեն հոշոտել իրենց ծնողներին ու հարազատներին, պատվազրկել իրենց մայրերին ու քույրերին, քարերով ճխլել նորածին մանուկներին…:

Ականատես-վկաների պատմած հուշերն ընդգրկում են տարբեր թեմաներ: Դրանցում արտացոլված են հայրենի բնաշխարհի գեղեցկությունները, նրանց նահապետական առօրյա կենցաղն ու սովորույթները, նրանց ապրած ժամանակաշրջանը՝ հասարակական-քաղաքական կյանքի պայմանները, նշանակալից պատմական իրադարձությունները, երիտթուրքական կառավարության պարագլուխների (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազիմ, Բեհաետտին Շաքիր) գործադրած դաժանությունները (հարկահավաք, զորահավաք, զինահավաք, ողջակեզ, բռնագաղթ, ջարդ, կոտորած), նրանց կազմակերպած բռնի տեղահանությունները դեպի ամայի անապատներ (Դեյր էլ Զոր, Ռաս ուլ Այն, Ռաքքա, Հոմս, Համա, Մեսքենե, Սուրուճ…), հայերի կրած անասելի տառապանքները (քայլք ուժասպառվելու աստիճան, ծարավ, քաղց, համաճարակ, մահվան սարսափ…), ինչպես նաև արևմտահայ տարբեր հատվածների մղած արդար ու ազնիվ ոգորումներն ընդդեմ բռնության՝ պաշտպանելու համար իրենց ապրելու տարրական իրավունքը (1915թ. Վանի հերոսամարտ, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի գոյամարտեր, Մուսա լեռան և Եդեսիայի (Ուրֆա), ավելի ուշ՝ 1920-1921թթ. Այնթապի, Հաճընի հերոսամարտեր), այդ ինքնապաշտպանական մարտերի ազգային հերոսներ (շապինգարահիսարցի Անդրանիկ Օզանյան, վանեցի Արմենակ Եկարյան, Մեծն Մուրադ [Համբարձում Բոյաջյան], մուսալեռցի Եսայի Յաղուբյան, ուրֆացի Մկրտիչ Յոթնեղբայրյան, այնթապցի Ադուր Լևոնյան, զեյթունցի Արամ Չոլաքյան, ազգային վրիժառու Սողոմոն Թեհլերյան) և բազմաթիվ այլ հայտնի ու անհայտ հայորդիներ, որոնք ժողովրդական զանգվածների հետ միաձուլված պայքարել են, նահատակվել, նաև՝ դիմակայել ու վերապրել:

Իմ գրի առած, ձայնագրած ու տեսագրած **ժողովրդական նյութերն ընդգրկում են Արևմտահայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաշատ ավելի քան 100 բնակավայրերից** բռնագաղթված, ապա Երևանի արվարձաններում և Հայաստանի տարբեր շրջաններում, ինչպես նաև Սփյուռքում բնակեցված վերապրողների հաղորդած վկայությունները, որպեսզի առավել ամբողջական պատկերացում տրվի աշխարհով մեկ սփռված արևմտահայության անցյալի և նրա պատմական հավաքական հիշողության մասին:


Ալ Գըհըմ

Ընդգրկել եմ նաև արաբ ականատեսների վկայություններ, որոնք իրենց հեթին նույնպես հաստատում և հիմնավորում են Հայոց ցեղասպանության ստույգ փաստերը:

Այսպես, արաբ անապատական, Հայոց ցեղասպանության ականատես վկա **Ալ Գըհըմը** (ծնվ. 1880թ., Ռաքքա)[2] վկայել է. «Ես արդեն 119 տարեկան եմ: Ծնվել եմ Ռաքքայում: Ես լավ եմ հիշում խեղճ աքսորական հայերի տառապանքները: Նրանք բռնի վտարված էին իրենց հայրենական տներից և քայլելով, անոթի, ծարավ հասել էին մինչև մեր սիրիական անապատները՝ Եփրատ գետի ափը: Թուրք մսագործները խաբել էին այդ հայերին, թե նրանք շուտով պիտի վերադառնան իրենց տները, բայց նրանց տարան Ռաքքայի պարիսպի ետևը և սպանեցին: Նրանցից միայն յոթ հայ ընտանիք փրկվեց, որոնց մեր արաբները օգնել էին փախչել և ապաստան տվել իրենց վրաններում» [Վկ. 302]:[3]

Արաբ անապատական **Բաշիր էլ Սաադին** (ծնվ. 1901թ., Ռաքքա) ևս վկայել է. «1915թ. ես 14 տարեկան էի, Եփրատի ափին Ռաքքայում հովիվ էի և մերոնց անասուններն էի


Բաշիր էլ Սաադի

արածացնում: Այդ ժամանակ ես տեսնում էի մարդկանց խմբեր, որոնք հոգնած և ուժասպառ, ցնցոտիներով ու կիսամերկ գալիս էին մեր կողմերը: Հետո իմացա, որ թուրքական կառավարությունը նրանց տեղահանել է իրենց հայրենիքից և քշել դեպի մեր սուրիական անապատները: Այդ հայ տարագիրները թուրք ժանդարմների հսկողության տակ քայլել են երկար ժամանակ առանց իմանալու, թե ու՞ր են գնում: Այդ հայերը ճամփին էին թողել իրենց հարազատներին, որոնք չէին կարողացել քայլել, շատերին էլ թուրքերը սպանել էին: Ես իմ հորեղբոր զավակների հետ մեր ուղտերով գնում էինք անապատ և, տեսնելով նրանց խղճալի վիճակը, ոմանց օգնում էինք. մեր ուղտերը կթելով՝ այդ սոված ու ծարավ հայերին կաթ էինք խմեցնում ջրի փոխարեն: Նրանք այնքան հյուծված և ուժասպառ էին, որ կանգնած վիճակում գետին էին փռվում և ոչխարների պես մեռնում էին» [Վկ. 303]:

Վերհիշելով հայ աքսորականների ողբերգական վիճակը՝ արաբ կին անապատական **Բաթրան** (ծնվ. 1906թ., Դեյր էլ Զոր) միաժամանակ բնութագրել է հայ տառապյալ կանանց. «Ես 93 տարեկան արաբ անապատական մըն եմ: 1915թ. ինը տարեկան էի և լավ կհիշեմ, թե ինչպես հայ աքսորականների կարավաններն իրար ետևից ուժասպառ հասնում էին Դեր Զոր: Նրանք տանջված էին, սոված, ծարավ, ցնցոտիների մեջ ու ոտաբոբիկ: Նրանք եկան և հավաքվեցին Դեր Զորի կամուրջի մոտ: Մենք տեսանք, թե ինչպես թուրք ժանդարմներն ու չեչենները նրանցից շատերին սպանեցին: Ողջ մնացած կանայք ստիպված ամուսնացան մեր արաբ անապատական շեյխերի և գյուղապետերի հետ: Նրանք դարձան ընտանիքի լավ մայրեր: Նրանց մեծ մասը հավատափոխ եղավ, իսկ ոմանք՝ ոչ: Մենք հիացած էինք հայ կանանց գեղեցկությամբ: Նրանք սքանչելի աչքեր ունեին: Բացի այդ, նրանք հավասարակշռված էին, հնազանդ ու պատվավոր: Նրանք երբեք չմուրացին: Թուրքերը հայերին ցրեցին սիրիական անապատները, իսկ արաբները, մեղքանալով նրանց, հավաքեցին» [Վկ. 306]:

Բաթրա

Իսկ **Հաբ Ալին** (ծնվ. 1905թ., Ռաս ուլ Այն) իր վկայության մեջ նշել է, թե ինչպես է ինքը փրկել մի քանի հայերի, նաև հիշատակել է մի շարք արաբ ցեղախմբերի, որոնք ևս մարդկայնորեն օգնել են հայ տառապյալ աքսորյալներին. «Ես 1915թ. մոտ տաս տարեկան էի և լավ եմ հիշում տառապած աքսորական հայերին: Նրանք հոգնած, ուժասպառ, կիսամերկ ու արյունլվա եկան հասան Ռաս ուլ Այն: Ես նրանց մի քանիսին տարա, թաքցրեցի մի մեծ փոսի մեջ, և նրանք փրկվեցին իրենց հետապնդող թուրք ոստիկաններից: Սիրիական մի շարք աշիրաթներ ևս օգնեցին այդ հայերին: Այդ բարի արաբներից էին Շանմարը, Բակկարան, Ուբադան, Աջուբեն, Հարփը, Ալ Մուհամեդը, Ալ Հասանը, Ալ Ուդուան, Ժաբրան, Ջուբեյդը, որոնք նույնպես շատ հայ կիների և մանուկների թաքցրեցին իրենց ընտանիքներում և փրկեցին մահից: Հեծյալ թուրք ժանդարմներն ու զինվորները, հայ աքսորականների ետևից գալով, նրանց ստիպում էին առանց դադարի քայլել: Չեչենները, քրդերը և նույնիսկ թուրք զինվորները հարձակվում էին նրանց վրա դանակներով, կացիններով հարվածում էին, իսկ արաբները երբեք հայերին մատո՛վ անգամ չեն դիպած» [Վկ. 304]:

Հուսահատ հայ կանայք ստիպված ամուսնացել են շեյխերի կամ արաբ գյուղապետերի հետ: Այդ մասին է վկայել արաբ անապատական **Աբդուլ Ղաֆուրը** (ծնվ. 1915թ., Ռաս-ուլ-Այն). «Իրենց պատմական հայրենիքից բռնի կերպով տեղահանված հայերը, ծայր աստիճան ուժասպառ հասնելով Ռաս ուլ Այն, կամա, թե՝ ակամա իրենց կյանքը

փրկելու համար ծառայեցին արաբների տներում: Նրանց կանայք գեղեցիկ աչքեր ունեին և շատ աշխատասեր էին: Այդ կանայք ստիպված ամուսնացան մեր անապատական շեյխերի և կամ գյուղապետերի հետ: Անոնց մեծ մասը կրոնափոխ եղավ, իսկ ոմանք՝ ոչ: Բացասական հետևանքները հայտնվեցին ժամանակի ընթացքում՝ կամաց-կամաց նրանց հոգեբանության մեջ ստեղծելով տխուր ապրումներ և հոգեկան տանջանք: Հետագայում նրանք փորձեցին փնտրել և գտնել իրենց ողջ մնացած հարազատներին, կապ պահպանել նրանց հետ, միաժամանակ, որպես պարկեշտ կանայք՝ ընդունելով իրենց նոր կյանքը, ընտանիքը և զավակները: Մի հայ աղջիկ, որի հորն ու մորը սպանել էին թուրքերը, աքսորի ճամփաները քայլել էր իր երկու փոքր եղբայրների հետ: Հոգնած ու սպառված, եղբայրները ճամփին մահացել էին, իսկ ինքը միայնակ հասել էր Ռաս ուլ Այն և հուսահատ ամուսնացել Շամմա աշիրաթի շեյխի հետ: Նա ծնել է ինձ՝ դառնալով իմ ու իմ քույր, եղբայրների հոգատար և սիրելի մայրը» [Վկ. 305]:

Հետևաբար, ինչպես սիրիական անապատում, նույնպես և Թուրքիայի տարածքում, իրենց լեզուն կորցրած, իրենց անունները փոխած, նույնիսկ հավատափոխ եղած բազմաթիվ հայերի սերունդներ մինչև օրս գոյատևում են՝ հիշելով իրենց նախնիների ազգային ինքնությունը:

Այնպես որ, պատմական ցավալի այս իրողությունն անժխտելի փաստ է և ենթակա չէ որևէ կասկածի: Ուստի, ժամանակն է, որ ներկայիս Թուրքիայի Հանրապետության կառավարությունը ևս քաջություն ունենա ոչ միայն ճանաչել ինչպես գրավոր, նույնպես և բանավոր փաստերով հիմնավորված, ապացուցման կարիք չունեցող, պատմական այս բացահայտ ճշմարտությունը, այլև դատապարտի կատարվածը և հատուցի հայ ժողովրդի բարոյական, նյութական և տարածքային կորուստները՝ պատմական այն իրողության, որը կոչվում է **Հայոց ցեղասպանություն**:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Ծանոթագրություն

1. **Սվազլյան Վերժինե,** Մուսա լեռ, Երևան, 1984: Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, 1994: Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում, Երևան, 1997, 1999 (հայերեն, ռուսերեն, անգլերեն): Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000: Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը, Երևան, 2003-2005 (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, իսկ թուրքերենը՝ Ստամբուլում):

2. 1999թ. պատմական գիտությունների թեկնածու, դամասկոսաբնակ **Նորա Արիսյանը** հարցազրույց է ունեցել Սիրիայի արաբ բեդուին անապատականների հետ: Նա տեսաերիզը հանձնել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվին: Այս և հետագա չորս վկայությունները ես վերծանել և թարգմանաբար ներկայացնում եմ:

3. **Svazlian, Verjine.** The Armenian Genocide. Testimonies of the Eyewitness Survivors (ընթացքի մեջ է):

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՑ՝ ԺԱՆ ԺՈՐԵՍ

Արդեն գիտենք՝ ցեղասպանությունը՝ ըստ Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի, ուժի մեջ է մտել 1951-ի հունվարի 12-ից, այն կանխամտածված, ծրագրված հանցագործություն է, որ կատարվում է որևէ ազգի, ցեղային կամ կրոնական խմբի լիակատար, թե՝ կուզ, մասնակի ոչնչացման մտադրությամբ: Գիտենք նաև, որ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, ապա և Թուրքիայի հանրապետությունում, սկսվել է 1894-96 թվականներին, ավարտվել 1922-ին, 1915-ը սոսկ բարձրակետն է եղել: Մենք չգիտեինք՝ դատելով՝ «Հայկական սովետական», «Հայկական հարց» հանրագիտարաններից, հայ պատմաբանների, միջազգայնագետների հրապարակումներից, որ Եվրոպայի քաղաքական-հասարակական մի շարք գործիչներ՝ նվիրյալներ, դեռևս համիդյան ջարդերի օրերին են կանխազգացել հայ ժողովրդին սպառնացող ազգասպանության օրհասը, փորձել են կանխարգելել: Վկայությունը՝ փարիզյան «Միլ է ուն նուի» («Հազար ու մեկ գիշեր») հրատարակչության մոտ մեկ տարի առաջ լույս ընծայած **«Պետք է փրկել հայերին»**՝ ծավալով փոքր, բովանդակությամբ ու նշանակությամբ աննախադեպ գրքույկն է: Այն ամփոփում է **ժան ժորեսի** Ֆրանսիայի խորհրդարանում (խնդրում եմ ուշադրություն դարձնել տարեթվերին - Գ. Ջ.) 1896-ի նոյեմբերի 3-ի, 1897-ի փետրվարի 22-ի և մարտի 15-ի ելույթները, որոնք նախանցյալ դարավերջի պաշտոնական սղագրություններից առանձնացրել, ծանոթագրել, հրապարակել է **Վինսենթ Դյուկլերը**:

Ժան Ժորեսը հետո պիտի դառնար համաշխարհային հանրությանը հայտնի ընկերվար, հասարակական-քաղաքական գործիչ, հիմնադրեր «Յումանիտե» պարբերականը, սպանվելուց տասը տարի անց իր արժանի տեղը գտներ Փարիզի Պանթեոնում: 1896-ին նա Ֆրանսիայի Ազգային ժողովի 34-ամյա պատգամավորն էր, ընդամենը երեք տարի առաջ էր խորհրդարանական ընտրվել: Սակայն դա նրան չկաշկանդեց, որ համիդյան նախճիրների բոթն ստանալուն պես, հիմնավորապես ծանոթանա Օսմանյան կայսրությունում Ֆրանսիայի դեսպան Պոլ Գամբոնի վավերական ու ցնցող զեկուցագրերին, միջազգային մամուլի հրապարակումներին, և ինչպես արդեն նշեցինք, երեք անգամ հանդես գա ի պաշտպանություն հայ ժողովրդի ու նրա արդար դատի: Ժորեսն իր հրայրքոտ ելույթներով ոչ միայն դատապարտում է Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականությունը, այլև իր իսկ կառավարության, ապա նաև Մեծ Բրիտանիայի, ցարական Ռուսաստանի երկդիմի դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ: Ինչն էլ Աբդուլ Համիդին իր ծրագրած նախճիրներն իրագործելու անսահմանափակ, անկաշկանդ հնարավորություններ էր ընձեռնում:

Ժան Ժորեսը հայերի դատով սկսել էր հետաքրքրվել նախքան Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելը: Դեռևս 1895 թվականի հունվարի 27-ին, ջարդերի գույժը Եվրոպա հասնելուն պես, նա «Լա փըթիթ ռեփյուբլիք» պարբերաթերթում հրապարակում է «Հայաստանում» ծավալուն հոդվածը, որտեղ ահազանգում է, թե «Կարմիր սուլթանը»՝ Աբդուլ Համիդ 2-րդը, ինչպես է իր կանոնավոր զորաբանակներով ու քրդական ոճրախմբերով բնաջնջում հայերին: «Պետք է փրկել հայերին» գրքույկի նախաբանի հեղինակ

Վինսենթ Դյուկլերը հավելում է, որ Ժան Ժորեսը իր՝ Ֆրանսիայի քաղաքացու, ընկերվար գործչի խնդիրը սոսկ հայերի դատը արծարծելը չի համարում, հանդես է գալիս ի պաշտպանություն քաղաքակրթության գերագույն՝ մարդասիրության, արդարության, ճշմարտության սկզբունքների:

Ֆրանսիայի խորհրդարանի 1896-ի նոյեմբերի 3-ի նիստում Ժան Ժորեսի ձայն խնդրելը խորհրդարանականների համար անսպասելի էր: Հատկապես, երբ նա ամբիոն բարձրացավ ու սկսեց խոսել ոչ թե ներքին քաղաքականության հրատապ հիմնահարցերի, այլ հենց այդ պահին Հայկական բարձրավանդակում նախնադարյան դաժանությամբ խողխողվող «փոքր ու քաղաքակիրթ» մի ամբողջ ժողովրդի ճակատագրի մասին: Օսմանյան կայսրությանը, անձամբ իրեն՝ Աբդուլ Համիդ 2-ին, դատապարտում էր ինչպես հայկական նախճիրների, այնպես էլ իրականությունը խեղաթյուրելու, Եվրոպայի հասարակայնությանը մոլորեցնելու հանցագործութուններում: Ասածը հիմնավորելու համար Ժորեսը միայն մի օրինակ է բերում. Ֆրանսիայի հյուպատոսի հավաստի վկայությամբ համիդյան ոճրագործները ձերբակալում են մի անմեղ հայի, շաղափում են գլուխը, մեջը ձյութով լցված, ծանրացած ու կոշտացած-կոպտացած ընկույզի, թե կաղնու կեղև խցկում ու ամեն անգամ, երբ խեղճը մի պահ սթափվում է հերթական ուշագնացությունից, չարախնդում են՝ «Հիմա համախոսական կստորագրե՞ս, որ դուք ու քո հայրենակիցներն եք սանձազերծել կոտորածները»: Համիդյան հայատյացությունը մերկացնելուց հետո, Ժորեսն անդրադառնում է, Եվրոպայի՝ հատկապես Ֆրանսիայի պատասխանատվությանը, իր կառավարությանը՝ նյութական շահագրգռվածությամբ առաջնորդվելու, հայկական կոտորածներին պետականորեն չմիջամտելու, կանխելու փորձ չանելու համար այնպիսի անողոքությամբ է քննադատում, որ նիստի նախագահը ստիպված է լինում նրան ընդհատել ու կարգի հրավիրել:

Ընկերվար պատգամավորը ուղիղ ժամ ու կես խոսեց: Նրա ելույթը բազմիցս համախոհների կողմից բուռն ու երկարատև ծափահարություններով, հակառակորդների կողմից՝ սուլոցներով ու հիշոցներով ընդհատվեց ու ի վերջո այնպիսի ցնցող տպավորություն թողեց, որ Մարսել Պրուստի նման խոշորագույն արձակագիրը, որն այդ տարիներին գրում էր «Ժան Սանեոյ» վեպը, Ժորեսին իր ամենատպավորիչ կերպարներից մեկի՝ խորհրդարանական Գուզոնի նախատիպը դարձրեց: Գրքի գլխավոր հերոսը՝ Ժան Սանեոյը, այսպես է նկարագրում Ժորեսի պատմական համարվող ելույթը. «Հենց նոր ավարտվել է հայկական կոտորածների հարցի քննարկումը, ակնհայտ է դարձել, որ Ֆրանսիան ձեռնպահ է մնալու, ոչինչ չի անելու: Հանկարծ ձախ ծայրահեղականների նստատեղից սովորականից փարթամ, մոտ երեսուն տարեկան, սև, գանգուր մազերով մեկը, ում, եթե մոտիկից զննեիք, կզգայիք, որ անբացատրելի խռովքով է համակված և դժվարությամբ է ենթարկվում ներքին ձայնին, մի պահ տարուբերվում է նստարանին, հետո ինքնաբերաբար ձեռքը բարձրացնելով, ասես ընդվզելով այն ընդունված կարգի դեմ, որն անխուսափելի է ձայն խնդրելու համար, ինքնավստահ քայլերով, միաժամանակ սահմռկելով ստանձնած պատասխանատվությունից, մոտենում է ամբիոնին... Նայելով նրա փութկոտ շտապողականությանը՝ ժանին թվում է, թե մարդկային մարմինը երբեք այդքան արժանապատվություն, մեծահոգություն չի արտահայտել»:

Ելույթն ավարտելուց հետո Ժան Ժորեսը հետևյալ բանաձևը քվեարկության ներկայացրեց. «Ֆրանսիայի Ազգային ժողովը, նկատի ունենալով Եվրոպայի պատասխանատվությունը Հայաստանի զարհուրելի կոտորածների հանդեպ, ցավելով այն նախանձախնդրությունների, նախապաշարումների, հետադիմական նկատառումների համար, որոնք թույլ չտվեցին ժամանակակից Եվրոպային միասնական քայլերի դիմել ի պաշտպանություն Արևելքի բռնաճնշվող ազգերի ու ազգությունների, հույս է հայտնում, որ աշխարհի բոլոր ժողովուրդները կմիավորվեն՝ անկողմնակալ ու անշահախնդիր հասարակական կարծիք ստեղծելու՝ հասնելու համար այն բանին, որ գերիզոր տերությունները հայերի անվտանգությունը երաշխավորեն, Թուրքիայի՝ բոլոր կրոնների ու ցեղերի ազգաբնակչությանն ապահովեն ազատության, բարեկեցության ու զարգացման առաջընթացի համընդհանուր դրույթներով»:

Քվեարկությանը մասնակցեցին նիստին ներկա 497 պատգամավորներ, որոնցից 444-ը դեմ և միայն 53-ը կողմ քվեարկեց: Պիտի ավելի քան մեկ դար՝ 108 տարի անցներ, որպեսզի Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ընդուներ հայերի ցեղասպանությունը և նույնիսկ այն դատապարտող օրենք սահմաներ:

Առաջին ձախողությունը չհուսահատեցրեց հանդուգն ու աննկուն քաղաքական գործչին: Նրա հաջորդ՝ 1897-ի փետրվարի 22-ի և մարտի 15-ի ելույթները ավելի խիստ ու անողոք էին, Ժորեսը կատարված ողբերգության՝ 200 000 (իր հիշատակած թիվն է) անմեղ հայերի սպանդի համար ուղղակի մեղադրում էր Եվրոպայի այն կառավարություններին, քաղաքական ու հասարակական գործիչներին, որոնք 1894-96 թվականների կոտորածի քստմնելի մանրամասներին հասու եղել ու մեղսակից լռություն էին պահպանել, փաստորեն, դարձել էին սուլթանի հովանավորներն ու համախոհները. «Երբ Սուլթանը տեսավ, որ երեք տարի շարունակ Եվրոպայի հանցավոր նիրհի պատճառով կարողացավ իրագործել այն նախճիրները, որոնք մարդկության վերջին մի քանի հարյուրամյակների պատմության մեջ թերևս իրենց նախադեպը չունեին, երբ տեսավ, որ Եվրոպան ուշացած զարթնելուց, առաջին ցնցումից հետո, փոխանակ շրջվելու զոհերի կողմը, նրանց վերքերը բուժելու փորձ անելու **(աղմուկ դահլիճի կենտրոնում),** բռնաճնշված ժողովուրդներին անկախություն ձեռք բերելուն օգնելու, առաջնային քայլը, քաղաքական խնդիրն է համարում սուլթանական շահերին ծառայելը, համոզվում է, որ Եվրոպան իր ձեռքերում է, կարող է, ցանկացածի պես վարվել հետը **(ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում)»**:

Հայերի դատի հետևողական պաշտպանությունը Ժան Ժորեսի համար սոսկ խորհրդարանական պարտականություն չէր: Նա թուրքական կոտորածները իրեն հատուկ հռետորական հրայրքով դատապարտեց 1903-ի փետրվարի 15-ին Փարիզում կայացած հանրահավաքում, իսկ Ադանայի դեպքերից հետո, 1909 ապրիլի 4-ին իր խմբագրած «Յումանիտեում» առաջիններից մեկը լինելով փաստեց, որ երիտթուրքերը էությամբ նույն հետադեմներն են և սուլթանական մոլագարությամբ ու դաժանությամբ շարունակում են հայերի զանգվածային սպանդը:

Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքը հետզհետե ծանրանում էր մարդկության վրա: Ժորեսը կանխազգում էր այդ հակամարտության աղետալի հետևանքները, խաղաղասիրական ցույցեր ու հանրահավաքներ էր կազմակերպում: Աշխարհամարտը սանձազերծվելուց մեկերկու օր առաջ՝ 1914-ի հուլիսի 31-ին, նա մարդասպանի ձեռքով սպանվեց Փարիզում, Մոնմարտրի խաղաղ «Քրուասան» սրճարանում:

Ժորեսի խորհրդարանական (և ոչ միայն) ելույթները 112 տարի անց էլ, ցավոք, չեն կորցրել իրենց այժմեականությունը, որովհետև թուրքական իրար հաջորդող կառավարությունները շարունակում են ցեղասպանությունն իրենց հանցավոր լռությամբ ու ուրացմամբ: Բարեբախտաբար, մենք այլևս մենակ չենք: Այժմ արդեն հայերի ցեղասպանությունը դատապարտում են ոչ միայն առանձին մարդասերներ, քաղաքական ու հասարակական գործիչներ, այլև քաղաքակիրթ պետություններ, որոնց թիվը հետզհետե մեծանում է:

Ուրեմն՝ հատուցումը հեռու չէ:

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆ

Ա Ր Տ Ա Գ Ե Ր Ա

Շաբաթ առաւօտեան 10-12 հոգի կազմ ու պատրաստ ենք: Ժամը 5-ն է: Պէտք է ետ երթանք Կաղզուան, Ֆարիադը գտնենք, Արտագերս բարձրանանք ու ժամը 10-ին ալ վերադարձած ըլլանք Կարս: Ինչքան դյուրին է ծրագրելը: Ահա Կաղզուան ենք. մեր առաջնորդը կ'առնենք ու կը սուրանք դէպի Գերս գիւղը: Ճամբան այնքան ալ ողորկ չէ: Մեր երեք վարորդներէն Նիէլը յանկարծ կանգ կ'առնէ: Ալ չի կրնար ճամբան շարունակել: Ճամբայ ըսուածն ալ առուներու մէջէն քարերով տեղ մըն է: Կը ստիպուինք իջնել, մեր ինքնաշարժէն ու ճամբան շարունակել քալելով: Ֆարիադը իրապես հետաքրքրական տղայ է, կը ծանօթացնէ ուրիշ քիւրտի մը, կ'ըսէ, որ իր պապերը եկած են հաւանաբար Մշոյ գիւղերէն, հարուստ է, շատ անգամ Պոլիս եղած է 25 տարեկան է՝ զինուորութիւն չէ ըրած: Եւ որոշած ալ է, որ պիտի չընէ: Թուրքիոյ մէջ ասանկ բան կ'ըլլա՞յ: Կ'ըլլայ եղեր: Կ'առաջարկեմ, որ երգէ «Պուրասը Մուշ տըր... Կիտէն կելմիյէզ» երգը: Չէ, կ'ըսէ, ատիկա թուրքին հաճելի երգ է, չեմ երգեր: Կը նախընտրէ երգել քիւրտերէն երգեր: Ֆահրադը, ինք, «Չալմատան օյնար» ալ է: Մեր տղոց հետ մշակութային բաղդատութիւններ կ'ընէ. հայ-քիւրտ եղբայրութեան, Հայաստանի րատիոյի հաղորդումներուն մասին կը խօսի, ես ինչ գիտնամ: Տօքթ. Հրանդին հետ ալ յանկարծ կ'երգէ «Հօյ նարէ, նարէ» երգը: Յետոյ մէյ մը Ղըրը կը պարէ, մէյ մը Եարխուշտա, մէյ մը Հօյ նարէ, մէյ մը Չաչանէ:

Ես չեմ կրնար շարունակել վերելքը: Կը խնդրեմ ընկերներէս, որ զիս թողուն այստեղ եւ իրենք բարձրանան Արտագերս: Արտագերս: Հայոց պատմութենէն գիտէնք, Րաֆֆիի եւ Ստեփան Զօրեանի վէպերէն: Բայց մոռցեր էինք, ու այս ճամբորդութեան առթիւ էր, որ «վերագտանք» Արտագերսը եւ ուզեցինք տեսնել: Արտագերսը մեզի համար կը խորհրդանշէր Արշակեան վէպի մէկ հերոսապատումը: Արշակ Բ Անյուշ բերդին մէջ էր, բայց իր գեղանի եւ քաջարի տիկինը՝ Փառանձեմ 13 ամիս այս բերդին տէր եղաւ, իր պատիւը, իր թագաւորին պատիւը, Հայոց գահը փրկեց, եւ միայն դաւաճանութեան պատճառաւ իջաւ բերդէն եւ Շապուհ Բ-ի կողմէ սպաննուեցաւ Պարսկաստանի մէջ:

Լերան կողքին ընկողմանած՝ մեր պատմութեան վերաքաղը կ'ընեմ: Բերդէն բան չէ մնացած: Հազիւ քանի մը քար ու պատի հետքեր: Արդէն բերդը, ինք, բնական կառոյց էր՝ երեք կողմէ հսկայ ժայռեր. միայն մէկ կողմի վրայ պարիսպներ կառուցեր էին: Քարայրներ կային՝ եւ ջուրի հետքեր: Ուրիշ ոչինչ: Կարեւորն այն էր, որ գացինք, տեսանք, եւ ստուգեցինք, որ Արտագերսը կայ. ու շուրջը մի քանի յիշատակ մնացած պիտի ըլլայ:

Կը վերադառնանք Կարս, Չարենցի տան մօտէն կ'անցնինք, եւ առանց մնաս բարով ըսելու մեր վերադարձի ճամբան կը բռնենք: Ախալքալաք, Ջաւախք, Ախալցխա: Վրաստանի սահման: Այս բոլորը՝ ուրիշ պատմութիւն, ուրիշ ցաւ: Ժամանակը կուգայ, կը խօսինք: Շաբաթ ուշ գիշերին կ'իջեւանինք Աշոտենց տանը: Արդէն իսկ հարազատներ են, եւ հայ տուն է: Տասը օր շարունակ տագնապի, տառապանքի, հայութեան վշտի մէջն էինք: Հիմա՝ հայ տան մէջն ենք, հայ մօր, հայ քրոջ խնամքոտ հայեացքին եւ, բարի նայուածքին հետ միասին: Յաջորդ օր, կիրակի Վրաստանի հայերուն համար Աստուածածնայ տօնն է, քանի անոնք ալ, ռուսներու նման, հին Յուլեան օրացոյցը կը գործածեն: Ախալքալաքի հայոց Սբ. Խաչ եկեղեցին կ'երթանք, ու Պատարագի վերջաւորութեան մեզի ալ կը հասնի օրհնուած խաղողէն: Կ'օրհնեմ, կը բաժնեմ, այս խաղողին մէջէն ալ խորհուրդ կը փնտրեմ, եւ իմ հրաժեշտի խօսքս կ'ուղղեմ ընկերներուս: Կեանքի, պատմութեան եւ արեան ընկերներ են: Ու վստահ եմ որ վաղը Հայաստան ըլլանք, Գանատա թէ Ամերիկա՝ միշտ պիտի փնտրենք զիրար, իրարմով մեր յիշողութիւններուն մէջ պտտինք: Հրաժեշտի խոսքիս մէջ կը ըսեմ. «Անցեալ օր, ճամբուն վրայ մեր վարորդը, Սաշան, քաջութեան, վստահութեան եւ յանդգնութեան փառաւոր օրինակ տուաւ: Վտանգաւոր դարձուածք մը կար. մեր դիմաց յանկարծ ծառս եկաւ հսկայ բեռնատար մը, բայց Սաշան փրկեց մեզ: Ու հարցուցի Սաշային. «Սաշա, Ղարաբաղի մէջ կռուա՞ծ ես»:

Ասանկ տղայ մը անպայման Ղարաբաղ գացած պէտք էր ըլլար, մահուան աչքերուն մէջ նայած ըլլար: Չէ, չէր գացած: Բայց պատմեց, թէ ինչու: Իր երկու եղբայրները գացեր էին, կռուեր, եւ 19-20 տարեկան հասակին նահատակուեր էին: Իր եղբայրներէն Իգըրը զոհուեր էր Շուշիի ազատագրման օրը 8 Մայիս 1992թ: Իգըրը Ստեփանակերտի համալսարանը կ'երթար, պատմութիւն կ'ընէր, երկրորդ քուրսի աշակերտ էր: Իր մահէն յետոյ ընկերները Իգըրի գրասեղանը խորանի պէս պահեր էին, գիրք, մատիտ, տետրակ՝ ամէն բան իր տեղը թողեր էին, ու երկու տարի յետոյ՝ համալսարանի տեսչութիւնը յետ մահու վկայական տուեր էր Իգըրին: Իգըրը չէր մեռած: Իգըրը հայոց պատմութեան ուսանող էր: Ու փղձկեցայ, դառնապէս լացի: Չեմ հասկնար ինչո՞ւ, բայց այս պատմութեան մէջէն տեսայ, որ յոյսը չի մեռնիր, քաջութիւնը չի մեռնիր, եւ քանի դեռ, Իգըրներ կը ծնի, «այս ազգը չէ մեռած, այլ կ'ապրի»: Ու կը պոռթկամ: Արցունքներս աչքերէս կը հոսին, կուլամ, կը դողամ: Ինչո՞ւ չեմ գիտեր: Տասնօրեայ ամբողջ ուղեւորութեանս ընթացքին այդքան չէի լացած: Շատեր կը զարմանան, թէ ի՞նչ կար այդ դրուագին մէջ, որ այդքան լացուց զիս: Յետոյ պիտի վերլուծէի պահը, եւ զգայի՝ որ այդ Իգըրը, ղարաբաղցի հերոս պատանին, ըսեմ, անոնցմէ էր, որ իրենց կեանքը տուին, եւ Արցախի ազատագրութեամբ մեզի՝ յատկապէս սփիւռքահայերուս, վերադարձուցին հայ ըլլաու հպարտութիւնը, եւ դարձուցին ժամանակակիցները հայոց յաղթանակի այդ փառաւոր դրուագին: Մենք ալ պէտք չունինք նախանձելու 1918թ. սերունդին, մեզի անկախութիւն տուած սերունդին: Վաղը, 50-100 տարիներ յետոյ՝ մեր յետնորդները պիտի ըսեն՝ երանի 1992 սերունդին: Եւ ասիկա՝ շնորհիւ ինծի անծանօթ Իգըրին: Աստուած լուսաւորէ հոգիդ, անծանօթ եղբայր:

Մեր հրաժեշտի հաւաքոյթը իր աւարտին հասաւ, եւ խումբը ցրուեցաւ: 28 Օգոստոսին, անցանք վրացական սահմանը: Բոգդանովկայի վրացական սահմանը պաշտպանող հայ զինվորը մեր հարցումին պատասխանեց՝ Խանդո գիւղէն: «Չէ, չէ, ձեր պապերը որտեղի՞ց են», պնդեց Աշոտը: Պատասխանեց՝ Խաչկավանքից:

Էրզրումի Խաչկավանքը: Մենք չէինք տեսած: Այդ զինուորն ալ չէ տեսած: Բայց կը յիշէր, գիտէր, իր հողն է, իր հայրերու հողը: Ու հանդարտօրէն ես սկսայ մրմնջել իմ ամենէն շատ սիրած գրողներէն Մուշեղ Գալշոյեանի խօսքերը. «Երկրի ու հողի կորուստ ծանր կորուստ է, բայց հողն անմահ է, հող ուրիշ տէր չի ընդունի: Հող տիրոջ արնակիցն է ու իր արնակցին կը սպասէ, կը սպասէ ու օրերից մի օր կը հանդիպին: Հողի կորուստ անդարձ կորուստ չէ: Հողն անմահ է»:

Արիւնովս կ'երդնում, որ շիտակ է Մուշեղ Գալշոյեանը: Իմ սրտէս, իմ հաւատքի բաժակէն է որ բաշխեր է այդ տողերը:

Մեսրոպ արք. Աշճյանի հուշերը տպագրության պատրաստեց ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Պարիս Հերունի՝ գիտնական, որ աշխատեց Հանուն Հայրենիքի:

ԴԱՐԸ

Դարն այս, ուր ամեն ինչ գիտակցված է, օ՜, խիստ,
Եվ ընթանում է միշտ ո՛չ ակամա,
Ուր գոյության համար չկա միջին ուղի,
Ուր միմիայն պետք է ընտրել կամ ա՛յս՝ կամ այն,-
Դարն այս և ի՛մ մեջ է, և քո՛ մեջ է - մե՛ր մեջ.
Նրա ծնունդն ենք մենք, նրա արյունն ենք թանկ,
Եվ չենք կարող երբեք մեր հոգու մեջ մեղմել
Ա՛յն, ինչ ժառանգել ենք մենք սրբությամբ:
Թեթևության համար դարը մեզ չի ներում,
Ինչպես որ չենք ներում ինքներս մեզ.-
Սո՛ւր է դրված հարցը լինել - չլինելու…
Մենք, որ լինելու ենք՝ լինենք ծա՛նր և մե՛ծ:
…

Պարույր Սևակ



Գեղանկարները՝ Պարիս Հերունու, «Վահագն աստծո ծնունդը», «Ավանդական հայկական ընտանիքի արծաթե գոտի», «Մայրամուտն Արագած լեռան վրա»:

Գանձասարի մուտքը